

**ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2022 Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ 2023

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ	5
ՀԱԱՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ	11
ՀԱԱՀ Ա. ՔՈՉԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ.....	12
ՀԱԱՀ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ	13
ՎԱՆԱՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	13
«ՇԻՐԱԿԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Մ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	14
ՄԻՍԻԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	16
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ.....	17
ԿԱՐԻԵՐԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	20
ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ.....	23
ԱՅԳԵՊՏՂՏՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (ՖՐՈՒՏԵՆԻԱ)	23
ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՃԱՄԲԱՐ (ԱԳՐԻ ՔԵՄՓ).....	25
ԱՄՆ ՄԶԳ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՇԽԱՏՈՒԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ (ARMENIAN WORKFORCE DEVELOPMENT ACTIVITY).....	26
«ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀՁՈՐԱՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՄԱՍՆԱԿՅԱՅԻՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏԵԼԻՔԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ ՀԱՆՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ» (SOAA)	27
ԳՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ	27
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՓՈՔՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ՝ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՈՎ ՀԱԳԵՅԱԾ ԽԵԼԱՅԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԵՎ ՀԱԱՀ-Ի ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՁՈՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ	28
«ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԵՎ ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ՀԱՄԱՏԵՂ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ.....	29
ՍԵՐՄԵՐԻ ԵՎ ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՒ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ	29
ՀԱԱՀ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ.....	30
ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ	32
ԲԱԼԱՀՈՎԻՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	32
ՈՍԿԵՀԱՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՆՈՒ ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	33
ԱԿՈՒՆՔ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ.....	34
ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՅՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ.....	34
ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	37
ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	71
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	72

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	78
ՄԱՐԴԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	79
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ	82
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՀԱՍԱԼՍԱՐԱՆՈՒՄ	82

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի տարեգրության մեջ 2022 թ.-ը հերթական առաջընթացի տարի էր գործունեության բոլոր հիմնական ուղղություններով՝ կրթության որակի բարձրացման, գիտական գործունեության կիրառական արդյունքների ավելացման, գյուղատնտեսության եւ հարակից ոլորտներում գիտասփյուռ-խորհրդատվական, փորձագիտական ներուժի հզորացման: Համալսարանի ամբողջ համակարգում, ներառյալ կրթական եւ գիտահետազոտական մասնաճյուղերում եւ կենտրոններում, գործարկվել են բազմաթիվ նոր ենթակառուցյուններ:

Հայաստանում եւ արտերկրում շարունակվել է համալսարանի դասախոսների եւ մասնագետների վերապատրաստումների գործընթացը: Հաջողությամբ շարունակվել է ՀԱԱՀ դասախոսների՝ արտերկրում դասավանդման ծրագրերին մասնակցությունը: Շահառուների բազմազան խմբերի համար կազմակերպված վերապատրաստման կարճաժամկետ ծրագրերի միջոցով հարյուրավոր նոր աշխատատեղեր են ստեղծվել գյուղատնտեսության, վերամշակման եւ այլ ոլորտների համար: Զուգահեռաբար 2022-ը նշանավորվել է Հայաստանի բուհական համակարգում առաջին անգամ եւ մեծ հաջողությամբ աշխատանքային կիսամյակի նորարարական գաղափարի իրագործմամբ: Դա հնարավոր դարձավ շնորհիվ համախոհ առաջադեմ բազմաթիվ ընկերությունների հետ խիստ արդյունավետ համագործակցության: Այս առումով Ագրոնոմիական ֆակուլտետի աննախադեպ հաջողված փորձը համարժեք շարունակություն ունեցավ մյուս ֆակուլտետներում՝ այսպիսով երկրում սկզբնավորելով արտադրության ոլորտի հետ գործընկերային միանգամայն նոր մշակույթ:

Տարվա համար բնութագրական էր ավագ դպրոցների աշակերտների մասնագիտական կողմնորոշման այցելությունների թվի եւ նպատակայնության աճը: Համալսարանի ղեկավարության առաջարկով ԿԳՄՍ նախարարությունը թույլատրել է դպրոցներում ներդնել «Ագրոտեխնոլոգիաներ» դասընթացը: 2023 թ.-ին երկու մարզերի մի քանի դպրոցներում կբացվեն առաջին փորձնական ագրոդասարանները, եւ այս փորձը ընդլայնվելու միտում կունենա: Այս նախաձեռնությունը ուղղակիորեն կնպաստի դիմորդների քանակի աճին եւ համալսարանի ընդունելության ցուցանիշների բարելավմանը:

Տարվա ընթացքում շինարարական կամ վերակառուցողական վերջին փուլ են հասել եւս մեկուկես տասնյակ նորարարական ենթակառուցյուններ, որոնք վերջնականապես շարք կմտնեն թե մայր բուհում եւ թե մասնաճյուղերում:

2022-ը կարելի էր հանգրվան էր ագրոտեխնոլոգիական կրթության եւ գիտության գերազանցության կենտրոն դառնալու ռազմավարական նպատակի իրականացման ճանապարհին: Արձանագրված առաջընթացը թույլ է տալիս վստահ լինել, որ 2023 թ.-ը լինելու է գործընթացը ավարտական փուլին մոտեցնելու տարի:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

2022 թ.-ին համալսարանում ուսումնական գործընթացը կազմակերպվել է ըստ ամբիոնների կողմից ներկայացված եւ գործող ուսումնական պլաններով ճշգրտված ծանրաբեռնվածությունների, սահմանված ժամկետների՝ առարկայական ծրագրերի բովանդակությանը եւ օրացուցային պլաններին համապատասխան:

Հաշվետու տարում բակալավրիատի կրթական ծրագրի առկա եւ հեռակա ուսուցման ձեւի առաջին եւ երկրորդ կուրսերի բոլոր քննություններն իրականացվել են գնահատման եւ թեստավորման բարեկարգ ու տեխնիկապես հագեցած կենտրոնում:

2022-2023 ուստարում համալսարան ընդունված ուսանողների համար գիտելիքի գնահատման նվազագույն անցողիկ շեմը բարձրացվել է՝ 40-ից հասցնելով 50 միավորի:

Աշխատաշուկայի պահանջները հաշվի առնելով, իրականացվել է ուսումնական պլանների արդիականացում:

2022-2023 ուստարվա առկա ուսուցմամբ բակալավրիատի, անընդհատ եւ ինտեգրված կրթական ծրագրերով ընդունելությունն իրականացվել է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից սահմանված տեղերի, քննությունների եւ ուսման վարձավճարների չափի՝ նախատեսված ժամկետներում:

2022-2023 ուստարվա առկա ուսուցմամբ բակալավրիատի, անընդհատ եւ ինտեգրված կրթական ծրագրերով 1-ին եւ 2-րդ փուլերով միասին ՀԱԱՀ է դիմել 192 դիմորդ: Բուհերի ընդունելության հիմնական մրցույթից հետո ընդունվել է 38 ուսանող (22-ը՝ անվճար եւ 16-ը՝ վճարովի):


ՀԱԱՀ դիմորդների ճնշող մեծամասնությունը՝ ավելի քան 80 տոկոսը, չի կարողացել հաղթահարել միասնական կարգով անցկացված ընդունելության երկու քննությունից առնվազն մեկի անցողիկ շեմը, որը մի կողմից ազդարարում է, որ ՀԱԱՀ ընդունվելու համար մինչեւ հիմա պատկերացրածից շատ ավելի պատրաստվածություն է պահանջվում, իսկ մյուս կողմից հուշում, որ ՀՀ-ում բուհերի ընդունելության միասնական քննությունների կարգերը ավելի ճկուն դարձնելու, ինչպես նաեւ հանրակրթական ծրագրերի որակի բարձրացման, դպրոցներում մասնագիտական կողմնորոշման ինտենսիվ աշխատանքների անհրաժեշտություն կա:

2022-2023 ուստարում, բուհերի ընդունելության լրացուցիչ մրցույթից հետո, ՀԱԱՀ առկա ուսուցման համակարգ ընդունվել է եւս 3 ուսանող, որոնցից մեկը՝ սփյուռքահայ, այսպիսով ՀԱԱՀ բակալավրիատի առկա ուսուցման համակարգ ընդունվածների ընդհանուր թիվը հասցնելով 41-ի:

2022-2023 ուստարում ՀԱԱՀ բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգի դիմորդների թիվը եղել է 339, որոնցից ընդունվել է 207-ը:

2022-2023 ուստարում մագիստրոսի կրթական ծրագրերով առկա ուսուցմամբ համալսարան է ընդունվել 125, իսկ հեռակա ուսուցմամբ՝ 15 մագիստրանտ, որոնցից համապատասխանաբար 14-ը եւ 8-ը՝ ոչ ՀԱԱՀ շրջանավարտներ են:

Գծապատկեր 1-ում ներկայացված են 2021-2022 եւ 2022-2023 ուստարվա առկա բակալավրիատի ընդունելության արդյունքներն՝ ըստ ֆակուլտետների:



Գծապատկեր 1. 2022-2023 ուստարվա ՀԱԱՀ առկա բակալավրիատի ընդունելության արդյունքներն ըստ ֆակուլտետների, մարդ

2022-2023 ուստարվա ընդունելության արդյունքներն ըստ կրթական ծրագրերի.

1. Ագրոբիզնես եւ ֆինանսներ՝ 23 ուսանող (≈ 56 տոկոս)
2. Ագրոպարենային համակարգի էկոնոմիկա՝ 8 ուսանող (≈ 20 տոկոս)
3. Խմորման արտադրության տեխնոլոգիա եւ գինեգործություն՝ 1 ուսանող (≈ 2 տոկոս)
4. Պարենամթերքի տեխնոլոգիա՝ 2 ուսանող (≈ 5 տոկոս)
5. Բույսերի պաշտպանություն՝ 2 ուսանող (≈ 5 տոկոս)
6. Զերմատնային ագրոտեխնոլոգիա՝ 1 ուսանող (≈ 2 տոկոս)
7. Անասնաբուժություն՝ 4 ուսանող (≈ 10 տոկոս)


Ընդհանուր առմամբ, 2022-2023 ուստարում բոլոր մակարդակների մասնագիտական կրթական ծրագրերով ՀԱԱՀ ընդունվել է 940 ուսանող:

ՀԱԱՀ-ի եւ մասնաճյուղերի տարբեր կրթական ծրագրերով ուսումնառողների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 1-ում (բերված է նաեւ համեմատական տեղեկատվություն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի, ինչպես նաեւ տեղափոխությունների, հեռացումների, ազատումների եւ վերականգնումների վերաբերյալ):

ՀԱԱՀ տարբեր կրթական ծրագրերով ուսումնառողների թվաքանակի շարժը
31.12.2021-31.12.2022


Ուսուցման ձեւը	Ուսումնառողների թվաքանակը առ 31.12.2021թ.		Ընդունելություն	Վերականգնում	Տեղափոխություն				Շրջանակադուր	Հեռացում (ազատում)	Ուսումնառողների թվաքանակը առ 31.12.2022թ.	
	ընդամենը ուսանող	ուսումը ընդարձակում			այլ ինքնուսուցանողությունից	այլ ինքնուսուցանողությունից	այլ ինքնուսուցանողությունից	Շրջանակադուր			ընդամենը ուսանող	ուսումը ընդարձակում
Առկա ուսուցում	1064	142	41	17	11	26	0	65	273	111	710	67
Մագիստրատուրա	250	22	140	1	0	0	0	0	151	49	191	14
Ասպիրանտուրա	27	0	9	0	0	0	0	0	2	7	27	0
Քոչինյանի անվան գյուղ. քոլեջ	689	30	250	19	0	0	0	0	147	87	724	17
Շիրակի գյուղատնտեսական քոլեջ	178	9	35	2	2	0	0	0	45	25	147	11
Սիսիանի մասնաճյուղ	163	2	18	3	1	0	0	0	33	17	135	3
Սիսիանի մասնաճյուղ քոլեջ	94	0	60	0	0	0	1	0	9	7	137	3
Վանաձորի մասնաճյուղ	287	7	33	5	4	0	2	0	52	28	247	10
Վանաձորի մասնաճյուղ քոլեջ	15	0	21	0	0	0	0	0	0	4	32	0
Վարժարան	285	0	135	0	23	0	39	0	140	0	264	0
Հեռակա ուսուցման դեպարտամենտ	2957	173	207	136	138	58	2	23	339	692	2440	155
Ընդամենը ՀԱԱՀ	6009	385	949	183	179	84	44	88	1191	1027	5054	280

Հաշվետու ժամանակահատվածում ուսանողների գիտելիքների ստուգումն իրականացվել է սահմանված ժամկետներում, միջանկյալ քննությունները, ստուգարքները, ամփոփիչ քննությունները, անհատական աշխատանքների հանձնումը, դիպլոմային նախագծերի ու աշխատանքների պաշտպանությունները կազմակերպվել են նախատեսված ժամկետներում եւ պահանջվող ձեւաչափերով: Գծապատկերում ներկայացված են միջին գնահատականներն ըստ կիսամյակների եւ ֆակուլտետների:



Գծապատկեր 2. 2021-2022 ուստարվա ուսանողների առաջադիմությունն ըստ ֆակուլտետների, միջին բալ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանում, բացի ՀՀ քաղաքացիներից, ուսումնառում են նաև սփյուռքահայ ուսանողներ:



Գծապատկեր 3. 2022-2023 ուստարում սփյուռքահայ ուսանողների թիվը, մարդ

Հաշվետու ժամանակահատվածում բուհի միջոցների հաշվին իրականացվել են ուսման վարձավճարների 20-100 տոկոս զեղչեր՝ հետևյալ կատեգորիաներով.

1. Ապրիլյան պատերազմի ժամանակ մարտական գործողությունների մասնակից,
2. Ապրիլյան պատերազմի ժամանակ մարտական հերթապահություն իրականացրած,
3. Մարտական հերթապահություն իրականացրած,
4. Մինչև մեկ տարեկան երեխա ունեցող,
5. 23 տարին չլրացած միակողմանի ծնողագուրկ,
6. Սոց. անապահովության միավորից բարձր միավոր ունեցող,
7. Սոց. անապահովության միավորից ցածր միավոր ունեցող,
8. Բարձր առաջադիմություն ունեցող,
9. Երեք եւ ավելի անչափահաս երեխա, ինչպես նաև ընտանիքում երեք եւ ավելի ուսանող ունեցողներ,
10. Հաշմանդամ ծնող ունեցող,
11. Զինվորական հաշմանդամ ծնող ունեցող,
12. ԲՈՒՀ-ի աշխատող հայցորդ:

2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակում համալսարանի միջոցների հաշվին զեղչվել է բուհի եւ մասնաճյուղերի 151 ուսանողի, 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակում՝ 48 ուսանողի վարձավճար: 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակում պետության կողմից զեղչվել է բուհի եւ մասնաճյուղերի 56 ուսանողի վարձավճարը:

2022-2023 ուստարվանից սկսած ուսման վարձավճարի զեղչի տրամադրման համար նվազագույն շեմ սահմանվել է 75 ՄՈԳ-ը, իսկ ակադեմիական բարձր առաջադիմության հիման վրա ուսման վարձավճարի զեղչ տրամադրելիս, նվազագույն շեմ սահմանվել է 80 ՄՈԳ-ը:

Հաշվետու տարում մեթոդական խորհրդի կողմից երաշխավորվել է հրատարակման ՀԱԱՀ ֆակուլտետների մեթոդական հանձնաժողովների կողմից ներկայացված 35 գրականություն՝ 1 դասագիրք, 15 մեթոդական ցուցում, 6 ուսումնամեթոդական ձեռնարկ, 2 ուղեցույց, 1 մեթոդական ձեռնարկ, 2 ուսումնական ձեռնարկ, 1 ուսումնական պլան, 1 կանոնակարգ, 1 ուսումնամեթոդական ուղեցույց, 5 առարկայական ծրագիր:

Հաշվետու տարում դիպլոմներ են շնորհվել ՀԱԱՀ 910 շրջանավարտի. Բակալավրիատի (առկա եւ հեռակա) 612 շրջանավարտներից 11-ը, մագիստրատուրայի 151 շրջանավարտներից 47-ը եւ Ա. Ե. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի 147 շրջանավարտներից 11-ը ստացել են գերազանցության դիպլոմ:

Հաշվետու տարում համալսարանում կատարվել են հետեւյալ կառուցվածքային փոփոխությունները.

1. Լուծարվել է ՀԱԱՀ Հեռակա ուսուցման դեպարտամենտը եւ համապատասխան մասնագիտությունների ուսանողները տեղափոխվել են համալսարանի ֆակուլտետներ:

2. Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի Կիրառական մեխանիկայի եւ գրաֆիկայի եւ Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի Բարձրագույն մաթեմատիկայի եւ ֆիզիկայի ամբիոնները միավորելով ձեւավորվել է Բարձրագույն մաթեմատիկայի, ֆիզիկայի եւ կիրառական մեխանիկայի ամբիոն՝ Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի կազմում:

3. Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի Ընդհանուր քիմիայի եւ Ագրոնոմիական ֆակուլտետի Կենսաբանության եւ կենսատեխնոլոգիաների ամբիոնները միավորելով ձեւավորվել է Կենսագիտության եւ ընդհանուր քիմիայի ամբիոն՝ Ագրոնոմիական ֆակուլտետի կազմում:

4. Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի Հողաշինարարության եւ հողային կադաստրի եւ Զրային ռեսուրսների կառավարման ամբիոնները միավորելով ձեւավորվել է Զրային եւ հողային ռեսուրսների կառավարման ամբիոն:

5. Անասնաբուժական բժշկագիտության եւ անասնաբուժության ֆակուլտետի Մորֆոլոգիայի, ֆիզիոլոգիայի եւ ախտաբանական անատոմիայի եւ Անասնաբուժության ամբիոնները միավորելով ձեւավորվել է Մորֆոլոգիայի եւ կենդանագիտության ամբիոն:

Փորձուսուցումների պլանավորում եւ անցկացում

Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել եւ անցկացվել են բոլոր մակարդակների մասնագիտական կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի ժամանակացույցով նախատեսված առկա ու հեռակա ուսուցման բակալավրիատի, մագիստրատուրայի, Ա. Քոչինյանի անվան քոլեջի ուսանողների փորձուսուցումները: 2022 թ. փետրվարի 1-ից Պրակտիկայի բաժինը վերսկսեց իր աշխատանքը նոր ձեւաչափով, որպես Ուսումնական գործընթացների կառավարման վարչության ստորաբաժանում, «ՈւԳՎԿ ՊՀՈՒՎ (պրակտիկաների համակարգման եւ ուսումնական վերլուծությունների) բաժին» անվանումով:

2022 թ-ի ապրիլի 25-ից մինչև հունիսի 17-ը անցկացվել է նոր ուսումնական պլաններով նախատեսված աշխատանքային կիսամյակ - աշխատանքային փորձուսուցումը Ագրոնոմիական ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողների համար, որը շարունակվել է նաև 4-րդ կուրսի առաջին կիսամյակում՝ 8 շաբաթ տեւողությամբ: Ագրոնոմիական ֆակուլտետից աշխատանքային փորձուսուցում անցել է 26 ուսանող, որոնք աշխատել են ՀԱԱՀ հետ պայմանագիր կնքած 11 կազմակերպություններում: Այդ ընթացքում նրանք հնարավորություն են ունեցել ամրապնդել ընդհանուր եւ հատուկ մասնագիտական դասընթացներից ստացած գիտելիքները, զարգացնել մասնագիտական կարողություններն ու ձեռք բերել հմտություն, ինչպես նաև բարելավել փափուկ՝ իրական աշխատանքային միջավայրում ժամանակն արդյունավետ կառավարելու, հաղորդակցվելու եւ այլ հմտություններ: Նրանցից շատերը աշխատանքային փորձուսուցման ընթացքում վարձատրվել են կամ ստացել են որոշակի ծախսերի փոխհատուցում, իսկ 15-ը կամ 57,7 տոկոսը փորձուսուցման վայրում աշխատելու առաջարկ է ստացել:

2022 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին կազմակերպվել է ՀԱԱՀ առկա ուսուցման մնացած 4՝ Պարենամթերքի տեխնոլոգիաների, Ագրոբիզնեսի եւ տնտեսագիտության, Անասնաբուժական բժշկագիտության եւ անասնաբուծության եւ Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետներից 151 ուսանողների աշխատանքային կիսամյակը ՀԱԱՀ-ի հետ համապատասխան պայմանագրեր կնքած ավելի քան 50 կազմակերպություններում:

ՀԱԱՀ որակի գնահատման եւ ապահովման կենտրոնի հետ համատեղ կատարված հարցման արդյունքներով ուսանողների 90 տոկոսն աշխատանքային կիսամյակում կայացած արտադրական փորձուսուցումը համարում է արդյունավետ:

ՀԱԱՀ ՈՒԳԿՎ ՊՀՈՒՎ բաժինը շարունակում է աշխատանքները՝ փոխշահավետ համագործակցության սկզբունքով գործընկերների թիվը ավելացնելու ուղղությամբ:

ՀԱԱՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

2022-2023 ուստարում ՀԱԱՀ վարժարանի 10-րդ դասարան է ընդունվել 131 աշակերտ: Ներկայում վարժարանի աշակերտների ընդհանուր թիվը 264 է: Վարժարանը 2022 թ. իրականացրել է 10-12-րդ դասարաններում ուսումնական պլանով նախատեսված բոլոր հանրակրթական առարկաների ուսուցումը: Ամբողջ տարվա ընթացքում կատարվել է աշակերտների հաճախումների ամենօրյա հաշվառում, որի շնորհիվ ունեցել ենք միջինում 90 տոկոս հաճախելիություն:

2022-2023 ուսումնական տարում վարժարանն ունի 29 հիմնական եւ 5 համատեղությամբ աշխատող աշխատակիցներ, պարտադիր ատեստավորման ենթակա 8 ուսուցիչներ վերապատրաստվել են (բոլորը հավաքել են անհրաժեշտ կրեդիտները եւ ստացել համապատասխան վկայագրեր):

Ուսուցիչների կամավոր ատեստավորմանը մասնակցել եւ բարձր արդյունքներ են արձանագրել վարժարանի երկու ուսուցիչներ, որոնց աշխատավարձերը հինգ տարի ժամկետով ավելացել են համապատասխանաբար 50 եւ 30 տոկոսով:

Վարժարանի սովորողները տարվա ընթացքում հնարավորություն են ունեցել ֆիզիկա, քիմիա եւ կենսաբանություն առարկաների գործնական աշխատանքներն

անցկացնել հիմնանորոգված լաբորատորիաներում, որը նպաստել է այդ առարկաների նկատմամբ սովորողների հետաքրքրության մեծացմանը:

2022 թ.-ին EduArmenia-ի «Նախագծերը համայնքի զարգացման գրավական» մրցույթում մրցանակային տեղ է գրավել մեր ներկայացրած «Մասնագիտական կողմնորոշում» ծրագիրը:

2022 թ. ընթացքում տեղի են ունեցել 12 միջոցառումներ, հանդիպումներ եւ առարկայական բաց դասեր: Կազմակերպվել են այցելություններ ՀԱԱՀ տարբեր ֆակուլտետներ եւ ստորաբաժանումներ՝ մասնագիտական կողմնորոշման նպատակով: 2022 թ.-ի հուլիսին վարժարանի սաների մասնակցությամբ մեկնարկել է Ագրոճամբարը: Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի կողմից վարժարանի ֆուտբոլի թիմն արժանացել է պատվոգրի՝ 2-րդ տեղը զբաղեցնելու համար:

Վարժարանն ավարտել է 140 շրջանավարտ, որոնց ավելի քան 50 տոկոսն ընդունվել է ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններ, այդ թվում 37-ը՝ ՀԱԱՀ:

ՀԱԱՀ Ա. ՔՈՇԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈՒԵՋ

Ա. Քոշինյանի անվ. գյուղատնտեսական քոլեջը 2022 թ.-ի հունվարին մեկնարկել է 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակը՝ իրականացնելով 13 մասնագիտությունների գծով ուսումնական գործընթացը: Հունվարի 1-ի դրությամբ քոլեջում առկա համակարգում սովորել է 659 ուսանող, որոնցից 160-ը՝ վճարովի հիմունքներով:

Ա. Քոշինյանի անվան գյուղատնտեսական քոլեջը այն եզակի քոլեջներից է, որ հաջողությամբ կիրառում է դուալ՝ աշխատանքի վրա հիմնված ուսուցումը, գինեգործության բնագավառում: Ծրագիրն իրականացվում է երկրի առաջատար 7 գինեգործական ընկերությունների հետ կնքված հուշագրերի շրջանակներում: Հավատարիմ մնալով իր կրթական ռազմավարությանը, հանձնառելով նոր կրթական ծրագրերի մշակման եւ ներդրման դժվարին ու պատասխանատու գործը, ելնելով աշխատաշուկայի պահանջարկից՝ 2022-2023 ուստարում քոլեջը ներդրել է եւս 3 տեխնոլոգիական մասնագիտություն:

2022-2023 ուստարում մեկնարկել են 16 մասնագիտություններ, որոնցից արդեն չորս մասնագիտության գծով դուալ ուսուցում է իրականացվում: Դրանք են՝ «Գինեգործություն (խաղողագործություն եւ էնոլոգիա)»՝ երկրորդ, «Կաթի եւ կաթնամթերքի տեխնոլոգիա», «Մսի եւ մսամթերքների տեխնոլոգիա», «Ջերմատնային տնտեսություն» մասնագիտությունների առաջին կուրսեր: Իսկ «Գինեգործություն (խաղողագործություն եւ էնոլոգիա)» մասնագիտության երրորդ կուրսը առաջին կիսամյակը մեկնարկեց գործատուների մոտ, որն իրականացվեց մեծ հաջողությամբ. գործատուները ուսանողների խմբից արդեն ունեն նախընտրած ապագա աշխատակիցներ:

Քոլեջը 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակը մեկնարկել է 715 ուսանողներով (անվճար՝ 453, վճարովի՝ 262), որից 250-ը՝ առաջին կուրսեցիներ (անվճար՝ 137, վճարովի՝ 113): Հաշվետու ժամանակաշրջանում գրանցվել է ուսանողների անհարգելի բացակայությունների բավարար ցուցանիշ, որը չի գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը:

Քոլեջից 80 ուսանողներ տարբեր պատճառներով ազատվել, հեռացվել եւ տեղափոխվել են այլ ուսումնական հաստատություններ, վերականգնվել է 10

ուսանող՝ այդ թվում այլ ուսումնական հաստատությունից տեղափոխվել է 9 ուսանող: Պարտադիր զինվորական ծառայության մեկնել է 11 ուսանող, ծառայությունից վերադարձել՝ 16-ը:

Ուսանողները ակտիվ մասնակցել են ՀԱԱՀ-ի կազմակերպած «Փափուկ հմտություններ, անձնային աճ, կարիերայի պլանավորում եւ կառավարում» եւ «Շոկոլադագործություն» դասընթացներին, կրթական եւ հանրային միջոցառումներին:

Ուստարվա ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ ոլորտային մասնագետների հետ, իրականացվել են ճանաչողական այցեր Բալահովտի ուսումնափորձնական տնտեսություն, կազմակերպվել հայ արվեստն ու մշակույթը ներկայացնող ցուցասրահներ, կրթական եւ մշակութային ցուցահանդեսներ, փառատոներ:

5 ուսանողներ արժանացել են խրախուսական պատվոգրերի ՀՀ միջբուհական մարզական առաջնություններին պատվով ներկայանալու համար:

Պետական ամփոփիչ ատեստավորման քննություններին եւ դիպլոմային նախագծերի պաշտպանությանը թույլատրված 153 ուսանողներից քննություններին մասնակցել է 153 ուսանող: 2-րդ պետական ամփոփիչ ատեստավորման քննության արդյունքերով գյուղատնտեսական քոլեջն ունեցել է 147 շրջանավարտ, այդ թվում 10-ը ստացել է գերազանցության դիպլոմ: ՀԱԱՀ հեռակա ուսուցման համակարգ է տեղափոխվել 64 ուսանող:

2022 թ. դեկտեմբերի դրությամբ քոլեջում ուսանում է 716 ուսանող, որից վճարովի համակարգում՝ 245 ուսանող:

ՀԱԱՀ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ

Հավատարիմ մնալով ՀԱԱՀ-ի առաքելությանը, կարեւոր համարելով բուհի 2020-2024 թթ. ռազմավարական ծրագրում ամրագրված դրույթներն ու զարգացման հիմնական նպատակները, ՀԱԱՀ մասնաճյուղերում 2022 թ.-ին շարունակել են իրականացվել ուսանողական համակազմի համալրմանը, ուսումնառության եւ դասավանդման գործընթացի արդիականացմանը, մայր բուհի կառուցվածքային ստորաբաժանումների հետ արդյունավետ համագործակցության ապահովմանը, մասնագիտական կողմնորոշման աշխատանքների բազմազանեցմանը, գործատու-գործընկեր կազմակերպությունների հետ կապերի զարգացմանն ու ամրապնդմանը, ինչպես նաեւ մասնաճյուղերի ենթակառուցվածքների հզորացմանը միտված աշխատանքներ:

ՎԱՆԱՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

2022 թ. դեկտեմբերի 16-ի դրությամբ մասնաճյուղի ուսանողների ընդհանուր թիվը կազմել է 246 ուսանող (նախորդ տարում՝ 298): Տարվա ընթացքում մասնաճյուղից հեռացվել է 38 ուսանող (նախորդ տարում՝ 20): Համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված կանոնակարգի՝ 2022 թ. սեպտեմբեր ամսին մասնաճյուղում կատարվել է հեռակա ուսուցման համակարգի դիմորդների փաստաթղթերի ընդունելություն: Որպես արդյունք, 47 դիմորդից մասնաճյուղ է ընդունվել 33-ը (նախորդ տարում՝ 53-ը): Շրջանավարտների թիվը կազմել է 52 (նախորդ տարում՝ 53):

Մասնաճյուղի հեռակա ուսուցման «Անտառային տնտեսություն եւ բնակավայրերի կանաչապատում», «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն», «Հողաշինարարություն եւ հողային կադաստր», «Սննդամթերքի անվտանգություն», «Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ եւ սարքավորումներ», «Ագրոպարենային համակարգի էկոնոմիկա», «Հաշվապահական հաշվառում եւ հարկում», «Գյուղատնտեսական հումքի եւ պարենամթերքի փորձաքննություն, ստանդարտացում եւ սերտիֆիկացում», «Ագրոնոմիա, սելեկցիա եւ գենետիկա» կրթական ծրագրերով 34 (նախկինում 31) կուրսերում ուսումնական գործընթացը կազմակերպվել է մայր բուհի Հեռակա դեպարտամենտի կրթական չափորոշիչներին համապատասխան:

2021-2022 ուսումնական տարվա ընթացքում մասնաճյուղում ժամավճարային հիմունքներով դասավանդել է 82 դասախոս, 42-ը Վանաձոր է գործուղվել Հայաստանի ազգային ագրարային համալսարանից, 7-ը (նախկինում 6) մասնաճյուղի հաստիքային աշխատողներ են, իսկ 33-ը՝ Վանաձոր քաղաքում գործող պետական բուհերից եւ այլ կազմակերպություններից հրավիրված մասնագետներ: Դասավանդող դասախոսներից 45-ն ունի գիտական կոչում եւ աստիճան, որը կազմում է մասնաճյուղի դասախոսական կազմի 55 տոկոսը: 2022 թ.-ին վերապատրաստում են անցել մասնաճյուղի 5 հաստիքային աշխատողներ եւ Վանաձոր քաղաքից դասավանդող ամբողջ դասախոսական կազմը:

Մասնաճյուղում շատ ակտիվ գործում է Գիտելիքի նորարարական հաբը, որտեղ 2022թ. ընթացքում կազմակերպվել են ավելի քան 100 տարաբնույթ միջոցառումներ մարզի երիտասարդների մասնակցությամբ:

2022թ. շարունակվել են մասնաճյուղի ենթակառուցների համալրման աշխատանքները: Ավստրիական զարգացման գործակալության աջակցությամբ ժամանակակից սարքավորումներով համալրվել է հողի անալիզի լաբորատորիան, որի պաշտոնական բացումը եղավ ապրիլի 21-ին: Ավարտին է հասցվել նաեւ պահածոների, կաթի, մսի 3 լաբորատորիաների շինարարությունը:

ՀԱԱՀ Վանաձորի մասնաճյուղի ուսումնական շենքի բակում գործող ջերմատանը մասնաճյուղի ուսանողների տնկած եւ աճեցրած սոճու եւ կեչու սերմնաբուսակներն արդեն գտնում են իրենց «տերերին»: Կատարվել է տնկիների նվիրատվություն Լոռու մարզի 5 դպրոցների, Ստ. Զորյանի տուն-թանգարանին, Փարաքար խոշորացված համայնքի Նորակերտ բնակավայրին, Աղավնաձոր համայնքում գործող «Զարթոնք» հանգստյան տանը:

«ՇԻՐԱԿԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Մ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

«ՀԱԱՀ Շիրակի գյուղատնտեսական քոլեջ» մասնաճյուղում ուսուցումը իրականացվում է առկա ձեւաչափով, 9 մասնագիտությունների գծով:

Քոլեջում 2022 թ. հունվարի մեկի դրությամբ ցերեկային ուսուցման համակարգում սովորել է 169 ուսանող (նախորդ տարում՝ 130), որից 23-ը՝ վճարովի համակարգում:

2022-2023 ուստարում քոլեջ ընդունվել է 35 դիմորդ (նախորդ ուստարում՝ 69), որից 15-ը վճարովի ուսուցմամբ, այլ հաստատությունից տեղափոխվել է 2 ուսանող:

Հաշվետու ժամանակահատվածում բանակ է զորակոչվել 4 (նախորդ տարում՝ 6) ուսանող, 3-ը՝ վերադարձել տարկետումից (նախորդ տարում՝ 5-ը), եւ հեռացվել 25-ը (նախորդ տարում՝ 27-ը): Ավարտել եւ որակավորում է ստացել 45 ուսանող (նախորդ տարում՝ 4-ը):

Պետական համալիր քննությունների եւ դիպլոմային աշխատանքների պաշտպանության ներկայացել է ուսանողների համապատասխանաբար 100 եւ 96 տոկոսը, գերազանց գնահատական է ստացել ուսանողների համապատասխանաբար 36 եւ 16 տոկոսը:

Արտադրական փորձուսուցումների կազմակերպման եւ անցկացման համար պայմանագրեր են կնքվել մասնագիտական ուղղվածությամբ կազմակերպությունների հետ, մասնավորապես՝ Գյումրու համայնքապետարան, Գյումրիի Սելեկցիոն կայան ՓԲԸ, Անուշարան Գրուպ ՍՊԸ, Եգան ՍՊԸ, Տրանս ակնթարթ ՍՊԸ, Իգիթ կաթնամթերքի գործարան ՍՊԸ, Չերքեզի Ձոր ՍՊԸ, ՕԿԵՅ ՍՊԸ, ԱՁ Սարոյան, ԱՁ Մ. Զաքարյան, ԱՁ Ս. Ադամյան, ԱՁ Ռ. Զադոյան, ԱՁ Կ. Սիմոնյան, ԱՁ Պ. Թորոսյան, ԱՁ Ք. Պետրոսյան, Ֆրանս ՍՊԸ, Պրոյեկտ ինտեր-ինվեստ ՍՊԸ, Լեն ճանշին ՍՊԸ, Աշոցքի պանրի գործարան ՍՊԸ, Հայր եւ որդի Գյոդակյաններ ՍՊԸ, Ֆրեշիփ ՍՊԸ, Ա. Ռ. Գրիգորյանի անվան ավտոդպրոց ՍՊԸ:

Մասնաճյուղի աշխատաքային առօրյայում կարելի էր տեղ ունեն ժամանակակից սարքավորումներով եւ գործիքներով համալրված կաթնամթերքի արտադրության եւ հողի անալիզի լաբորատորիաները, գիտելիքի նորարարական հաբը: Կաթնամթերքի արտադրության լաբորատորիայում իրականացվել են «Պանրի արտադրության կազմակերպում», «Կաթի եւ կաթնամթերքի տեղափոխման, լցման պատրաստման, տարայավորման, փաթեթավորման սարքավորումներ եւ հոսքագծեր», «Կաթի ընդունման եւ վերամշակման սարքավորումներ» մոդուլների գործնական եւ լաբորատոր դասերը:

Պարբերաբար իրականացվել են Հողի անալիզի լաբորատորիայի մասին իրազեկման աշխատանքներ, հրավիրվել են ֆերմերներ, ագրոուլորտի ներկայացուցիչներ, ներկայացվել են լաբորատորիայում առկա սարքավորումները եւ քննարկվել համագործակցության հնարավորությունները:

Յուրաքանչյուր երկուշաբթի Շիրակի գիտելիքի նորարարական հաբում տեղի է ունենում անգլերենի դասընթաց սկսնակ եւ միջին մակարդակների խմբերի հետ: Դասընթացը վարում է Դեպի Հայք հիմնադրամի կամավորը, որը կամավոր է նաեւ հաբում: Հաբում գործում է Էկոակումբ, որի շրջանակում իրականացվում են բնապահպանական միջոցառումներ, դասընթացներ ու արշավներ՝ ջրի կարելության ու խնայողության իրազեկման բարձրացման, Երիտասարդների միջազգային օրվա, Երկրի օրվա, Սոցիալական ձեռներեցության միջազգային շաբաթ, Կանաչ սպառողի օրվա եւ այլ առիթներով:

Հաբում պարբերաբար իրականացվում են նաեւ հանդիպումներ մասնագիտական կողմնորոշման նպատակով եւ ներկայացվում են քոլեջում գործող մասնագիտությունները, լաբորատորիաները եւ աշխատաշուկայի առկա պահանջները:

ՄԻՍԻԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Մասնաճյուղում բակալավրիատի կրթական ծրագրով հեռակա ուսուցմամբ գործող «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն», «Ագրոնոմիա, սելեկցիա եւ գենետիկա», «Կաթի, կաթնամթերքի, մանկական եւ ֆունկցիոնալ սննդի տեխնոլոգիա», «Ագրոէկոնոմիկա եւ սննդարդյունաբերության էկոնոմիկա», «Ագրոպարենային համակարգի էկոնոմիկա», «Հողաշինարարություն, հողային կադաստր», «Պարենամթերքի տեխնոլոգիա» մասնագիտությունների գծով սովորում է 135 ուսանող (նախորդ տարի՝ 163), այդ թվում՝ 3-ը գտնվում են ակադեմիական արձակուրդում: 2022 թ. մասնաճյուղի բակալավրիատի կրթական ծրագրի 1-ին կուրս է ընդունվել 18 ուսանող (նախորդ տարի՝ 40): Հաշվետու տարում մասնաճյուղից հեռացվել (ազատվել) է 17 ուսանող, վերականգնվել՝ 4-ը: 2022 թ. մասնաճյուղը ունեցել է 33 շրջանավարտ (նախորդ տարի՝ 21):

Մասնաճյուղում միջին մասնագիտական կրթական ծրագրով, հիմնական հանրակրթության հիմքով, առկա ուսուցմամբ գործող «Հաշվապահական հաշվառում», «Մենեջմենթ (կառավարում)», «Փոխադրումների կազմակերպում եւ կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների)», «Կաթի եւ կաթնամթերքի տեխնոլոգիա», «Պաշտպանված գրունտի կենսատեխնոլոգիա» մասնագիտությունների գծով սովորում է ընդհանուր 137 ուսանող, որից 107-ը՝ անվճար ուսուցմամբ (նախորդ տարի՝ 94 ուսանող, որից 84-ը անվճար ուսուցմամբ): 2022 թ. մասնաճյուղի միջին մասնագիտական կրթական ծրագրի 1-ին կուրս է ընդունվել 60 ուսանող (նախորդ տարի՝ 46), այդ թվում 36-ը՝ անվճար ուսուցմամբ: Միջին մասնագիտական կրթական ծրագրից դիմումի համաձայն ազատվել է 4 ուսանող, 1 ուսանող տեղափոխվել է ՀԱԱՀ Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջ: 2022 թ. միջին մասնագիտական կրթական ծրագրով մասնաճյուղն ունեցել է 9 շրջանավարտ:

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) հայաստանյան գրասենյակի ֆինանսավորմամբ «Տեղահանված եւ տեղաբնակ խոցելի խմբերի տնտեսական, սոցիալական ներգրավվածությունը հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում 2022 թ. ապրիլի 4-ից մինչեւ հոկտեմբերի 10-ը Հայաստանի ազգային ագրարային համալսարանը կազմակերպել եւ իրականացրել է «Արդի գյուղատնտեսության վարման մեթոդները» թեմայով դասընթաց: Այն ունեցել է 136 մասնակից, որից 24-ը ստացել է հավաստագիր:

2022 թ. վերապատրաստվել է մասնաճյուղի 16 ասիստենտ, ՌԶԳ ՀԿ-ի կողմից Շվեյցարիայում կազմակերպված մեկշաբաթյա վերապատրաստմանը մասնակցել է 1, իսկ Երեւանում՝ 2 հոգի:

Միջին մասնագիտական կրթական ծրագրով մասնագիտական կողմնորոշման շրջանակում կազմակերպվել են այցելություններ տեղի 3 հիմնական դպրոց եւ տեղի են ունեցել հանդիպումներ աշակերտների ծնողների հետ:

Հաշվետու ժամակաշրջանում շարունակվել են մասնաճյուղի նյութատեխնիկական բազայի արդիականացմանն ուղղված աշխատանքները: Ավարտին են հասցվել ՀԱԲ-ի լսարանի վերանորոգման եւ կահավորման, ինչպես նաեւ հողի անալիզի լաբորատորիայի վերանորոգման աշխատանքները (կահույքը եւ գործիքները պատվիրված են):

2022 թ.-ին սկսվել է մասնաճյուղին կից ուսումնափորձարարական տնտեսության (1.5 հա տարածքի վրա) կառուցման գործընթացը, որի նպատակն է բուհի գիտական ներուժի եւ առաջադեմ գյուղատնտեսական տեխնոլոգիաների ներդրմամբ ու կիրառմամբ նպաստել հարակալուն գյուղատնտեսության զարգացմանը ՀՀ հարավային տարածաշրջանում: ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանատան դրամաշնորհային ծրագրի շրջանակում վերոնշյալ ուսումնափորձարարական տնտեսությունում արդեն ավարտվել են ցանկապատի եւ մեքենատրակտորային կայանի հիմնման աշխատանքները: Ձեռք են բերվել 7 միավոր գյուղգործիքներ:

Հայ օգնության ֆոնդի (ՀՕՖ) եւ մասնաճյուղի համատեղ ֆինանսավորմամբ տարեվերջին ավարտվեց «խելացի» անասնաշենքի կառուցումը, որը նախատեսված է 12 գլուխ տոհմային կովերի համար: Ձեռք է բերվել նաեւ կանաչ կերի արտադրության հիդրոպոնիկ սարքավորում:

Նորարարական այս եւ նախատեսված այլ ենթակառուցների ստեղծումը, ինչպես նաեւ դրանց համատեղումը ՀԱԱՀ-ի մրցունակ մասնագիտական կրթական ծրագրերի հետ մեծապես կնպաստեն Սիսիանի մասնաճյուղի վարկանիշի եւ հեղինակության բարձրացմանը՝ որպես ՀՀ հարավային տարածաշրջանի գյուղատնտեսության զարգացման համար կարեւոր դեր ու նշանակություն ունեցող ուսումնական հաստատության:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ



ԱԳՐՈՐԻՉՆԵՍԻ ՌԻՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ATC)

Հաշվետու ժամանակահատվածում դեպարտամենտի բակալավրիատի ինը դիմորդների համար կազմակերպվել է երկամսյա նախապատրաստական դասընթաց Գյուղ. էկոնոմիկայի հիմունքներ եւ Գործարար անգլերեն առարկաներից: Քննությունների արդյունքների հիման վրա բոլոր ինը մասնակիցները ընդունվել են Ագրոբիզնեսի դեպարտամենտի բակալավրիատի 3-րդ կուրս՝ 2022-2023 ուսումնական տարում Ագրոբիզնես մասնագիտության Ագրոբիզնեսի եւ սննդի արդյունաբերության կառավարում կրթական ծրագրում ուսումը շարունակելու համար: Ուսանողների թիվը նախորդ տարվա համեմատությամբ աճել է: 2022 թ. Ագրոբիզնեսի դեպարտամենտի բակալավրիատի ծրագրի 4-րդ կուրսի

ուսանողների համար կազմակերպվել է աշխատանքային կիսամյակ (արտադրական փորձուսուցում) «Սթար Ֆեսպ», «Վարդո Գրուպ», «ԱՄ Փարթնըրզ Քոնսալթինգ Քամփնի», «Մադաթ Գրուպ» ՍՊԸ-ներում, «Սեյջ», «Սլայս քոնսալթինգ» խորհրդատվական ընկերություններում, «Քարդ Ագրոսերվիս» եւ «Քարդ Ագրոկրեդիտ ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՓԲԸ-ներում:

Հաշվետու ժամանակահատվածում դեպարտամենտի ուսանողների, ինչպես նաեւ հանրության համար լսարանային պայմաններում կազմակերպվել են Գործարար անգլերենի դասընթացներ: Դասընթացներին մասնակցելու համար դիմել էր ավելի քան հարյուր մասնակից, որոնցից ձեւավորվեց չորս խումբ: Քանի որ պահանջարկը բավական մեծ էր, նոյեմբերի 15-ից դեկտեմբերի 15-ը ընկած ժամանակահատվածում կազմակերպվել է Գործարար անգլերենի դասընթացների

Եւս 3 խումբ: Ուսանողների անգլերենի հմտությունները բարելավելու նպատակով 2022 թ.-ի նոյեմբեր ամսից կազմակերպվում են կինոդիտումներ:

Ագրոբիզնեսի մագիստրոսական ծրագիր (MAB)

2022 թ.-ին ավարտական կուրսի 6 մագիստրանտները հաջողությամբ պաշտպանեցին մագիստրոսական ավարտական աշխատանքները: Ագրոբիզնեսի դեպարտամենտի մագիստրատուրայի ավարտական միջոցառումը կայացավ 2022 թ. հունիսի 3-ին: Միջոցառմանը շրջանավարտներին ողջունեցին ՀԱԱՀ ռեկտոր Վարդան Ուռուտյանը, ՀՀ-ում ԱՄՆ ՄԶԳ ծրագրի հայաստանյան առաքելության փոխտնօրեն Ռեբեկա Ուայթը, Դեպարտամենտի պետ Արթուր Գրիգորյանը, Տեխասի A&M համալսարանի պրոֆեսոր, ICARE հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Ջոն Նիքոլզը եւ Գայզենհայմի համալսարանի պրոֆեսոր Յոն Հանֆը: Վեց շրջանավարտներին շնորհվեց տնտեսագիտության մագիստրոսի որակավորում: Շրջանավարտներից 3-ին շնորհվել է գերազանցության դիպլոմ: Շրջանավարտները ստացան ՀԱԱՀ դիպլոմներ եւ Տեխասի A&M համալսարանի հավաստագրեր:

2022 թ. Ագրոբիզնեսի մագիստրոսական ծրագրի առաջին կուրսի ուսանողների համար կազմակերպվել է ամառային արտադրական փորձուսուցում ՀՀ Կենտրոնական բանկում, Ագրոբիզնեսի հետազոտությունների եւ կրթության միջազգային կենտրոն (ICARE) հիմնադրամում եւ «ԷՍԵՆՇԸ ՍԸԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ-ում:



Ի-ՎԻ-ԷՆ ԳԻՆՈՒ ԱԿԱԴԵՄԻԱ

2022 թ. հունիսի 3-ին տեղի ունեցավ Ի-Վի-Էն գինու ակադեմիայի 11 ուսանողների ավարտական միջոցառումը: Շրջանավարտներից 6-ին Գերմանիայի Գայզենհայմ համալսարանի կողմից շնորհվեցին ավարտական հավաստագրեր, իսկ 5 շրջանավարտ ստացան մասնակցության հավաստագրեր ICARE հիմնադրամից:

2021-2022 ուսումնական տարվա ուսանողները օգոստոս-սեպտեմբեր ամիսներին մասնակցել են չորս շաբաթ տեւողությամբ գիտաարտարդրական փորձուսուցման:

2022-2023 ուստարում Ի-Վի-Էն գինու ակադեմիայի «Գինեգործություն եւ գինու բիզնես» 18-ամսյա մասնագիտական հավաստագրային ծրագրի 2021-2022 ուստարվա ընդունելության դիմորդներից հարցազրույցի փուլը հաղթահարել է 7 դիմորդ: Ուսանողներից մեկը սովորում է առցանց տարբերակով: 2-ը Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներ են:

ՋԵՐՄԱՏՆԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

«Ջերմատնային մշակաբույսերի մշակություն եւ կառավարում» դասընթացի նպատակն է պատրաստել փակ գրունտում մշակաբույսերի մշակության ժամանակակից պահանջներին բավարարող, ինչպես նաեւ շուկայի եւ կառավարման հիմունքներին ծանոթ մասնագետ-գյուղատնտեսներ: Դասընթացի 5-րդ փուլին 24

դիմորդներից մասնակցել է 19-ը: Դասընթացն իրականացվել է լսարանային պայմաններում, սակայն հաշվի առնելով հեռավոր մարզերից մասնակիցների առկայությունը, զուգահեռաբար դասընթացը ապահովվել է նաև առցանց՝ ZOOM հարթակի միջոցով: Տեսական դասերի հետ մեկտեղ գործնական գիտելիք ստանալու նպատակով ուսանողները մասնակցել են դասընթացի շրջանակում նախատեսված փորձուսուցմանը: Հաշվետու ժամանակահատվածում ուսանողների համար կազմակերպվել են այցեր Մարգարա համայնքի լուլիկի հիդրոպոնիկ ջերմատնային տնտեսություն, Ոսկեհատ համայնքի ելակի հիդրոպոնիկ ջերմատուն, Մասիսում վարդի հիդրոպոնիկ ջերմատուն, Ակունք գյուղում գտնվող վարդի հիդրոպոնիկ ջերմատուն: 10-ամսյա դասընթացի 5-րդ փուլի դասերը ավարտվել են 2022 թ. հուլիսին:

«ԱԳՐԱՐԱՅԻՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2022 թ.-ի հունվարի դրությամբ «Ագրարային մենեջմենթ մագիստրոսական ծրագրի գերմանալեզու խմբում սովորել է 8 մագիստրանտ, երկրորդ ավարտական կիսամյակում 2 մագիստրանտի տրամադրվել է գործուղում: 2022 թ.-ին Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում փորձուսուցում անցնելու եւ ուսանելու կապակցությամբ Ագրարային մենեջմենթ ծրագրի 3 մագիստրանտի եւ բակալավրի 3 շրջանավարտի, ովքեր համարվել են Ագրարային մենեջմենթ ծրագրին կցագրված ուսանողներ, տրամադրվել է գործուղում, որից 2-ը անձնական խնդիրների պատճառով դադարեցրել են գործուղումը եւ վերադարձել Հայաստան:

2022 թ. սահմանված ժամանակացույցի համաձայն 2 մագիստրանտներ գերազանց պաշտպանել են իրենց մագիստրոսական ատենախոսությունները: Վերջիններիս շնորհիվ է ՀԱԱՀ-ի տնտեսագիտության որակավորման մագիստրոսի դիպլոմ եւ Գերմանիայի Վայհենշտեյն-Թրիսդորֆի կիրառական գիտությունների համալսարանի հավաստագիր: 2022 թ. գերմաներեն լեզվի նախնական դասընթացներին մասնակցելու հայտ է ներկայացրել 16 ուսանող, սակայն մասնակցել է միայն 6-ը: 2022 թ. ԱՄՋ ծրագրի առաջին կուրս ընդունվելու հայտ է ներկայացրել 5 ուսանող, սակայն հրամանագրվել են 3-ը, որից 2-ը՝ անվճար համակարգ, 3-ն էլ՝ գերմանալեզու խմբում: Միջազգային եւ միջբուհական գործակցային ծրագրերի շրջանակներում 01.10.2022 թ.-ից ԱՄՋ-ի լավագույն մագիստրանտներից 5-ը ուսումը շարունակում է Վայհենշտեֆանի կիրառական գիտությունների համալսարանում՝ 1-ը՝ առաջին կուրսում, 4-ը՝ երկրորդ կուրսում: 2022 թ. ծրագրի մագիստրանտների համար անցկացվել են նաև հեռավար մասնագիտական դասընթացներ Գերմանիայի ՎԿԳՀ-ի միջոցով:

2022 թ-ին DAAD կազմակերպության ֆինանսավորմամբ ամբողջությամբ կահավորվել է ծրագրին կցված 1-349 լսարանը:


2022 թ.-ի սեպտեմբերի 21-ին ծրագիրը ներկայացրել է վերահավատարմագրման հայտ եւ մասնակցել է վերահավատարմագրման բոլոր գործընթացներին:

ԿԱՐԻԵՐԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակաշրջանում Կարիերայի զարգացման եւ շարունակական կրթության բաժնի կատարած աշխատանքներն իրականացվել են մասնագիտական վերապատրաստումների, կողմնորոշման, կարիերայի զարգացման եւ շարունակական կրթության ուղղություններով:

ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

2022թ. ընթացքում բաժինը կազմակերպել է համակարգել է 292 ՀԱԱՀ աշխատակցի վերապատրաստում՝ տարաբնույթ թեմաներով, որի համար ծախսվել է 1.030.000 դրամ: ՀԱԱՀ եւս 200 աշխատակից մասնակցել է «Տեղեկատվության անվտանգության եւ տեղեկատվական գրագիտության բարելավում» դասընթացին, որն իրականացրել է ՏՏ կենտրոնը:



Գծապատկեր 4. ՀԱԱՀ վերապատրաստված աշխատակիցները 2020-2022թթ., մարդ

2021թ. համարյա նույնաթիվ վերապատրաստումների համար (446 աշխատակից) ծախսվել է մոտ 2,4 անգամ ավելի գումար (2.455.500 դրամ): Ծախսված միջոցների շեշտակի նվազումը բացատրվում է այն հանգամանքով, որ վերապատրաստումների գերակշիռ մասը իրականացրել են բուհի գործընկեր տեղական եւ միջազգային կազմակերպությունները, բուհի համար անվճար հիմունքներով՝ կարելի էր համարելով գործընկերային հարաբերությունները եւ ոլորտի համալրումը արդիական հմտություններով զինված մասնագետներով:

- Պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար կազմակերպվել է մասնագիտական վերապատրաստման 26 դասընթաց, որին մասնակցել է ՊԴԱ 192 ներկայացուցիչ:
- Մասնագիտական վերապատրաստումներ են կազմակերպվել ՀԱԱՀ Վանաձորի մասնաճյուղի 19 դասախոսների համար:
- Ռազմավարական զարգացման գործակալության հետ համատեղ «Հմտությունների եւ գիտելիքի զարգացում» պիլոտային ծրագրի շրջանակում իրականացվել է.
- ✓ «Տեղեկատվության անվտանգության եւ տեղեկատվական գրագիտության բարելավում» դասընթաց, որին մասնակցել է ՊԴԱ 46 ներկայացուցիչ ՀԱԱՀ-ից եւ մասնաճյուղերից:

- ✓ «Excel» դասընթաց, որին մասնակցել է ՀԱԱՀ 20 աշխատակից:
 - Քանի որ վերոնշյալ թեմայով վերապատրաստման պահանջարկը մեծ էր, Տվյալագիտության ամբիոնի դասախոսները կազմակերպեցին եւս 15 դասախոսի վերապատրաստում:
 - ✓ «Իմ ագրոբիզնեսը» դասընթաց, որին մասնակցել է 30 շահառու:
 - ✓ «Հացի, հրուշակեղենի եւ շոկոլադագործության» կարճաժամկետ դասընթաց, որին մասնակցել է 107 շահառու:
 - ✓ «Բալախովիտ» ուսումնափորձնական տնտեսության կաթնամթերքի վարպետաց դպրոցում շարունակվել է «Դասական կաթնամթերք եւ պանիրներ» թեմայով կարճաժամկետ դասընթացը, որին մասնակցել է 110 շահառու:
 - ✓ «Կաթի արտադրության տեխնոլոգիան միջին ու խոշոր ֆերմաներում» թեմայով դասընթաց 177 շահառուի համար:
 - Շարունակվել է «Կենդանիների վակցինատոր» մասնագիտական ուսուցման ծրագրի 7-ից 10-րդ փուլերի իրականացումը, որին մասնակցել է 39 շահառու:
 - Համակարգվել է ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի հետ համատեղ իրականացվող «Սպանդանոցի անասնաբույժ-փորձագետների վերապատրաստման» դասընթացի 3-4-րդ փուլերը, որոնց մասնակցել է 12 անասնաբույժ:
 - «Փոքր եւ միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման եւ դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» ծրագրի շրջանակում համակարգվել են ֆերմերների համար իրականացվող մեկշաքայա դասընթացները, որոնց մասնակցել է 6 ֆերմեր:
 - «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի 2 աշխատակիցների համար «Արտադրական վիբրացիայի չափման եղանակներն ու սարքավորումները» թեմայով դասընթաց:
 - ՀԲԸՄ «Կին Ձեռներեցներ» ծրագրի շրջանակում Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի դասախոսներն իրականացրել են 15 շահառուների վերապատրաստում:
 - «Ֆինկա» ՈՒՎԿ ՓԲԸ-ի 40 շահառուների համար Ագրոնոմիական ֆակուլտետի դասախոսները իրականացրել են դասընթաց:
- Ընդհանուր առմամբ 2022 թ. ընթացքում 10 ուղղություններով իրականացվել են կարճաժամկետ դասընթացներ 538 արտաքին շահակիցների համար, որը 3 անգամ ավելի է, քան 2021 թ.-ին, եւ ապահովվել է 4.473.000 դրամ ֆինանսական ներհոսք:

ԿԱՐԻԵՐԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Մասնագիտական կողմորոշման նպատակով ՀԱԱՀ-ում շրջայցեր է կազմակերպվել Երեւանի եւ ՀՀ մարզերի 55 դպրոցների ավելի քան 1750 աշակերտների համար: Շրջայցերի ընթացքում աշակերտներին ներկայացվել է աշխատաշուկայում պահանջարկ ունեցող ՀԱԱՀ մասնագիտությունները, մեր համալսարանի բարեփոխումները եւ բուհի ընձեռած կրթական հնարավորությունները:

- Երեւանի եւ ՀՀ մարզերի 47 դպրոցներում կազմակերպվել են ՀԱԱՀ ներկայացուցիչների մասնագիտական կողմնորոշման շրջայցեր:
- Համակարգվել են «Լավագույնը մեր ուսանողներին» հանդիպումների շարքը, շրջանավարտների հարցազրույցները աշխատանքի տեղավորման նպատակով

ՀԱԱՀ գործընկեր «Երեւմյան Փրոջեքթս», «Բեկոն» ՍՊԸ, «Գրին Ֆարմեր» ՍՊԸ, «Ագրոթերյո» ՍՊԸ, «Գրանդ Քենդի» ՍՊԸ, «Ամերիաբանկ» ՓԲԸ, «Այվազյան եւ պարտներս», «Երեւանի շոկոլադի գործարան» ՍՊԸ, «Լի կոնֆետներ» ՍՊԸ, ոգելից խմիչքների արտադրության ոլորտում գործող 5, ագրոնոմիական ոլորտում գործող 3 եւ անասնաբուժական 4 ընկերությունների հետ: Որպես վերջնարդյունք՝ **8 շրջանավարտ** ընդունվեց աշխատանքի մեր գործընկեր կազմակերպություններում:

- Կազմակերպվել են հանդիպումներ «Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի», «Օմնի լոջիսթիքս» ՍՊԸ ներկայացուցիչների հետ, որոնք ուսանողներին ներկայացրել են ծրագրերը եւ իրենց ընկերություններում առկա թափուր աշխատատեղերը, մասնագիտական աճի հնարավորությունները եւ կարիերայի զարգացման հեռանկարները: Որպես արդյունք՝ **4 ուսանող** ընդունվեց աշխատանքի:

- Կազմակերպվել են հանդիպումներ «ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ ներկայացուցիչների հետ, ներկայացնելով ԱԿԲԱ Ֆեդերացիա ՓԲԸ գործունեության ոլորտները եւ համագործակցությունը ՀԱԱՀ-ի հետ:

- Կազմակերպվել են հանդիպումներ «Սպայկա»-ի ներկայացուցիչների եւ ուսանողների հետ: Ընկերության ներկայացուցիչները հետաքրքրված ուսանողներին առաջարկեցին իրենց փորձուսուցումն անցնել «Սպայկա»-ում, մասնավորապես, VOLVO տեխսպասարկման կենտրոնում:

- Իրականացվել է «Ինչպե՞ս ճիշտ CV կազմել» վերնագրով սեմինար-դասընթաց ուսանողների մրցունակության բարձրացման նպատակով: Մասնակիցների թիվը՝ 25:

- ՀԱԱՀ 30 ուսանողներ մասնակցել են «Կրթություն եւ կարիերա EXPO-2022» ցուցահանդեսին, «Բերքի տոն», «Պանրի օր» փառատոներին:

- Իրականացվել է «Կարիերայի եւ մասնագիտությունների օր» քուլեջների ուսանողների համար, մասնագիտության գիտակցված ընտրությանն ու կրթություն ստանալու հնարավորությունների մասին:

- Անընդհատ թարմացվում է շրջանավարտների տվյալների բազան:

- Exit survey (2021–2022 ուստարվա շրջանավարտների հետադարձ կապի հարցում) ընթացքի մեջ է:

- Ուսանողների եւ շրջանավարտների շրջանում տեղեկատվության տարածման անմիջական ու արագ կապի ստեղծման համար Facebook սոցիալական ցանցում ներդրված էլեկտրոնային հարթակին 2022 թ. դեկտեմբերի դրությամբ հետեւում է 5810 անձ, իսկ հարթակի միջոցով տարածված հայտարարությունները հասանելի են 13 500 արտաքին շահառուների: 2022 թ. ընթացքում հարթակում հրապարակվել է տեղեկատվություն դասընթաց-սեմինարների, հանդիպումների եւ այլ հնարավորությունների, ինչպես նաեւ 850-ից ավելի թափուր աշխատատեղերի վերաբերյալ:

- Գործընկեր կազմակերպությունների խնդրանքով աշխատանքի թափուր տեղերի վերաբերյալ հայտարարություններ են տեղադրվել եւ ուղարկվել շրջանավարտների անձնական էլիասցեններին: Որպես արդյունք՝ ավելի քան 12 ուսանող ընդունվել է աշխատանքի:

- Համագործակցության հուշագիր է կնքվել 15 գործընկեր կազմակերպությունների, 30 ավագ դպրոցների ու միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ:

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

ԱՅԳԵՊՏՂԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (ՖՐՈՒՏԵՆԻԱ)



Ակտիվ իրականացման փուլում են ՖՐՈՒՏԵՆԻԱ նախագծի ագրոտեխնիկական եւ կրթական բաղադրիչները:

Ագրոտեխնիկական բաղադրիչի շրջանակում 2022 թ.-ին կատարվել են՝

- Ինտենսիվ պտղատու այգու խնամքի եւ մշակության ընթացիկ աշխատանքներ
- Վնասված (բացակա) ծառերի փոխարինում (լրացում)
- Եղանակային կայանի տեղադրում
- Հողի խոնավաչափերի եւ ջերմաչափերի տեղադրում
- Էլեկտրական ցանկապատի տեղադրում
- Ավտոմեքենաների կայանատեղի վերանորոգում
- Այգու տարածքում ցուցանակների տեղադրում
- Գյուղատնտեսական տեխնիկայի համար նախատեսված ծածկի կառուցում
- Ինտենսիվ այգի ՀԱԱՀ ուսանողների այցելությունների կազմակերպում
- Aygi.am կայքի բովանդակության համալրում նոր նյութերով
- Նոր տեսանյութերի նկարահանում:

2022 թ.-ի վաղ գարնանից մեկնարկել են ՖՐՈՒՏԵՆԻԱ նախագծի շրջանակում հիմնված ինտենսիվ պտղատու այգու մշակության եւ խնամքի աշխատանքները, այդ թվում կատարվել են՝ ծառերի էտ, ուժգին քանու հետեւանքով վնասված եւ տնկումից հետո չկապած մոտ 40 տնկիների փոխարինում/լրացում նոր ծառերով, կարկտապաշտպան ցանցի բացում, կաթիլային ոռոգման ջրավազանի մաքրում, կուլտիվացիա, սրսկում եւ մշակության այլ ընթացիկ աշխատանքներ:

Ինտենսիվ այգու տարածքում տեղադրվել են եղանակային կայան, հողի խոնավաչափեր եւ ջերմաչափեր, որոնց տվյալները պահպանվում են հատուկ սերվերների վրա եւ հասանելի դառնում հայերեն միջերեսով հավելվածի միջոցով: Օդի եւ հողի ջերմաստիճանի, հարաբերական խոնավության, քանու ուժգնության եւ այլ տվյալների հիման վրա կատարված վերլուծությունները հնարավորություն կտան ոչ միայն ավելի արդյունավետ կազմակերպել այգու կառավարման ընթացիկ աշխատանքները, այլեւ բացահայտել տնկված բազմատեսակ սորտերի դրսեւորումները տվյալ բնակլիմայական պայմաններում:

Պոմպակայանի տարածքում տեղադրվել է ջրի արտահոսքի սենսոր, որը հավելվածի միջոցով ահազանգ կուղարկի ջրի հնարավոր արտահոսքի դեպքում:

Այգում տեղադրվել է էլեկտրական ցանկապատ՝ այգին կենդանիների ներխուժումից պաշտպանելու համար:

Ինտենսիվ այգու մուտքի մոտ կատարվել է տարածքի բարեկարգում: Այգու տարածքում տեղադրվել են ցուցանակներ:

Տարվա ընթացքում պարբերաբար կազմակերպվել են ՀԱԱՀ ուսանողների եւ «Ինտենսիվ այգիների հիմնում եւ կառավարում» դասընթացի մասնակիցների այցելություններ ինտենսիվ այգի:

ՖՐՈՒՏԵՆԻԱ նախագծի շրջանակում ստեղծված **www.aygi.am** կայքը համալրվել է նոր տեսանյութերով եւ հրապարակումներով:

ՀԱԱՀ կայքում տեղադրվել է ՖՐՈՒՏԵՆԻԱ նախագծի մասին պատմող առանձին էջ՝ <https://anau.am/fruitenia/>:

ՀԱԱՀ-ի եւ ԱՀԿՄԿ (ICARE) հիմնադրամի միջեւ 2022 թ.-ի դեկտեմբեր ամսին ստորագրվել է Այգու կառավարման հանձնման համաձայնագիր, համաձայն որի ԱՀԿՄԿ հիմնադրամը 2023 թ.-ի հունվար ամսից ՀԱԱՀ-ի կառավարմանն է հանձնում ինտենսիվ պտղատու այգու պահպանության եւ մշակության աշխատանքերը՝ պահպանելով միայն մշտադիտարկում եւ վերահսկողություն իրականացնելու գործառույթները:

Այս ընթացքում ԱՀԿՄԿ հիմնադրամը դիմել է ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, խնդրելով՝ թույլատրել ՖՐՈՒՏԵՆԻԱ նախագծի ընթացքում ձեռք բերված եւ ստեղծված նյութական եւ ոչ նյութական արժեքների փոխանցումը նախարարությանը՝ հետագայում ՀԱԱՀ-ին փոխանցելու պայմանով:

ՖՐՈՒՏԵՆԻԱ նախագծի **կրթական բաղադրիչի** շրջանակում հաշվետու ժամանակաշրջանում մշակված «Ինտենսիվ այգիների հիմնում եւ կառավարում» եւ «Պտղաբուծություն» ձեռնարկները հաստատվել են ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից: Նշված ձեռնարկները եւս տեղադրվել են ՀԱԱՀ գրադարանի էլեկտրոնային կայքում, ինչպես նաեւ aygi.am կայքում: «Կայուն գյուղատնտեսության հիմունքներ» ձեռնարկը դեռեւս դիտարկման փուլում է: Մշակվել է նաեւ «Կայուն արտադրության համակարգեր ընկուզավոր պտղատեսակների այգիների, ինտենսիվ պտղատու այգիների եւ տնկարանների օրինակով» ձեռնարկը, որի նպատակն է վերհանել գյուղատնտեսական արտադրության բնապահպանական ազդեցությունները եւ շեշտադրել կայունության ապահովումը:

2022 թ. հունիսի 24-ին կայացել է շահակիցների խորհրդի հերթական հանդիպումը՝ ներկայացնելու ՖՐՈՒՏԵՆԻԱ նախագծի առաջընթացը: Շահակիցների խորհրդի անդամները կարելի էր են համարել այս նախագծի իրականացումը, մասնավորապես այն առումով, որ ինտենսիվ այգիների հիմնման համար գործող պետական աջակցության ծրագրի դիմորդների թիվը մեծ է, եւ ըստ այդմ մեծացել է ոլորտում համապատասխան գիտելիք եւ հմտություն ձեռք բերելու պահանջարկը:

2022 թ. փետրվար-ապրիլ ամիսներին մշակվել եւ իրականացվել է «Ինտենսիվ պտղատու այգիների հիմնում եւ կառավարում» վերապատրաստման փորձնական եռամսյա դասընթացը, որի նպատակն է վերապատրաստել եւ զարգացնել մասնակիցների մասնագիտական որակավորումը՝ տրամադրելով ժամանակակից պահանջներին համապատասխան գիտելիք եւ գործնական հմտություններ: Հարցազրույցի արդյունքների հիման վրա 100 դիմորդներից 80-ը մասնակցել է դասընթացին, որոնցից միայն 50-ը հաջողությամբ ավարտել եւ ստացել է ավարտական հավաստագրեր: Համապատասխան սարքավորումների առկայությունը հնարավորություն տվեց դասընթացն անցկացնել հիբրիդային եղանակով՝ միաժամանակ ունենալով 3 խումբ՝ 2 առկա եւ 1 առցանց: Յուրաքանչյուր տեսական դաս ուղեկցվել է ինտենսիվ այգի/տնկարան գործնական այցով: Այցեր են կազմակերպվել ԱրԼեԱՄ ընկերության ինտենսիվ այգիներ, Գառնի Գարդեն ՍՊԸ-ին պատկանող ընկուզի եւ նուշի այգիներ, ՖՐՈՒՏԵՆԻԱ նախագծի շրջանակում հիմնված Ոսկեհատի ինտենսիվ այգի, ՀԱԱՀ Ակունքի օրգանական այգի եւ տնկարան Աշտարակում: Գործնական այցերի ժամանակ փորձագետները հատկապես կարելի էր են համարել մասնակիցներին պտղատու ծառերի՝ սալորենու,

կեռասենու, ծիրանենու, դեղձենու, ընկուզենու եւ նշենու էտ կատարելու գործնական հմտություն սովորեցնելը: Գործնական պարապմունքների ժամանակ խորհրդատվություն է տվել նաեւ միջազգային փորձագետ Դավիդե Ներին:

Դասընթացի արդյունավետությունը եւ մասնակիցների դասընթացից բավարարվածությունը գնահատելու նպատակով մասնակիցների շրջանում կատարված հարցումը ցույց տվեց, որ դասընթացը հաջողված էր, եւ գրեթե բոլոր մասնակիցները բավարարված էին դասընթացի կազմակերպման մակարդակից, փորձագետների գիտելիքներից եւ փորձից, դասավանդման մեթոդից եւ թեմաներից:

Հաշվի առնելով դասընթացի նկատմամբ բարձր պահանջարկը, ինչպես նաեւ դասընթացի վերաբերյալ մասնակիցների կարծիքները, դասընթացն իրականացվեց եւս մեկ անգամ՝ 2 ամիս տեւողությամբ, հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին: 53 դիմորդներից դասընթացին մասնակցել է 31-ը:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել է ժամանակակից պտղաբուծության ուղեցույց՝ նախատեսված ֆերմերների համար, նաեւ Կայուն գործելակերպերի ուղեցույց պտղաբուծությամբ զբաղվող ֆերմերների համար: Ուղեցույցները դիզայնիչական մշակման փուլում են:

Նախագծի շրջանակում գյուղատնտեսական 8 քուլեջների հետ կնքված համագործակցության հուշագրերի շրջանակում քուլեջների դասախոսների համար ՀԱԱՀ-ին պատկանող Ջարթոնք հանգստյան տանը իրականացվեց վերապատրաստողների վերապատրաստում, որի նպատակն է զարգացնել գյուղատնտեսական քուլեջների դասախոսների կարողությունները ժամանակակից, ինտենսիվ, կայուն պտղաբուծության ոլորտում, ներկայացնել քուլեջների համար մշակված ձեռնարկի բովանդակությունը, մասնավորապես ներկայացնել ինտենսիվ պտղատու այգու հիմնման նորարարական մոտեցումները, ինչպես նաեւ խրախուսել գյուղատնտեսական քուլեջներում այգեպտղաբուծություն կամ հարակից մասնագիտությունների ներդրումը:

ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՃԱՄԲԱՐ (ԱԳՐԻ ՔԵՄՓ)



«Նորարարական գյուղատնտեսության վերապատրաստման եւ ուսուցման ճամբար (ԱԳՐԻ ՔԵՄՓ)» նախագիծն իրականացվում է Ագրոբիզնեսի հետազոտությունների եւ կրթության միջազգային կենտրոն (ICARE) հիմնադրամի հետ համատեղ՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ:

2022 թ.-ին ԱԳՐԻ ՔԵՄՓ նախագծի շրջանակում «Ջարթոնք» հանգստյան տան տարածքում 1300 քմ-ի վրա հիմնվել է հատապտղանոց եւ պտղատու այգի: Այգին համալրվել է կաթիլային ոռոգման համակարգով, որի մի մասը հիմնվել է լարասյունային, մյուս մասը՝ կարկտապաշտպան ցանցի համակարգով: Հանգստյան տան տարածքում տեղադրվել է հավաքուն:

2022 թ.-ի ընթացքում նախագծի շրջանակում իրականացվել են տարբեր դասընթացներ «Ուսուցման ինտերակտիվ մեթոդներ», «Ռեզնիսկոպիայի պլանավորում», «ԱՏՀ-ի եւ դրոնների կիրառությունը գյուղատնտեսության մեջ», «Նորարարական գյուղատնտեսության գործելակերպեր», «Նորարարական մոտեցումները թափոնների կառավարման մեջ» թեմաներով, ինչպես նաեւ 2 Ամառային դպրոց

«Նորարարական գյուղատնտեսության գործելակերպեր (Ճշգրիտ գյուղատնտեսություն, ռոբոտների եւ դրոնների կիրառումը գյուղատնտեսության մեջ, ինտենսիվ գյուղատնտեսություն)» եւ «Կայուն եւ նորարար գյուղատնտեսություն, Շրջանաձեւ տնտեսության կիրառումը գյուղատնտեսության մեջ, սննդի կորուստների եւ թափոնների կայուն կառավարում» թեմաներով: Դասընթացներն ունեցել են 145 մասնակից ՀԱԱՀ դասախոսական կազմից, աշխատակազմից, ինչպես նաեւ ուսանողներից, շրջանավարտներից եւ ոլորտով հետաքրքրված երիտասարդներից:

ԱՄՆ ՄՁԳ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՇԽԱՏՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ (ARMENIAN WORKFORCE DEVELOPMENT ACTIVITY)

ԱՄՆ ՄՁԳ Հայաստանում աշխատուժի զարգացման ծրագրի շրջանակում մշակվել եւ 2022-2023 ուստարուց ներդրվել են «Կաթիլային ոռոգման համակարգերի մոնտաժում եւ շահագործում», «Կաթի եւ կաթնամթերքի տեխնոլոգիա», «Ջերմատնային տնտեսություն», «Պահածոների եւ սննդախտանյութերի տեխնոլոգիա», «Մսի եւ մսամթերքի տեխնոլոգիա» 5 դուալ կրթական ծրագիր ինչպես Ա. Քոչինյանի անվ. գյուղատնտեսական քոլեջում, այնպես էլ ՀԱԱՀ բոլոր մասնաճյուղերում:

Ծրագրի շրջանակում մշակվել եւ իրականացվել են նաեւ տարբեր կարճաժամկետ ծրագրեր, ինչպիսիք են «Փափուկ հմտություններ», «Շոկոլադի եւ հրուշակեղենի արտադրության տեխնոլոգիա», «Արեւային սարքավորումների ներկայացումն ու խորհրդատվությունը գյուղատնտեսության մեջ/ագրոպարենային համակարգում», «Արեւային ջրատաքացուցիչների չափագրում, տեղադրում եւ սպասարկում գյուղատնտեսության մեջ/ ագրոպարենային համակարգում», «Ագրոպարենային համակարգի քիմիկ-լաբորանտ», «Ավանդական պանիրների պատրաստման գաղտնիքները», «Քրաֆտ գարեջրագործության եւ թորման տեխնոլոգիա», «ԱԹՍ-երի (դրոնների) կիրառմամբ գյուղատնտեսական սրսկումների իրականացում» դասընթացները: 2022թ. ընթացքում 435 15-29 տարեկան երիտասարդներ, կանայք եւ հաշմանդամներ ավարտել են վերոնշյալ կարճաժամկետ դասընթացները:

Ծրագրի շրջանակում ներառականության ուղղությամբ վերապատրաստվել են ՀԱԱՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմից 191 մարդ, որից 30-ը՝ Սիսիանի եւ Վանաձորի մասնաճյուղերից:

Ծրագրի շրջանակում հուշագրեր են կնքվել 14 քոլեջների հետ (այդ թվում՝ 6 գյուղատնտեսական եւ 5 գյուղատնտեսական ծրագրեր իրականացնող քոլեջներ), որոնց կարիերայի կենտրոնների աշխատակիցները ՀԱԱՀ քոլեջների աշխատակիցների հետ միասին անցել են առցանց եւ դեմ առ դեմ կարողությունների զարգացման վերապատրաստումներ եւ իրականացրել են բազմաբնույթ մասնագիական ուղղորդմանն ուղղված միջոցառումներ:

2022 թ. ընթացքում ստեղծվել է գիտելիքի նորարարական HUB ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղում եւ տեխնոլոգիական լաբորատորիա (մսամթերքի, կաթնամթերքի եւ պահածոյացման ուղղությամբ) ՀԱԱՀ Վանաձորի մասնաճյուղում, որոնք առաջիկայում պաշտոնապես կբացեն իրենց դռները ուսանողների առաջ, իսկ պարենամթերքի մշակման ԴԵՄՈ-ԼԱԲ-ը, Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի գիտելիքի նորարարական HUB-ը, Ուսանողների հաջողության կենտրոնը այս պահին գտնվում են նորոգման աշխատանքների փուլում: Նշենք, որ Ուսանողների

հաջողության կենտրոնի ստեղծմանն ակտիվորեն միացել է նաև Ամերիա բանկը, որը աջակցել է վերանորոգման եւ ձեռավորման հարցում, իսկ հետագայում պլանավորում է իրականացնել ուսանողների համար հատուկ դասընթացներ: Նման համագործակցությունը մասնավոր եւ պետական սեկտորների համագործակցության լավագույն օրինակներից է:

«ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀՉՈՐԱՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏԵԼԻՔԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ ՀԱՆՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ» (SOAA)



Ակտիվ իրականացման փուլում են գտնվում ծրագրի կրթական եւ փորձացուցադրական բաղադրիչները: Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպվել են տարաբնույթ հանդիպում- քննարկումներ շահակիցների հետ՝ ոլորտի մարտահրավերների եւ հնարավորությունների, ինչպես նաև Օրգանական գյուղատնտեսության մագիստրոսական ծրագրի բարելավման հնարավորությունների վերաբերյալ: 2022թ.-ին ունեցել ենք Օրգանական գյուղատնտեսություն մագիստրոսական կրթական ծրագրի առաջին շրջանավարտները: Ատենախոսությունների թեմաները համապատասխանեցված էին ոլորտում իրականացվող հետազոտությունների ուղղություններին եւ կենսական ու կիրառական նշանակություն ունեին: Մագիստրոսական ծրագիրը հաղթահարած հինգ շրջանավարտներ տարածաշրջանում առաջին դիպլոմավորված մասնագետներ են, ովքեր սկիզբ կդնեն օրգանական գյուղատնտեսության գիտական հենքի:

Էրազմուս+ ՀԳ1-ի շրջանակում, որն ուղղված է աջակցել SOAA ծրագրին, 2022թ. նոյեմբերին տեղի է ունեցել փորձի փոխանակման եւ ծրագրային աշխատանքների իրականացմանն ուղղված այցը Վիեննայի BOKU համալսարան եւ ծրագրի գործընկեր կառույցներ:

Ներկայումս ակտիվ իրականացման փուլում են գտնվում օրգանական մագիստրոսական երկամյա ծրագրի կրճատման եւ ուսանողների համար առավել հասանելի դարձնելու աշխատանքները:

Ծրագրի շրջանակում ստեղծվելու է առաջին օրգանական ուսումնափորձնական ֆերման Ակունք համայնքում: Ներկայումս իրականացվում են նախագծման եւ նախապատրաստական աշխատանքներ:

ԳՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Գերմանական Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հետ համատեղ իրականացվել է Գյուղի զարգացման նոր քաղաքական փաստաթուղթ ծրագիրը, որի նպատակն է 2021-2022թթ. իրականացված «Գյուղականության ճգնաժամը Հայաստանում» հետազոտության արդյունքների հիման վրա կազմել քաղաքական փաստաթուղթ՝ գիտելիքահեն քաղաքականությանը եւ տարածքային ներառող զարգացմանը նպաստելու համար: Այդ նպատակով, պայմանագրեր են կնքվել ՀԱԱՀ ընտրված մասնագետների հետ, որոնք նախաձեռնել են մասնակցային գործընթաց հիմնական դերակատարների, այդ թվում քաղաքական որոշում կայացնողների ներգրավմամբ: Ծրագրի արդյունքները.

- Քաղաքական փաստաթուղթ՝ համապատասխան գերատեսչություններին ներկայացնելու համար
- Մեթոդական ձեռնարկ՝ գիտական արդյունքները քաղաքական փաստաթղթի վերածելու համար
- Մագիստրոսական ատենախոսություն <Կայուն գյուղատնտեսություն> մագիստրոսական կրթական ծրագրի շրջանակում «Գյուղատնտեսությամբ զբաղվողների սոցիալ-տնտեսական վիճակի գնահատումը եւ բարելավման հնարավորությունները Մարտունի խոշորացված համայնքի կայուն զարգացման համատեքստում» թեմայով (պաշտպանությունը նախատեսվում է 2023թ.-ին):

Ընդ որում, մեթոդական ձեռնարկի եւ մագիստրոսական ատենախոսության կազմման համար գերմանական Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամը ՀԱԱՀ երկու ուսանողի տրամադրել է կրթաթոշակ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՓՈՔՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՂԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ՝ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՈՎ ՀԱԳԵՑԱԾ ԽԵԼԱՑԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԵՎ ՀԱԱՀ-Ի ԿՐԹԱՎԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՋՈՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի ֆինանսական աջակցությամբ իրականացվող *Գյուղատնտեսության մեջ ներգրավված փոքր տնտեսությունների արտադրողականության բարձրացում՝ բարձր տեխնոլոգիաներով հագեցած խելացի գյուղատնտեսության կենտրոնի եւ ՀԱԱՀ-ի կրթական ծառայությունների հզորացման միջոցով* ծրագիրն ունի երեք բաղադրիչ:

1. Բարձր տեխնոլոգիաներով հագեցած կրթական ենթակառուցվածքի ստեղծման միջոցով նպաստել ՀՀ Սյունիքի մարզում որակյալ գյուղատնտեսության բարձրագույն կրթություն տրամադրելուն եւ կիրառական հետազոտություն իրականացնելուն: Այս բաղադրիչի շրջանակում ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղում ստեղծվում է ժամանակակից հողի անալիզի լաբորատորիա, կառուցվում է 303 մ² ջերմատուն սածիլների աճեցման համար եւ հիմնվում է 5000 մ² ինտենսիվ այգի: Ենթակառուցվածքի ստեղծմանը զուգահեռ, այս բաղադրիչի շրջանակում նախատեսվում է վերապատրաստել ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղի մասնագետներին՝ ժամանակակից մեթոդներով եւ մոտեցումներով կրթություն եւ ծառայություններ առաջարկելու համար:
2. ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղը վերածել հարթակի որտեղ գյուղատնտեսության ոլորտում ներգրավվածները, մասնավոր հատվածի ներկայացուցիչները եւ ուսանողները համատեղ կմշակեն գյուղատնտեսության վարման մարտահրավերները հաղթահարելու լուծումներ եւ կայուն գյուղատնտեսության պրակտիկաներ: Այդ նպատակով Սիսիանի մասնաճյուղի մասնագետները եւ ուսանողները կմշակեն եւ տարբեր ցուցադրական ու խորհրդատվական միջոցառումների շրջանակներում ոլորտի դերակատարներին կներկայացնեն նոր տեխնոլոգիաներ եւ լուծումներ,
3. ՀԱԱՀ մասնագետ-փորձագետները խորհրդատվական այցերի եւ դասընթացների միջոցով շարունակում են աջակցել ՀԱԱՀ տարբեր մարզերում ՄԱԿ ՊԿԾ-ի շահառուներին, ովքեր ներգրավված են դպրոցական սնունդ

ծրագրում: Բացի այդ, ՀԱԱՀ մասնագետները ակտիվորեն նպաստում են ՀՀ Սյունիքի մարզում հատիկաընդեղենների արտադրությամբ եւ վերամշակմամբ զբաղվող Խնձորեսկի կոոպերատիվի ստեղծմանը եւ կայացմանը: Ծրագրի ժամկետները՝ 2022թ. ապրիլից մինչեւ 2023թ. ապրիլ:

«ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԵՎ ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ՀԱՄԱՏԵՂ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Հայաստանի գիտության եւ տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST Foundation) հետ համատեղ իրականացվող «Հաշվողական գյուղատնտեսությունը՝ հանուն Հայաստանում պարենային համակարգերի բարելավման եւ դիմակայուն քաղաքականության» համատեղ հետազոտական նախագծի նպատակն է ուսումնասիրել մոդելավորման եւ սիմուլյացիաների համար նախատեսված «Գյուղատնտեսական արտադրության համակարգերի սիմուլյացիաների – APSIM պլատֆորմ»-ը, APSIM-ի գործարկման համար հավաքագրել եւ համեմատել համապատասխան տվյալները, կազմել APSIM-ը կամ նմանատիպ պլատֆորմները մեքենայացված ուսուցման պլատֆորմներին կապող ծրագիր: Ծրագրի շրջանակում հնարավոր է դարձել զարգացնել ներգրավված երեք երիտասարդ հետազոտողների ոլորտային կարողությունները եւ վերջիններիս կապել ճանաչված միջազգային գիտնականների հետ:

ՍԵՐՄԵՐԻ ԵՎ ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՒ ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄ

2022 թ. նոյեմբերին ավարտվեց «Սերմերի եւ տնկանյութի մասնագիտական հավաստագրողների եւ փորձարկողների վերապատրաստման ծրագրի մշակում եւ իրականացում» 9-ամսյա նախագիծը, որը ֆինանսավորել է ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում (EU GAIA) ծրագիրը: Նախագծի հիմնական նպատակն էր Հայաստանում սերմերի եւ տնկանյութի հավաստագրման արդյունավետ համակարգի բացակայության պայմաններում ապահովել բարձրորակ սերմերի եւ տնկանյութի հասանելիությունը եւ այս ոլորտում մասնագետների կարողունակության բարձրացումն ու Հայաստանում սերմերի եւ տնկանյութի հավաստագրման գործընթացին աջակցությունը:

Նախագծի շրջանակում իրականացվել է Սերմերի եւ տնկանյութի մասնագիտական հավաստագրողների եւ փորձորոշողների վերապատրաստման դասընթաց, որի նպատակն էր վերապատրաստել փորձորոշող գյուղատնտեսների եւ պտղահատապտղատու մշակաբույսերի տնկանյութի հավաստագրող մասնագետների, որոնք տնկանյութի արտադրության ողջ սխեմայում կկարողանան հետեւել տնկանյութի արտադրության ամբողջ գործընթացին եւ դրա համապատասխանությանը օրենքով սահմանված կարգով ներկայացվող պահանջներին: Վերապատրաստմանը մասնակցել են ագրոնոմներ, ՀԱԱՀ դասախոսներ, մագիստրանտներ: Քսանչորս մասնակիցներից դասընթացի տեսական եւ գործնական մասը հաջողությամբ հաղթահարել եւ ավարտական հավաստագիր է ստացել 20-ը, որոնք ձեռք են բերել մայրուտների, սերմնաբույսերի, տնկանյութի (այդ թվում ներկրված) փորձորոշման եւ որակական գնահատման, ինչպես նաեւ սերմերի եւ տնկանյութի բուսասանիտա-

րական վիճակի գնահատման մասնագիտական գիտելիքներ, հմտություններ եւ փորձ:

Տեսական դասերի հետ մեկտեղ անցկացվել են լաբորատոր դասեր եւ գործնական պարապմունքներ երկրի տասնյակ առաջատար մասնավոր պտղատնկարաններում եւ ՀԱԱՀ Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոնի կենսատեխնոլոգիայի եւ ՍՍՏՄ բուսասանիտարիայի լաբորատորիաներում: Նախագծի շրջանակում մշակվել եւ տպագրվել է «Պտղահատապտղատու մշակաբույսերի սերմերի եւ տնկանյութի փորձորոշման առանձնահատկությունները տնկարանում» ձեռնարկը, որը կարելի է ուղեցույց կհանդիսանա պտղահատապտղատու մշակաբույսերի սերմերի եւ տնկանյութի փորձորոշող եւ հավաստագրող մասնագետների համար:

ՀԱԱՀ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

2022 թ.-ին Հայաստանի ազգային ագրարային համալսարանում շարունակվեցին ուսումնական, հետազոտական ու արտադրական ուղղվածության նորարարական ուսումնասովանդակ ենթակառուցների ստեղծման ու վերակառուցման աշխատանքները:

ՀԱԱՀ-ի եւ Հայաստանի գիտության եւ տեխնոլոգիաների (FAST) հիմնադրամի համագործակցությամբ, ՀՀ ԿԳՄՍ նախարարության ֆինանսավորմամբ ՀԱԱՀ 1-ին մասնաշենքում ավարտին են մոտենում անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով եւ գույքով ապահովված կենսագիտության ինկուբատոր - բաց լաբորատորիայի ստեղծման աշխատանքները:

ՀԱԱՀ Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի եւ մելիորացիայի գիտական կենտրոն մասնաճյուղում ՄԱԶԾ օժանդակությամբ ավարտվել են Հայաստանի հողերի՝ տարածաշրջանում միակ թանգարանի վերանորոգման աշխատանքները:

Սիսիանի մասնաճյուղում ակտիվ իրականացման փուլում է Խելացի գյուղատնտեսության կենտրոնի, մասնավորապես՝ խելացի անասնաշենքի եւ մեքենատրակտորային կայանի կառուցումը Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի հետ գործակցությամբ: Ավարտին են հասցվել մասնաճյուղի Գիտելիքի նորարարական ՀԱԲ-ի լսարանի վերանորոգման եւ կահավորման, ինչպես նաեւ հողի անալիզի լաբորատորիայի վերանորոգման աշխատանքները (կահույքը եւ սարքերը պատվիրված են):

Մայիսին ՀԱԱՀ 2-րդ մասնաշենքում բացվեց Ճշգրիտ գյուղատնտեսության կենտրոնը՝ Անօդաչու թռչող սարքերի ուսումնական լաբորատորիայով: Լաբորատորիան ստեղծվել եւ կահավորվել է Եւրամիության կողմից ֆինանսավորվող եւ Ավստրիական զարգացման գործակալության կողմից համաֆինանսավորվող «Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն» (EU-GAIA) նախագծի շրջանակում: Լաբորատորիայի կահավարմանն աջակցել է նաեւ Ֆարմ կրեդիտ Արմենիա վարկային կոոպերատիվը: Ագրոդրոնների լաբորատորիան ծառայելու է համալսարանի ուսանողներին եւ դասախոսներին՝ ուսումնահետազոտական նպատակներով, ֆերմերներին եւ գործող մասնագետներին՝ արտադրական ու վերապատրաստման նպատակներով, ինչպես նաեւ ոլորտի տարբեր շահակիցների՝ խորհրդատվական

ծառայությունների տեսքով: Լաբորատորիան հագեցած է տարբեր գործառույթներ իրականացնող գյուղատնտեսական 4 անօդաչու թռչող սարքերով, երկրատեղեկատվական համակարգերով եւ հեռահար զոնդավորման սարքերով, համակարգիչներով եւ համապատասխան ծրագրակազմերով:

Անասնաբույժի օրվա կապակցությամբ Անասնաբուժական բժշկագիտության եւ անասնաբուծության ֆակուլտետի Արեշի մասնաշենքում տեղի ունեցավ Անասնաբուժական կրթագիտական գերազանցության կենտրոնի պաշտոնական բացումը: Անասնաբուժական նորագույն կադապարվածքներով ու սարքերով հագեցած նորարարական ուսումնական այս կենտրոնը ունի երեք հիմնական բաժին՝ անասնաբուժական ժամանակակից սիմուլյացիոն բաժին, անասնաբուժական ժամանակակից կլինիկա եւ ուսումնական լսարաններ: Կենտրոնը միանգամայն նոր խոսք է անասնաբուժական կրթության, գիտության, հետազոտությունների եւ ծառայությունների բանագավառներում: Այն ստեղծվել է Համաշխարհային բանկի ֆինանսական աջակցությամբ, Նորարարությունների մրցակցային հիմնադրամի՝ «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակում կնքված դրամաշնորհային պայմանագրի հիման վրա:

Բալախովիտի ՈՒՓՏ-ում նվիրատուների միջոցներով վերակառուցվել է արդյունավետ կերի, կենսաբանական պարարտանյութերի արտադրման եւ հումքի վերամշակման արտադրամաս:

ՀԱԱՀ Վանաձորի մասնաճյուղում ավարտին է հասցվել պահածոների, կաթի, մսի 3 լաբորատորիաների շինարարությունը եւ գույքի ձեռք բերումը:

ԵՄ-ից ֆինանսավորվող եւ Ավստրիական զարգացման գործակալության կողմից իրականացվող Կանաչ գյուղատնտեսություն նախաձեռնություն Հայաստանում (EU GAIA) նախագծի շրջանակում ՀԱԱՀ Շիրակի եւ Վանաձորի մասնաճյուղերում շահագործման հանձնվեցին հողի անալիզի լաբորատորիաներ, որոնք առանձնանում են սարքավորումների արդիականությամբ, կատարվող լաբորատոր փորձաքննությունների լայն ընդգրկմամբ եւ ճշգրտությամբ:

Սոցիալական գործընկերության եւ կորպորատիվ պատասխանատվության, մասնավոր հատվածի հետ գործակցության լավագույն օրինակ է փետրվարին ՀԱԱՀ-ում բացված Գարեջրագործության եւ թորման ուսումնափորձարարական լաբորատորիան, որ նպաստում է մրցունակ կրթության եւ ուսանողակենտրոն միջավայրի ձեւավորմանը: «ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ-ն եւ Երեւանի գարեջուր ՓԲԸ-ն ՀԱԱՀ այն գաղափարակից կազմակերպություններն են, որոնց ֆինանսական աջակցությամբ կատարվել է լաբորատորիայի եւ կից տարածքի վերանորոգում եւ կահավորում, ձեռք են բերվել գարեջրի թորման հոսքագիծ, այլ անհրաժեշտ սարքավորումներ եւ գործիքներ:

ՀԱԱՀ 1-ին մասնաշենքում՝

- ✓ Հիմնովին վերանորոգվել է «Հայաստանում աշխատուժի զարգացման ծրագրի (Armenia Workforce Development Activity)» գրասենյակային տարածքը,
- ✓ Բարերարների ֆինանսական աջակցությամբ 2022 թ. դեկտեմբերին սկսվել են Օրգանական գյուղատնտեսության լաբորատորիայի եւ լսարանի հիմնանորոգման աշխատանքները,
- ✓ Ամերիաբանկ ՓԲԸ ֆինանսական աջակցությամբ մեկնարկվել են ուսանողական հաջողության կենտրոնի եւ դրա հարակից միջանցքի նորոգման աշխատանքները,

- ✓ 2022 թ. նոյեմբերին սկսվել են սննդի (կաթ, միս, ձուկ եւ պահածո) լաբորատորիաների շինարարական աշխատանքները:

2022 թ.-ի ընթացքում ՀԱԱՀ-ում կատարված շինվերանորոգման, բարելավագման եւ նյութատեխնիկական բազայի համալրման տարաբնույթ ու լայնածավալ աշխատանքների գերակշիռ մասը կատարվել է աջակիցների եւ գործընկերների տրամադրած միջոցներով:

ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱԼԱՀՈՎԻՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի հյուսիսարեւելյան մասում տեղակայված «Բալահովիտ» ուսումնափորձնական տնտեսության հիմնական նպատակն ուսանողների համար որպես գիտական, ուսումնական եւ գործնական-արտադրական բազա ծառայելն է:

«Բալահովիտ» ՈՒՓՏ-ն Ելիջա հանդամասում ներկայումս ունի 1075.8 հա հողատարածք, խոտհարքներից 2022 թ.-ին կատարվել են խոտհնձի եւ խոտհավաքի աշխատանքներ, կուտակվել է 267.4 տ խոտ, 10 հա-ի վրա կատարվել է իշաովույտի ցանքս, 13 հա-ի վրա կատարվել է կորնգանի ցանք գարու ենթացանքսով, հարդյունս որի ստացվել է 13.550 տ գարու բունկերային սերմ եւ 6.768 տ գարու ծղոտ, վաճառվել է 5.25 տ գարու ծղոտը: Տնտեսության հարակից 3.3 հա-ի վրա կատարվել է գարու ցանքս, ստացվել է 3.72 տ բունկերային գարու սերմ եւ 4.3 տ գարու ծղոտ, ստացվել է եւս 6 տ բունկերային գարի:

2022 թ. հունվարի 1-ի դրությամբ «Բալահովիտ» ՈՒՓՏ-ի կաթնասնամասնապահական ֆերմայի խոշոր եղջերավոր կենդանիների եւ մատղաշի գլխաքանակը կազմել է 38 գլուխ, 31.12.2022 թ. դրությամբ՝ 38 գլուխ: Մանր եղջերավոր կենդանիների գլխաքանակը 2022 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 71 գլուխ, 23 գլուխը ֆրանսիական Բլանշ ցեղի կենդանիներն են, 31.12.2022 թ. դրությամբ՝ 72 գլուխ եւ 26 գլուխը ֆրանսիական Բլանշ ցեղի կենդանիներն են:

2022 թ.-ին արտադրվել է 15.78 տ կաթ, իրացվել է 13.26 տ:

«Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի «Հմտությունների եւ գիտելիքի զարգացում» ծրագրի շրջանակում շահագործման հանձնված Կաթնամթերքի վարպետաց դպրոցում փորձուսուցման միջոցով ՀԱԱՀ-ի եւ գործընկեր համալսարանների ուսանողներին փոխանցվում են արդիական գործնական մասնագիտական գիտելիքներ ու հմտություններ:

2022 թ.-ին վերակառուցվել է արդյունավետ կերի, կենսաբանական պարարտանյութերի արտադրման եւ հումքի վերամշակման գիտափորձարարական արտադրամաս, որտեղ մեր գիտնականների մասնակցությամբ արտադրվում և փորձարկվում են նոր կերային հավելումներ:

Բալահովիտի ՈՒՓՏ-ում ավարտվել են «խելացի» անասնաշենքի կառուցման աշխատանքները եւ սպասվում է տավարի բարձրմթերատու եվրոպական ցեղերի կենդանիների մուտք, որի շնորհիվ կամբողջանա ժամանակակից արտադրության շրջափուլը եւ ուսանողները կստանան աշխատաշուկայում պահանջված ամենարդիական գործնական մասնագիտական գիտելիքներ եւ հմտություններ:

ՈՍԿԵՀԱՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՆՈՒ ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ-ում Արգենտինայի դեսպանության աջակցությամբ եւ Հայկական բարեգործական ընդհանուր միության ֆինանսավորմամբ, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի եւ Արգենտինյան (National Institute for Agricultural Technology) Գյուղատնտեսական տեխնոլոգիաների ազգային ինստիտուտի (INTA) կողմից իրականացվող ”Intitutional strengthening-demonstration field in the Armavir region” համատեղ ծրագրի շրջանակում, օգտագործելով INTA-ի փորձը, Ագրարային համալսարանի Ոսկեհատի ուսումնափորձնական տնտեսությունում առանձնացված տարածքում, կարկտապաշտպան ցանցով ստվերակված եւ կաթիլային ոռոգման համակարգ անցկացված 1,5 հա տարածքում 2022 թ. վեգետացիոն ժամանակահատվածում փորձարկվել են բանջարային մշակաբույսերի (վարունգ, բադրիջան եւ տաքդեղ) աճեցման նորագույն տեխնոլոգիաներ:

Հիմնվելով տվյալ ուսումնասիրությունների արդյունքներին՝ առաջարկվել է բաց դաշտի պայմաններում՝ հատկապես Արարատյան դաշտավայրում բանջարային մշակաբույսերի մշակության տարածքներում, որպես արդյունավետ տեխնոլոգիական գործառույթ օգտագործել կարկտապաշտպան ցանցեր եւ ներդնել կաթիլային ոռոգման համակարգեր հնարավորինս երաշխավորված եւ բարձր քանակությամբ ապրանքային բերք ապահովելու համար:

10 հա տարածքի վրա իրականացվել է միջավաղահաս եգիպտացորենի ցանք սիլոսային կանաչ զանգված ստանալու համար: Կիրառվել է ազոտային միացություններով արտարմատային սնուցման նոր տեխնոլոգիական մոտեցում՝ սնուցող բանվորական լուծույթը դրոնի միջոցով (սրսկումով) տրվել է բույսերին: Տնտեսապես հիմնավորվել է արտարմատային սնուցումներ իրականացնելու նոր տեխնոլոգիայի (դրոնի միջոցով սրսկումներ) կիրառման արդյունավետությունը:

2022 թ. ընթացքում «Ոսկեհատ» ՈՒՓՏ-ում մշակվել է մոտ 12 հա խաղողի այգի, որտեղից հավաքվել է 60111,5 կգ բարձրորակ խաղող, որից Ոսկեհատի գինու ուսումնագիտական կենտրոնը մթերել է 8237,5 կգ խաղող, իսկ մնացածը վաճառվել է: Տարվա ընթացքում կնքվել են ծառայությունների մատուցման պայմանագրեր տարբեր գինեգործական կազմակերպությունների, այդ թվում նոր ստեղծվող գինեգործական ստարտափ ընկերությունների հետ. իրականացվել են գինեչյութերի հնացման, պահատվության, մշակման եւ շշացման ծառայություններ: Ոսկեհատի գինու ուսումնագիտական կենտրոնը հանդես է գալիս որպես ուսումնափորձարարական հարթակ, որտեղ ՀԱԱՀ շրջանավարտները փորձում են ստեղծել գինիերի նոր տեսակներ եւ հանդես գալ շուկայում:

2022 թ.-ին շարունակվել է «ՍԵՐՈՒՆԴ» կարմիր անապակ եւ «ՍԵՐՈՒՆԴ» հնացված կարմիր անապակ գինիների վաճառքը եւ առաջխաղացումը տեղական շուկայում: Աշխատանքներ են տարվում վաճառքի նոր կետեր ներգրավելու, արտահանման գործընթաց սկսելու ուղղությամբ, մասնավորապես Wines of Armenia հարթակի միջոցով Գերմանիայի Դաշնային Հանրապետության շուկայում ներկայություն ապահովելու համար:

Կենտրոնում պատրաստվել է մոտ 1100 դալ տարբեր տեսակների գինեչյութ, որի մի մասը 2023 թ. ընթացքում կշշացվի եւ «ՍԵՐՈՒՆԴ»-ի նոր պիտակներով

կշուկայահանվի՝ սպառողների դատին հանձնելու գինեգործների նոր սերունդների արտադրանքը:

Շարունակվել է համագործակցությունը ՖՐՈՒՏԵՆԻԱ (FRUITENIA) ծրագրի շրջանակում, ինչպես նաև տարբեր կրթական հաստատությունների եւ մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ, կազմակերպվել են բազմաթիվ ճանաչողական այցեր, վերապատրաստումներ, փորձուսուցումներ, տնտեսությունն ունեցել է շուրջ 230 այցելու:

ԱԿՈՒՆՔ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

2022 թ.-ին կենտրոնը ստացավ անցումային օրգանական տնտեսության 2-րդ տարվա հավաստագիրը: ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում (EU GAIA) նախագծի շրջանակում կենտրոնում հիմնվել է ինտենսիվ այգի, կառուցվել է ջերմատուն: «Օրգանական գյուղատնտեսության հզորացում Հայաստանում. մասնակցային բարձրագույն կրթություն եւ գիտելիքի փոխանակում հանուն զարգացման» (SOAA) ծրագրի շրջանակում նախատեսվում է տնտեսությունը վերափոխել ուսանողական - ցուցադրական ֆերմայի, որտեղ իրենց հետազոտական աշխատանքները կանցկացնեն ՀԱԱՀ Օրգանական գյուղատնտեսություն, ինչպես նաև հարակից այլ մագիստրոսական եւ ոչ միայն կրթական ծրագրերի ուսումնառողները, ոլորտի հետազոտողները եւ հետաքրքրված շահակիցները:

ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

Հաշվետու տարում ՀԱԱՀ ՈԳԱ կենտրոնը տարեկան գործառնական պլանի համաձայն աշխատանքներ է իրականացրել մի քանի ուղղություններով:


1. Ռազմավարական կառավարում

ՈԳԱ կենտրոնը 2022 թ. լրամշակել է ամբողջացրել է ՀԱԱՀ գործունեության բոլոր ուղղությունների կատարողականությունը գնահատող ԳԱՑ-երի եռաստիճան փաթեթը: Այն կարելի է հետեւյալ տեսանկյուններից. չափելի են դառնում բուսի ձեռքբերումներն ու բացթողումները եւ հավաքվում է անհրաժեշտ տվյալների բազա, որը հնարավորություն է տալիս վերլուծել բուսի եւ դրա ստորաբաժանումների շարժընթացը ժամանակի մեջ: Հենվելով դրա վրա՝ ՈԳԱ կենտրոնը մշակեց եւ ՀԱԱՀ ստորաբաժանումներին տրամադրեց գործառնական պլանավորման ձեւաչափը, որի հիման վրա ստորաբաժանումները կազմեցին եւ ՈԳԱ կենտրոն ներկայացրեցին 2022 թ. տարեկան պլանները՝ արդեն մշակված ԳԱՑ-երով: Վերջինը կարելի է քայլ է նաև ստորաբաժանումների ՊԻԳԲ շրջափուլով աշխատանքի որդեգրման համար:

ՈԳԱ կենտրոնը երեք ամիսը մեկ, ՀԱԱՀ գործառնական պլանի եւ փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագրի հիման վրա բոլոր ստորաբաժանումներից հավաքում է կատարողականի տվյալները, վերլուծում դրանք եւ արդյունքները ներկայացնում ռեկտորատի եւ գիտ-խորհրդի նիստերին: Դրանով ավարտվեց համալսարանում հաշվետվողականության միասնական համակարգի ներդրումը: ՈԳԱ կենտրոնի խնդիրներից է ԳԱՑ-երով հաշվետվողականության ապահովումը վերածել մշակույթի:

2. Մասնագիտությունների կրթական ծրագրերի որակի ապահովում

ՈԳԱ կենտրոնի խնդիրներից է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացումը ՊԻԳԲ շրջափուլով: Այդ պատճառով գնահատումներ են իրականացվում եւ՛ ՄԿԾ պլանավորման, եւ՛ իրականացման փուլում: ՈԳԱ կենտրոնի գնահատմանն են ներկայացվել 22 վերանայված կամ նոր մշակված ՄԿԾ-ներ, որոնցից 13-ը՝ բակալավրիատի կրթական ծրագրերով, 9-ը՝ մագիստրոսական: Ընդունվել է ներկայացված ՄԿԾ-երի 36 տոկոսը, գնահատման փուլում է 64 տոկոսը:



Գծապատկեր 5. Մշակված ՄԿԾ-ներ

Բակալավրիատի կրթական ծրագրով դեռեւս չեն վերանայվել 4 ՄԿԾ-ներ, մագիստրոսականի ծրագրով՝ 10-ը:

Մշակվել է աշխատանքային կիսամյակի սկզբունքով փորձուսուցման կարգի նախագիծը, որը ստորաբաժանումներում եւ բուհի ղեկավարության կողմից լրամշակումից հետո հաստատվել է ՀԱԱՀ ԳԽ-ի նիստում: Մշակվել է աշխատանքային կիսամյակի սկզբունքով փորձուսուցման ծրագրի նոր ձեւաչափը, հարդյունս որի ստորաբաժանումները մշակել են ՄԿԾ վերջնարդյունքներին համահունչ փորձուսուցման նոր ծրագրեր:

ՄԿԾ ընթացիկ մշտադիտարկման շրջանակում ՈԳԱ կենտրոնը իրականացրել է ուսանողների կողմից առարկաների եւ դասախոսների գնահատում, դասալսումների մշտադիտարկում, ուսանողների դասերին հաճախելիության գնահատում:

Դասալսումների մշտադիտարկման արդյունքները վերլուծվել եւ ներկայացվել են ռեկտորատի նիստերին: Դասախոսների գնահատման արդյունքները ամփոփվում են, որը կավարտվի 2023 թ. հունվարին: Արդյունքները կներկայացվեն դասախոսներին եւ ամբիոններին:

ՀԱԱՀ «Ագրարային մենեջմենթ» միջազգային գերմանալեզու մագիստրոսական ծրագրի՝ ACQUIN-ի կողմից վերահավատարմագրման նպատակով ՄԿԾ պատասխանատուի հետ համատեղ իրականացրել է ՄԿԾ ինքնավերլուծություն: Ծրագիրը ներկայացվել եւ անցել է միջազգային հավատարմագրման գործընթացը: Համալսարանը սպասում է հանձնաժողովի եզրակացությանը ծրագրին միջազգային հավատարմագրման շնորհման առնչությամբ:

3. Որակի ապահովման համակարգի բարելավմանն ուղղված միջոցառումներ

Հետեւելով որդեգրած հետազոտահենք եւ փաստարկված գործելաոճին՝ ՈԳԱ կենտրոնը իրականացրել է մի շարք հետազոտություններ.

- ✓ «ՀԱԱՀ աշխատակիցների կողմից աշխատանքից բավարարվածության գնահատում» հետազոտության իրականացում, որի արդյունքները զեկուցվել են

ռեկտորատի նիստին: Իրականացված հետազոտության հիման վրա ստորաբաժանումներին են ներկայացվել իրենց վերաբերող խնդիրները, լուծման հնարավոր ուղիները:

- ✓ «Օրգանական գյուղատնտեսություն» պիլոտային ծրագրի գնահատման համար ֆոկուս խմբային հարցումներ են իրականացվել դասախոսների, ուսանողների եւ ծրագրի պատասխանատուների հետ:
- ✓ Ասպիրանտուրայի ճկուն ուսումնական պլանների արդյունավետության գնահատման համար ֆոկուս խմբային հարցումներ են իրականացվել եւ արդյունքները ներկայացվել են գիտխորհրդի նիստին:
- ✓ Իրականացվել է «Պաշտպանված գրունտ», «Կաթ, կաթնամթերք», «Միս, մսամթերք» պիլոտային միջին մասնագիտական կրթական ծրագրերի գնահատում եւ առկա խնդիրների վերհանում:
- ✓ ԿԳՄՍՆ ներկայացնելու համար սահմանված ձեւաչափով տեղեկատվություն է հավաքվել ՀԱԱՀ հիմնադրամում աշխատող պրոֆեսորադասախոսական կազմի եւ ռեսուրսային ապահովության վերաբերյալ:

Լրամշակվել եւ ներկայացվել են ՈԳԱ կենտրոնի աշխատակիցների պաշտոնի անձնագրերը: Մշակվել է Որակի ապահովման ձեռնարկի 2-րդ՝ «ՀԱԱՀ որակի ապահովման քաղաքականությունը ծրագրային մակարդակում» մասը: Լրամշակվել են որակի ապահովման համակարգի մեխանիզմներն ու գործիքները: ՄԿԾ պատասխանատուների ինստիտուտի ներդրման հետ մեկտեղ աստիճանաբար իրականացվում է որակի ապահովման ցանցային համակարգի ներդնումը:

ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Գիտության ոլորտի ռեսուրսային ներուժի արդյունավետ եւ նպատակային օգտագործման, հետազոտությունների կամ դրանց բաղադրիչների չկրկնվելու նկատառումներից ելնելով՝ համալսարանի գիտահետազոտական ոլորտում 2022 թ.-ին շարունակվել են նախորդ տարի մեկնարկած կառուցվածքային բարեփոխումները: Հաշվետու տարում 2 միավորով կրճատվել է գիտական ստորաբաժանումների թիվը, դրա հետ մեկտեղ պահպանվել են գիտական բոլոր ուղղությունները:

«Ա պետական բյուջեից գիտական, գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման գումարը 2022 թ.-ին էականորեն՝ 53 տոկոսով ավելացել է եւ կազմել է 336.2 մլն դրամ: Ֆինանսավորման նման աճը գլխավորապես պայմանավորված է հաշվետու տարում գիտական աշխատողների վարձատրության դրույքաչափերի ավելացմամբ, ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանին նախորդող տարում ֆինանսավորման 7 տոկոսով կրճատումը վերականգնելով: Ամբողջ ծավալով իրականացվել են գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման 8 ծրագրերը: Վերջինները իրականացվել են 3 գիտական կենտրոն մասնաճյուղերի, 2 գիտահետազոտական ինստիտուտների եւ 3 հետազոտական կենտրոնների միջոցով:

2022 թ.-ին շարունակվել է 4 միջազգային գիտական թեմա, 2 գիտական թեմա միջազգային համաֆինանսավորմամբ: 2022 թ.-ին համալսարանը շարունակել է նախորդ տարում շահած դրամաշնորհային 16 ծրագրերը (ընդհանուր բյուջեն **422 մլն դրամ**): Նշված ծրագրերից 15-ը շարունակվելու են նաեւ 2023 թ.-ին, որից 8 ծրագիրը՝ նաեւ 2024 թ.-ին: Բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարության կողմից շնորհված 1 թեմա (Գաղափարից դեպի բիզնես, 10 մլն դրամ) հաշվետու տարում հաջողությամբ ավարտվել է:

2022 թ.-ին արդյունավետորեն իրականացվել են մի շարք միջազգային գիտական ծրագրեր:

Իրականացված կարելուր գիտական ծրագրերից է **«Հյուսիսային Կովկասում զոոնոտիկ ինֆեկցիաների քարտեզագրում»** ծրագիրը: Իրականացվել է ԱՄՆ Ռազմական սպառնալիքների կրճատման գործակալության ֆինանսական աջակցությամբ: Ծրագրին Հայաստանի հետ համատեղ մասնակցել են Վրաստանը, ԱՄՆ-ն եւ Ֆրանսիան: Ծրագրի արդյունքների կիրառումը հնարավորություն կապահովի զոոնոտիկ հիվանդությունների կանխարգելման միջոցառումների մշակման համար:

2022 թ.-ին բարեհաջող ընթացք է ունեցել **«Ուղղորդված պրոբիոտիկներ ակվակուլտուրաների համար»** ծրագիրը: Իրականացվել է Ռուսաստանի Դաշնության եւ Ուզբեկստանի գիտական կառույցների հետ: Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են ռուսական, հայկական եւ ուզբեկական գիտական խմբերի պրոբիոտիկ հավաքածուի բոլոր շտամների անտագոնիստական ակտիվությունը, ինչպես նաեւ հակաօքսիդանտ եւ հակամուտագեն հատկությունները: Տրվել է ձկների լակտոբակիցների եւ E. coli բակտերիաների ազդեցացիա առաջացնելու հատկության նկարագիրը: Հետաքրքրական է այն փաստը, որ L. plantarum zpz շտամը ցուցաբերում է ավելի բարձր հակաօքսիդանտային ակտիվություն, քան ստուգիչ հակաօքսիդանտ տոկոֆերոլը: Հետազոտությունների արդյունքներով կներկայացվի ակվակուլտուրաների պահպանությանը եւ պաշտպանությանն ուղղված կարելուր միջոցառումներ:

Հաշվետու ժամանակահատվածում եզրափակվող միջազգային կարելու ծրագրերից է «**Հացահատիկի ենթահամալիրի զարգացման հեռանկարները եւ արտադրության ծավալների հիմնավորումը հայ-ռուսական առետրատնտեսական հարաբերությունների համատեքստում**» ծրագիրը, որի արդյունքները կարելու են համարվում երկրի հացահատիկային տնտեսության զարգացման եւ որպես արդյունք՝ պարենային անվտանգության հիմնախնդրի լուծման ուղղությամբ:

2022 թ.-ին հաջողությամբ ընթացել է հաշվետու ժամանակահատվածին նախորդող տարում մեկնարկած «**Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիաներ՝ ձկների եւ ընտանի թռչունների ջերմային սթրեսի կարգավորումը**» առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեման, որն իրականացվելու է նաև հետագա 4 տարիների ընթացքում, եւ նախատեսված է համագործակցություն ԱՄՆ-ի համապատասխան գիտական կառույցների հետ: Ծրագիրն առնչվում է գլոբալ տաքացման հիմնախնդրին: Հետազոտությունների միջոցով նախատեսվում է առաջարկների համակարգի մշակում՝ ուղղված գյուղատնտեսական կենդանիների ջերմադիմադրողականության բարձրացմանը: Մասնավորապես հաշվետու ժամանակահատվածում աշխատանքները վերաբերել են ձկների աղիքային բակտերիաների տարբեր հատկությունների միջուկորեյատիվ կապերի ուսումնասիրությանը: Հետաքրքիր է, որ *Salmo ischchan*-ի համար ձկան աղիքային լակտոբացիլների մեկուսացումները տարբերվում էին ոչ ձկան լակտոբացիլներից իրենց աուտո-ագրեգացիա եւ կենսաֆիլմ առաջացնելու հատկություն ասոցիացիայով: Նաև, ծրագրի շրջանակում ցույց է տրվել, որ աճման միջավայրերի ազդեցությունը ուսումնասիրվող բակտերիաների թաղանթային հատկությունների վրա յուրաքանչյուր շտամի համար առանձնահատուկ է (շտամ-սպեցիֆիկ է): Որպես հետազոտությունների արդյունք՝ նախատեսվում է առաջարկների համակարգի մշակում՝ ուղղված գյուղատնտեսական կենդանիների ջերմադիմադրողականության բարձրացմանը:


Հաշվետու տարում ՀՀ գիտության կոմիտեի կողմից հայտարարված Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակում «ՀՀ գիտական համայնքին արտերկրի գիտնականներին ինտեգրման աջակցության ծրագրի» միջազգային մրցույթի արդյունքներով համալսարանի ներկայացուցիչը հաղթող է ճանաչվել «**Կլիմայի փոփոխության ազդեցությունը Հայաստանում. բույսերի կենսաբազմազանության ուսումնասիրության ամբողջական մոտեցում**» անվանումով թեման:

Հաշվետու տարում ՀՀ գիտության կոմիտեի Փորձարարական մշակումների նախագծերի հայտերի ընտրության մրցույթին է ներկայացվել 1 եւ Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում Երկակի նշանակության ծրագրերի աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթին՝ 2 հայտ:

Միջազգային ծրագրերի իրականացման միջոցով համալսարանը հնարավորություն է ունենում համագործակցել ոչ միայն ԵԱՏՄ, ԱՊՀ եւ այլ հետխորհրդային երկրների, այլև Ճապոնիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի գիտական կենտրոնների հետ:

Շարունակվել են աշխատանքները երոպական այլ երկրների գիտական կառույցների հետ համագործակցության ձեւավորման եւ զարգացման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է գիտական հրապարակումների ակտիվացումը, հրապարակված գիտական աշխատանքների թիվը 2022 թ.-ին կազմել է 281 (46.3 տոկոս աճ), որից 118-ը (28.3 տոկոս աճ)՝ արտերկրի գիտական պարբերականներում, այդ թվում՝ 39-ը բարձր ազդեցության գործոն ունեցող պարբերականներում՝ 2021 թ.-ի 25 հրապարակման դիմաց:




Գծապատկեր 6: Գիտական հրապարակումներ

2022 թ.-ին շարունակվել է նաև պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական գործունեության խթանման գործընթացը: ՀԱԱՀ գիտական խորհրդի 2021 թ.-ի մարտի 15-ի նիստով լրավճարների գումարի չափերը բարձրացվել էին: Բացի այդ 2022 թ.-ի դեկտեմբերի 27-ին ՀԱԱՀ ռեկտորատի նիստում ընդունվել է տվյալ կարգում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու որոշում, որով բարձր վարկանիշ ունեցող միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված պարբերականներում հրապարակված հոդվածների եւ մենագրությունների համար սահմանվել է անհամեմատ մեծ լրավճար եւ այն տարբերակվել է ըստ քառորդների: Բացի այդ, բարձր վարկանիշ ունեցող հրապարակումների համար պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ մեկտեղ լրավճարից կարող է օգտվել նաև գիտական անձնակազմը:

2022 թ.-ին ընդունվել է 109 գիտական աշխատանք, եւ 96 հեղինակներին վճարվել է 4.8 մլն դրամ լրավճար, նախորդ տարվա 5.4 մլն դրամի դիմաց:


Պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական գործունեության խրախուսման գործընթացի մասին պատկերացում է տալիս ստորեւ ներկայացվող գծապատկերը:



Գծապատկեր 7: Պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական գործունեության խրախուսման գործընթացի վիճակը

Նախորդ տարվա լրավճարի գումարը հաշվետու տարվա գումարից 13.1 տոկոսով ավելի լինելը գլխավորապես պայմանավորված է 2021 թ.-ին 16 դրամաշնորհային ծրագրեր շահելու համար տրամադրված լրավճարներով: Այդ դրամաշնորհային ծրագրերը շարունակվելու են 2023-2024 թթ.:

Եթե դիտարկում ենք միայն գիտական հրապարակումները, ապա ինչպես հրապարակումների թվի, այնպես էլ տրամադրված լրավճարի առումով պատկերը միանգամայն այլ է, որը ակնհայտ է ներկայացվող գծապատկերից:




Գծապատկեր 8: Պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական հրապարակումների խրախուսման գործընթացի վիճակը

Հաշվետու տարում համալսարանը գիտության բնագավառում անցում է կատարել գիտական աշխատողների վարձատրության նոր բարձրացված դրույքաչափերի, որի համար ելակետ է հանդիսացել գիտաշխատողների որակավորման 2021 թ.-ին իրականացված գործընթացը:

Գիտության ոլորտում ենթակառուցվածքների, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթում

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը 2022 թ. շահել է 14.4 մլն դրամ, նախորդ տարվա 30.3 մլն դրամի դիմաց:



Գծապատկեր 9. Գիտության ոլորտում նյութատեխնիկական բազայի արդիականացման ֆինանսական աջակցության ծավալները

Նախապատրաստվում են նոր հայտեր հաշվետու տարեվերջին ՀՀ գիտության կոմիտեի կողմից հայտարարված մրցույթին մասնակցության համար:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԵՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ
2022 թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ազգային ագրարային համալսարանի համակարգում գիտահետազոտական աշխատանքները հիմնականում իրականացվել են 3 գիտական կենտրոնների, 2 գիտահետազոտական ինստիտուտների եւ 3 հետազոտական կենտրոնների միջոցով:

Աղյուսակ 2

Հ/հ	Գիտական կազմակերպություններ եւ ստորաբաժանումներ	ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորումը, հազ. դրամ	Հաստիքային միավորներ	Կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը	Հրատարակված հոդվածների թիվը (տեղական/արտերկրի)	Գիտաժողովներին մասնակցություն (տեղական/արտերկրի)
1	2	3	4	5	6	7
ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ						
1	ԱԳՐՈԿԵՆՍԱՏԵՆՆՈԼՈԳԻԱՅԻ	62342.9	26.25	<p>Կենսատեխնոլոգիական մեթոդներով մշակաբույսերի բազմացում</p> <p>Կարտոֆիլի 12 սորտերի, պտղատուների Վավիտա եւ էվրիկա սորտ պատվաստակալների, մոռենու, հապալասի, խուլորձի երկուական, Իրգայի (Shadbush (Amelanchier)), կալինկայի (Viburnum opulus), վերբենայի (Verbéna) մեկական, անփուշ մոշի 4 սորտերի, խնկենիի մեկ տեսակի (Pistácia atlantica) համար մշակվել են ռեգեներացիայի, միկրոցողունների բազմապատկման եւ in vitro արմատագոյացման տեխնոլոգիաներ:</p> <p>Գյուղատնտեսական (կարտոֆիլ, անփուշ մոշ, մոռ, կիվի, ունաբ, խաղող, խաղողի ֆիլոքսերադիմացկուն սորտի պատվաստակալներ, ելակ, ստախիս եւ այլն), դեկորատիվ, ծաղկային եւ դեղատու, եթերայուղատու տարբեր բույսերի միկրոբուսակները, որոնք առկա են in vitro գենբանկում, կտրոնավորվել են, դրանց in vitro պահպանության ժամկետների երկարացման նպատակով իրակա-</p>	13 (7/6)	5(0/5)

			<p>նացվել են փորձարկումներ ի հաշիվ արտաքին ռեժիմի եւ սննդարար միջավայրի բաղադրության փոփոխությունների: Շարունակվել են կարտոֆիլի 8 սորտի աղակայուն ձեւերի in vitro ընտրության ուղղությամբ աշխատանքները: Մոշի (սորստ՝ ֆրիդոմ), ելակի, ստեփայի երկուական սորտի մի քանի տասնյակ բույսեր ադապտացվել են տարբեր տեխնոլոգիաների կիրառմամբ, ուսումնասիրվել են դրանց աճի եւ զարգացման օրինաչափությունները նաեւ դաշտային պայմաններում:</p> <p>Միկրոկտրոնավորվել է մոշի 3000-ից ավելի բույս եւ կարտոֆիլի շուրջ 3500 բուսակ:</p> <p>Շարունակվել է համագործակցությունը տեղական եւ արտասահմանյան մի շարք գիտական կազմակերպությունների հետ.</p> <p>«Հայաստանի խաղողագործության եւ գինեգործության» հիմնադրամի հետ համագործակցության հուշագրի շրջանակում իրականացվել է խաղողի տեղական 9 սորտերի վիրուսազերծ տնկանյութի բազմացման եւ երկու սորտի ադապտացման աշխատանքներ:</p> <p>ՀԱԱՀ-ի «Ոսկեհատի խաղողագինեգործության գիտական կենտրոն» մասնաճյուղի մասնագետների հետ իրականացվել են խաղողի մեկ սորտի in vitro բույսերի ադապտացիայի ուղղությամբ աշխատանքները:</p> <p>ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի մասնագետների օժանդակությամբ ձեռք է բերվել եւ արդեն in vitro ռեգեներացվել է Հիրիկ նրբագեղ (<i>Iris elegantissima</i>) տեսակից բուսական հյուսվածք, ռեգեներացվել եւ միկրոբազմացման փուլում է գտնվում նաեւ կեչու (<i>Bétula</i>) եւ իրանական նուշի (<i>Prunus dulcis</i>) մեկական սորտ:</p> <p>Շարունակվել է մասնակցությունը «խաղողի անտեսված գենետիկական ռեսուրսների ուսումնասիրություն խաղողագործության կայունությունը բարձրացնելու նպատակով (ENGGRIViSu)» ծրագրին, որն իրականացվում է Իսպանիայի «խաղողագործության եւ գինեգործության» ինստիտուտի հետ համատեղ:</p> <p>Ռուսաստանի Դաշնության Բիոքիմիական ֆիզիկայի ինստիտուտի</p>		
--	--	--	---	--	--

			<p>մասնագետների հետ համատեղ մի շարք բույսերի in vitro աճի եւ զարգացման վրա շարունակվել են ջրածնի պերօքսիդի, մելանինի եւ դրոմենի ազդեցության փորձարկումները:</p> <p>«Կուրչատովի ինստիտուտ» ռուսաստանյան ազգային գիտահետազոտական կենտրոնի հետ համատեղ շարունակվել են գիտական փորձարկումները՝ բույսերի in vitro ծաղկման առանձնահատկությունների ուսումնասիրման ուղղությամբ:</p> <p>Մշակաբույսերի եւ դրանց վայրի ազգակիցների ազգային գենբանկ</p> <p>Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են հետեւյալ աշխատանքները.</p> <p>Արշավախմբային ուսումնասիրություններ</p> <p>Սերմային նմուշների հավաքածոն հարստացնելու, ինչպես նաեւ մշակաբույսերի վայրի ազգակիցների տարածման արեալներում մշտադիտարկման իրականացման նպատակով կատարվել են արշավախմբային ուսումնասիրություններ ՀՀ-ի 3 ֆլորիստիկական շրջանների 6 մարզերում:</p> <p>Արշավախմբային ուսումնասիրությունների ընթացքում կատարվել է տարբեր բույսերի հասկերի, հասկիկների, սերմերի եւ պտուղների, վեգետատիվ օրգանների ու հերբարիումային նմուշների հավաք, կատարվել է նաեւ տարածման արեալների մշտադիտարկում, դաշտային պայմաններում տեսակային կազմի ճշտում, բուսական համակեցությունների առկա վիճակի նկարագրում:</p> <p>Շիրակի եւ Գեղարքունիքի մարզերից հավաքվել են պտղահատապտղային բույսեր եւ պտուղներ (ալոճենի, մասրենի, տանձենի եւ այլն):</p> <p>Արշավախմբային ուսումնասիրությունների ընթացքում հավաքված բոլոր նմուշները լաբորատոր պայմաններում չորացվել են, որոշվել է դրանց կարգաբանական պատկանելությունը (ընտանիք, ցեղ, տեսակ, ենթատեսակ): 286 նմուշ դրվելու է երկարաժամկետ (-18°C) պահպանության:</p> <p>Գենբանկի հերբարիումային հավաքածոն հարստացել է 32 թերթ</p>		
--	--	--	---	--	--

			<p>հերբարիումով, իսկ սերմային հավաքածոն՝ 36 տեսակի 285 նմուշներով, որոնք պատկանում են 23 ցեղերի 7 ընտանիքի:</p> <p>Շարունակվում է սերմային հավաքածոի (ex situ) նմուշների թվայնացման գործընթացը: Ներկայումս Ազգային գենբանկում պահպանվող նմուշների ընդհանուր քանակը կազմում է մոտ 8000 սերմային նմուշ, որից 2247-ը դրված է երկարաժամկետ պահպանության: Գենբանկում առկա է նաեւ 1532 թերթ հերբարիում: 6084 սերմային նմուշների տվյալները մուտքագրվել է GBIF համակարգում:</p> <p>Դաշտային աշխատանքներ</p> <p>Մարտ-մայիս ամիսներին աշնան ցանքերում կատարվել են ֆենոլոգիական դիտումներ եւ խնամքի աշխատանքներ: Մարտի 24-ին բազմացման նպատակով կատարվել է գարու հեռանկարային սորտանմուշի ցանք: Հունիսի 15-ից 21-ը պարբերաբար (ըստ հասունացման աստիճանի) կատարվել է գարու, հաճարի, ցորենաշորայի, ինչպես նաեւ ցորենի տեղական հինավուրց սորտերի բերքահավաք:</p> <p>Հավաքված նմուշները մշակվել եւ նախապատրաստվել են երկարաժամկետ պահպանության համար:</p> <p>Շարունակվում են բանջարային նշանակության որոշ բույսերի մշակության մեջ ներդնելու աշխատանքները:</p> <p>Էկոլոգիա եւ օրգանական գյուղատնտեսություն</p> <p>Ուսումնասիրությունները շարունակվել են «Ակվասորս» եւ «Ակվապերլա» ջրային գելերի ջրակլանման հատկությունների պարզաբանման նպատակով: Նշված ջրային գելերի տարբեր չափաքանակների կիրառմամբ փորձարկումները շարունակվում են մարգագետնային գորշ ոռոգելի հողերի օրինակով, կշռային մեթոդով որոշվում է դրանց դաշտային սահմանային խոնավունակությունը:</p> <p>Հարդյունս լաբորատոր փորձերի ամփոփման, ընտրվել է «Ակվասորս» ջրակլանող գելը, հաշվի առնելով տվյալ նյութի առավել բարձր ջրակլանողականության հատկությունը: Ավարտվել են բուսաճային (վեգետացիոն) պայմաններում փորձարկումները:</p> <p>Շարունակվում են Պերուից ներկրված քինուայի (սագախոտի) 4 սարտերի դաշտային փորձարկումները՝ Արարատյան դաշտի պայման-</p>		
--	--	--	---	--	--

			<p>ներում դրանց հարմարվողականության գնահատման նպատակով:</p> <p>Ուսումնասիրություններ են իրականացվել դաշտապաշտպան անտառաշերտերի գնահատման վերաբերյալ, հարակից տարածքների ագրոէկոհամակարգերի էկոլոգիական և արտադրական կայունության վրա</p> <p>Կենսաբանական հետազոտությունների լաբորատորիա</p> <p>Իրականացվել է հացաբույսերի – Դաշտավուկազգիների (Հացազգիներ) – Poaceae ընտանիքին և բանջարային բուսատեսակների պոլիակրիլամիդային գելի վրա ուղղահայաց էլեկտրոֆորեզի միջոցով սպիտակուցների՝ գլյուտենինի, գլիադինի և գլոբուլինների ուսումնասիրություններ:</p> <p>Պոլիմորֆ սպիտակուցները որպես գենետիկական մարկերներ ծառայում են բույսերի բերքատվության, հիվանդությունների նկատմամբ դիմադրողականության բարձրացման ուղղությամբ կատարվող սելեկցիոն աշխատանքներում:</p> <p>Այդ տեսանկյունից հացազգիների սաղմում գտնվող գլիադինի լոկուսի ուսումնասիրությունը հստակեցում կմտցնի ուսումնասիրվող սորտերի և վայրի տեսակների ալելոֆոնդերի և գենոտիպերի, հոմոզիգոտության և հետերոզիգոտության աստիճանի, գենետիկական նմանության ասպեկտներում:</p> <p>Հացազգիների ուսումնասիրված սորտերի և վայրի ազգակիցների ըստ սպիտակուցային մարկերների գենոմային վերլուծությունը հնարավորություն է տվել կատարել եզրակացություններ:</p> <p>Հետազոտությունների արդյունքների հիման վրա կմշակվեն կոնկրետ բուսատեսակներին պատկանող վերոնշյալ ձեռքերի գենետիկական մարկերներ՝ հաշվի առնելով դրանց կողմից մի շարք օգտակար և կարեւոր տնտեսական հատկանիշների (բերքատվություն, վաղահասություն, բնական միջավայրի անբարենպաստ պայմանների նկատմամբ դիմացկունություն, չորա- և երաշտադիմացկունություն, ցրտադիմացկունություն, վնասատուների և հիվանդությունների նկատմամբ դիմակայունություն և այլն) ժառանգման հարցերի պարզաբանման, հատկանիշների դրսևորման, քանակա-</p>		
--	--	--	--	--	--

			<p>կան հատկանիշների (QTL գեներ), լոկուսների բացահայտման նպատակով:</p> <p>ԳԿ-ի աշխատակիցները 2022 թ.-ին հրատարակել են.</p> <p>1 մենագրություն, 13 գիտական հոդված, որից 6-ը միջազգային, այդ թվում՝ մեկական Q1 եւ Q2, ինչպես նաեւ 3 թեզիս, իսկ 10 հոդված գտնվում է հրատարակման փուլում:</p> <p>Մասնակցություն 5 գիտաժողովների:</p> <p style="text-align: center;">Ազրոկենսատեխնոլոգիայի ԳԿ-ում իրականացվող դրամաշնորհային ծրագրեր</p> <p>AgriCamp-ի հովանավորությամբ իրականացվում են ուսանողական երկու ծրագրեր.</p> <p>1.«Կարտոֆիլի տնկանյութի աճեցման գործընթացում լույսի գործոնի ազդեցությունը in vitro բուսակների աճի ու զարգացման գործընթացների վրա ֆիտոտրոնի պայմաններում».</p> <p>2.«Պատրինջի in vitro բազմացումը».</p> <p>3.«Հասկավոր հացաբույսերի (գարի, հաճար, ցորենաշորա) նոր սորտերի մշակության արդյունավետության գնահատումը կանաչ գյուղատնտեսությունում».</p> <p>4. «Բույսերի գենոտիպի պահպանություն ԴՆԹ-բանկի ստեղծմամբ».</p> <p>5. «Կլիմայի գլոբալ փոփոխությունների պայմաններում ՀՀ արիդ եւ սեմիարիդ տարածաշրջանների բնական կերահանդակների խոցելիության գնահատում եւ դրանց կառավարման վերաբերյալ միջոցառումների մշակում».</p> <p>6. «Հայաստանի խաղողի գենետիկական ռեսուրսների in vitro վիրուսազերծ հավաքածոի ստեղծում».</p> <p>7. «Հայաստանի մշակաբույսերի կենսաբազմազանության վերականգնում եւ ապահով կրկնօրինակում Սվալբարդի սերմերի համաշխարհային պահոցում» միջազգային ծրագիր:</p>		
--	--	--	---	--	--

2	<p align="center">ՈՍԿԵՀԱՏԻ ԽԱՂՈՂԱԳԻՆԵ- ԳՈՐԾՈՒԹՅԱՆ</p>	43318.8	16.5	<p>Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներն իրականացվել են ստորեւ ներկայացվող ուղղություններով.</p> <p align="center">Խաղողագործություն</p> <p>Կատարվել է Գառան դմակ, Կախեթ, Սեւ Արենի, Հաղթանակ, Ոսկեհատ մշակածեւերի (սորտերի) կտրոնների մթերում Արագածոտնի, Արմավիրի եւ Վայոց Ձորի մարզերի փորձորոշված խաղողի վազերից:</p> <p>Կատարվել է մթերված կտրոնների կիլեցում ավանդական եղանակով եւ էլետրաարմատախթանիչ սարքով՝ կիրառելով տարբեր խթանիչներ արմատակալեցման համար:</p> <p>2022 թ. ընթացքում ցիրկոն, կորնեւին, հետերոաուքսին խթանիչների փորձարկումը շարունակվել է խաղողի Ոսկեհատ, Գառան դմակ սորտերի վրա: Խթանիչները կիրառվել են մինչեւ կիլեցումը:</p> <p>Կոլեկցիոն այգու փորձորոշման միջոցով ճանաչվել են խաղողի Չարենցի, Հաղթանակ, Սեւ Արենի, Արարատի, Այգեգարդ, Արեւվառ, Դեղին Երեւանի, Վարդագոյն Երեւանի, Սեւ Քիշմիշ, Մարմարի, Երասխենի, Ներկառատ, Իծապտուկ, Սեւ Սաթենի եւ այլ սորտեր:</p> <p>Կատարվել է որոշ սորտերի քանակական եւ որակական ցուցանիշների հետազոտություն, այդ թվում սեւապտուղ ցրտադիմացկուն Չարենցի սորտի: Արդյունքներից պարզվել է, որ Չարենցի սորտն ունի տեխնոլոգիական բավարար պաշար սեղանի եւ աղանդերային գինիներ պատրաստելու համար:</p> <p>Կատարվել են ուսումնասիրություններ խաղողի տեղածին եւ սելեկցիոն սորտերի մշակության տեխնոլոգիաների վերաբերյալ, մասնավորապես բեռնվածության օպտիմալ սահմաններ, էտ, ձեւավորման համակարգեր: Հաշվետու տարում ուսումնասիրվել է նաեւ Նոնենու սորտի վազերի բեռնվածության ազդեցությունը խաղողի քանակական եւ որակական ցուցանիշների վրա: Արդյունքները գտնվում են վերլուծության փուլում:</p> <p>Խաղողագործության եւ գինեգործության բաժնի մասնագետներն իրականացրել են խորհրդատվական ծառայություններ:</p> <p>Կրթություն-գիտություն կապի ապահովման համար խաղողա-</p>	8(7/1)	1(0/1)
---	--	---------	------	--	--------	--------

			<p>գործության եւ գինեգործության բաժնում արտադրական փորձուսուցում է անցել Ագրոնոմիա, սելեկցիա, գենետիկա մասնագիտության ուսանող, որը ուսումնասիրել է Դեղին Երեւանի եւ Վարդագույն Երեւանի խաղողի սորտերը, վերջինիս արդյունքները կամփոփվեն ավարտական աշխատանքում:</p> <p style="text-align: center;">Պտղաբուծություն</p> <p>2022 թ. փետրվար-մարտ ամիսներին, պտղաբուծության բաժնի աշխատակիցների ուժերով, մթերվել եւ պահպանման է դրվել ՀՀ մարզերում 2021 թ. վեգետացիայի ընթացքում փորձորոշված ծիրանենու տեղական ծագման անհետացող 17 սորտերի ծառերից կտրոններ: Արմավիրի մարզի Լենուղի համայնքում գործող տնտեսավարողի (<Նվսեփյաններ) տնկարանում ծիրանենու 17 սորտերի կտրոններով կատարվել է 170 կտրոնապատվաստ՝ ծիրանենու սերմնաբույս պատվաստակալների վրա եւ տեղափոխվել ու վերատնկվել է ՀԱԱՀ Նալբանդյանի փորձակայանի տնկարանի ձեւավորման բաժնում՝ տնկանյութ աճեցնելու եւ կոլեկցիոն այգում համալրում կատարելու նպատակով:</p> <p>Սյունիքի մարզի Տեղ համայնքից նվիրատվությամբ ձեռք են բերվել կորիզավոր եւ հնդավոր պտղատեսակների 7 (CG 11, CG 202, P180, MM 106, M7, M9, Kolt) կլոնային պատվաստակալների 50 արմատակալներ եւ հիմնվել են որպես մայրուտային բույսեր:</p> <p>Արմավիրի մարզի Լենուղի համայնքի վերը նշված տնկարանը նվիրաբերել է կորիզավոր պտղատեսակների կլոնային պատվաստակալների (Կուբան 86, Էվրիկա) 1000 կտրոններ (<ՀԱԱՀ ջերմատանը 300 եւ Նալբանդյանի փորձակայանին՝ 700 հատ), որոնք մշակվել են աճի տարբեր խթանիչներով եւ դրվել է փորձ կտրոնների արմատակալման արդյունավետությունը, կախված աճման խթանիչից, գնահատելու համար: Բաժնի մասնագետները 2021-2022 թթ. ՀՀ մարզերի պտղատու այգիներում փորձորոշված տարբեր պտղատեսակների ծառերից, ամառային պատվաստի համար, մթերել եւ պահպանման են դրել ծիրանենու 22, դեղձենու 3, սալորենու 2, կեռասենու, խնձորենու եւ տանձենու 1-ական, տեղական ծագման</p>		
--	--	--	--	--	--

			<p>հայտնի ու անհետացող սորտերի կտրոններ: Արմավիրի մարզի Նալբանդյանի փորձակայանի տնկարանի ձեռավորման բաժնի պատվաստի դաշտի սերմնաբույս պատվաստակալների վրա կատարվել են վերը թվարկված 6 պտղատեսակների 770 պատվաստի աշխատանքներ՝ կոլեկցիոն այգում տնկանյութ աճեցնելու նպատակով:</p> <p style="text-align: center;">Գինեգործություն</p> <p>Գինու տեխնոլոգիայի բնագավառում կատարվել են հետազոտություններ նոր նյութերի (խմորասնկեր, խթանիչներ) օգտագործման եւ դրանց արդյունավետության ուղղությամբ: Փորձարկվել են կարմիր գինիների պատրաստման ընթացքում խմորման համար օգտագործվող չոր ակտիվ խմորասնկեր, խմորման խթանիչ, գույնի կայունացուցիչ՝ սելեկցիոն Տիգրանի, Կարմրահյութ, Չարենցի խաղողի սորտերի համար:</p> <p>Կատարվել է պատրաստված սեղանի գինիների ֆիզիկաքիմիական ցուցանիշների վերլուծություն եւ համտես:</p> <p>Կատարված գիտահետազոտական աշխատանքների հիման վրա տպագրվել է 8 գիտական հոդված, 1 զեկույց միջազգային գիտաժողովներում:</p>		
--	--	--	--	--	--

3	<p style="text-align: center;">Հ. ՊԵՏՐՈՍ-ՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՈՂԱ-ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԱԳՐՈ-ՔԻՄԻԱՅԻ ԵՒ ՄԵԼԻՈՐԱ-ՑԻԱՅԻ</p>	124280.8	53	<p>Հաշվետու տարում բազային ֆինանսավորման ծրագրի շրջանակում ուսումնասիրվել է և մշակվել են համալիր միջոցառումներ.</p> <p style="text-align: center;">Հողագիտություն, ագրոքիմիա, մելիորացիա, հողաշինարարություն</p> <p>Արարատյան հարթավայրի հողերի անապատացման, աղակալման եւ ալկալիացման դեմ:</p> <p>Հետազոտություններ են իրականացվել գիտական կենտրոն մասնաճյուղի Երասխահունի փորձամելիորատիվ կայանի աղուտ-ալկալի հողերում:</p> <p>Ընդհանրացվել են Հայաստանում առկա տեղական քիմիական մելիորանտների (գիպս, բարդա, էլեկտրամշակված թթու լուծույթներ եւ պիրիտ) օգտագործման հնարավորությունները Արարատյան հարթավայրի աղուտ-ալկալի հողերի բարելավման համար:</p> <p>Հետազոտվել է կոնյակագործության թափոնների օգտագործման առանձնահատկությունները գյուղատնտեսական հողերի բարելավման ոլորտում:</p> <p>ԳԿ-ում լաբորատոր պայմաններում ուսումնասիրվել է բացահայտվել են հիդրոգել պոլիմերների կիրառման օպտիմալ չափաքանակները, որոնք կնպաստեն տարբեր մեխանիկական կազմ ունեցող սովորական սեւահողերի ջրակլանման հատկությունների բարելավմանը:</p> <p>Աշխատանքներ են կատարվել երկրի հողային ծածկույթի ուսումնասիրման, դեգրադացման գործընթացների զարգացման միտումների բացահայտման, հողերի արդյունավետ օգտագործման եւ դրանց բարելավման ուղղությամբ:</p> <p>Շարունակվել են Սպիտակի հողաէրոզային համալիրում, ինչպես նաեւ Լոռու եւ Սյունիքի մարզերի ֆերմերային տնտեսություններում ամենամյա հետազոտությունները՝ էրոզացված եւ էրոզավտանգ գյուղատնտեսական հողատեսքերում դեգրադացման գործընթացների եւ կլիմայի փոփոխության ազդեցության, ինչպես նաեւ հակաէրոզային համալիր միջոցառումների կիրառման արդյունավետությունը բացահայտելու ուղղությամբ:</p>	20(14/6)	10(3/7)
---	--	----------	----	--	----------	---------

			<p>Ուսումնասիրվել են անտառային դարչնագույն հողերի էրոզիայի դեգրադացման եւ անապատացման հիմնական պատճառները, պարզվել է դրանց ագրոարտադրական հատկանիշների փոփոխությունների ուղղվածությունը եւ ինտենսիվությունը: Հետազոտության օբյեկտ են հանդիսացել Լոռու մարզի անտառային դարչնագույն հողերը:</p> <p>Բազային ֆինանսավորման ծրագրի շրջանակում գիտական կենտրոն մասնաճյուղի գիտնականները շարունակել են «Նոր բաղադրության համալիր պարարտանյութերի ստացում եւ կիրառման արդյունավետ համակարգերի մշակում ավանդական եւ օրգանական գյուղատնտեսությունում ՀՀ տարբեր բնակլիմայական պայմաններում» թեմայի աշխատանքները:</p> <p>Պեստիցիդների սինթեզ եւ փորձաքննություն</p> <p>Նպատակային սինթեզներ են իրականացվել ինչպես N,O,S-պարունակող հինգանդամանի եւ վեցանդամանի հետերոցիկլերի, այնպես էլ դրանց չկոնդենսված եւ կոնդենսված բի-, տրի- եւ տետրացիկլիկ համակարգերի ածանցյալների շարքերում: Ուսումնասիրությունները կատարվել են հետեւյալ հիմնական ուղղություններով.</p> <p>ա. Նախկինում ստացված N,S,O - պարունակող բազմատոմ հետերոցիկլիկ միացությունների ֆունկցիոնալացում:</p> <p>բ. Երկու, երեք կամ չորս տարբեր հետերոցիկլեր պարունակող չկոնդենսված եւ կոնդենսված համակարգերի նոր ածանցյալների նպատակային սինթեզներ՝ պեստիցիդային երկու հատկությունների համադրությամբ նոր պատրաստուկների հայտնաբերման ակնկալիքով:</p> <p>գ. Սինթետիկ եղանակների վերամշակում «կանաչ քիմիայի» եւ բնապահպանական պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:</p> <p>դ. Սինթեզված միացությունների նախնական լաբորատոր-վեգետացիոն փորձարկումներ, դրանցից ընտրված առավել ակտիվ նյութերի հետագա խոր ուսումնասիրությունների եւ դաշտային փորձարկումների համար:</p>		
--	--	--	---	--	--

			<p align="center">Պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրեր</p> <p>Շարունակվել են «Արտարմատային սնուցման (տերեային սնուցում) նպատակով կիրառելու համալիր պարարտանյութերի սինթեզի տեխնոլոգիա, սինթեզում եւ փորձարկում» եւ ««Սիս» կենսահումուսի տնտեսաէկոլոգիական արդյունավետությունը Հայաստանի Հանրապետության բնահողային գոտիներում» անվանումով կիրառական արդյունքի ձեռք բերմանն ուղղված թեմաների աշխատանքները (յուրաքանչյուրի ընդհանուր բյուջեն՝ 30 մլն դրամ, որից 6-ական միլիոնը համաֆինանսավորումն է (Էկո Ֆրեշ ընկերություն, Արաբական Միացյալ Էմիրություններ):</p> <p>Գիտական կենտրոնում իրականացվում է «Սինթետիկ պոլիմերների օգտագործմամբ հացահատիկի բերքատվության բարձրացման միջոցառումների համակարգի մշակում Հայաստանի Հանրապետության անջրդի երկրագործության պայմաններում» վերնագրով թեմատիկ ծրագիր:</p> <p>2022 թ. գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթի արդյունքներով ֆինանսավորման երաշխավորված շահառուների ցանկում ներառվել է գիտական կենտրոնը՝ ստանալով 8.4 մլն ՀՀ դրամ՝ հողում ազոտ որոշող սարք ձեռք բերելու նպատակով:</p> <p>Գիտական կենտրոն մասնաճյուղը մասնակցել է հաղթող է ճանաչվել UNDP-ի հայտարարած դրամաշնորհային մրցույթում՝ շահելով 20000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամաշնորհ՝ գիտական կենտրոնում առկա՝ Հայաստանի հողերի թանգարանի արդիականացման նպատակով: Վերանորոգման աշխատանքներն ավարտված են, 2023 թ.-ի առաջին եռամսյակում նախատեսվում է թանգարանի բացումը:</p> <p>Կենտրոնի երիտասարդ գիտնականների խումբը մասնակցել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից իրականացվող «100 գաղափար Հայաստանի համար» նորարարական նախագծերի եւ գիտատեխնի-</p>		
--	--	--	--	--	--

			<p>կական մշակումների մրցույթին, ներկայացնելով «Գիպսակիր հողերի բարելավման արդյունավետ մեթոդ» նախագիծը, որը հաղթող է ճանաչվել Գյուղատնտեսություն անվանակարգում:</p> <p>Գիտական կենտրոն մասնաճյուղում «Երեւանի կոնյակի գործարան» ՓԲԸ-ի հետ համատեղ կատարվում է Ներդրումային ծրագիր կոնյակի սպիրտի թորումից առաջացած թափոն բարդան գյուղատնտեսության մեջ օգտագործելու ուղղությամբ:</p> <p style="text-align: center;">Խորհրդատվություն</p> <p>Հաշվետու ժամանակահատվածում գիտական կենտրոնը երկրի գյուղատնտեսությունում տնտեսավարողներին տրամադրել է Խորհրդատվություն գյուղատնտեսական հողերի որակական կազմի գնահատման (անալիզներ) եւ հողերի բարելավման միջոցառումների ուղղությամբ: Կենտրոնում կատարվել են ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրեր: Գիտական հետազոտությունների պատվերներից ստացված ֆինանսական հոսքի ծավալը (ձեւավորված արտաբյուջետային ֆինանսավորման ծավալներ) հաշվետու ժամանակահատվածում կազմել է 126 մլն դրամ (83 պայմանագիր՝ 1794 անալիզ, 2021 թ.-ի 7.8 մլն դրամի 42 պայմանագրի եւ 1265 անալիզի դիմաց):</p> <p style="text-align: center;">Ուսումնագործնական գործունեություն</p> <p>Գիտական կենտրոն մասնաճյուղում 2022թ.-ի ընթացքում կազմակերպվել եւ անցկացվել են ՀԱԱՀ ցերեկային եւ հեռակա ուսուցման, Քոչինյանի անվ. գյուղատնտեսական քոլեջի ուսանողների ուսումնական եւ արտադրական փորձուսուցումները:</p> <p>Ագրոնոմիական ֆակուլտետի երկու ուսանող Երասխահունի փորձամեթոդատիվ կայանում ձեւակերպվել են որպես սեզոնային բանվոր՝ անցկացնելով իրենց փորձուսուցումը վարձատրվող արտադրական կիսամյակի շրջանակում:</p> <p style="text-align: center;">Գիտական հրապարակումներ եւ գիտաժողովներին մասնակցություն</p> <p>Որպես կատարած գիտահետազոտական աշխատանքների արդյունք՝ գիտական կենտրոնը հրատարակել է 20 գիտական հոդված</p>		
--	--	--	--	--	--

				<p>ՀՀ ԲՈԿ-ի կողմից ընդունելի եւ բարձր վարկանիշ ունեցող հանդեսներում, եւս 11-ը գտնվում է գրախոսման եւ հրատարակման փուլում, որից.</p> <p>Scopus եւ Web of Science շտեմարաններում՝ 6-ը, որից՝ 1-Q1, 2-Q2, 1-Q3 քառորդներով ամսագրերում:</p> <p>Տպագրվել է «Հայաստանի հողերի արդի վիճակը» խորագրով խմբային մենագրությունը, Հողում հումուսի քանակի որոշման եղանակի մշակման համար ստացել են արտոնագիր:</p> <p>Աշխատակիցները մասնակցություն են ունեցել 3 տեղական եւ 7 միջազգային գիտաժողովների:</p> <p>2022 թ.-ին 7 գիտաշխատող մասնակցել է վերապատրաստման դասընթացների:</p>		
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ						
4	ԳՅՈՒՂԱՏՆՏԵ-ՍԱԿԱՆ ՄԵՔԵ-ՆԱՅԱՑՄԱՆ ԵՒ ԱՎՏՈՄԱՏԱՑ-ՄԱՆ	31257.2	12.75	<p><u>Դաշտավարության եւ անասնապահության մեքենայացման բաժին</u></p> <p>Կենսագազային տեղակայանքի եւ կանաչ կերերի արտադրամասի համակցված (համատեղ գործող) համակարգ ենթաթեմա</p> <p>Նախատեսված է եղել երեք տարվա ընթացքում (2020-2022 թթ.) իրականացնել գոմաղբի անաերոբ մշակման կենսագազային տեղակայանքի եւ հիդրոպոնիկ եղանակով գործող կանաչ կերերի արտադրամասի համատեղ աշխատանքը՝ համակցված համակարգում:</p> <p>Նախագծված եւ պատրաստված 500 լ տարողությամբ մեթանտենկով կենսագազային տեղակայանքը նախատեսված է անաերոբ եղանակով, ցամքարով գոմաղբի կիրառմամբ կենսագազի ստացման համար, լրամշակված են ցամքարից զտման հանգույցները, համալրվել են հումքի աշխատանքային նորմալ շրջափուլը ապահովող սարքավորումներով, հիմնավորվել են արդյունավետ աշխատանքի համար ջրիկ հումքի օրական բաժնեմասերը եւ այլն: Առաջարկվող կենսագազային տեղակայանքը հնարավորություն է տալիս ցամքարով</p>	9(8/1)	

			<p>գոմադրից ստանալ կենսագազ եւ օրգանական պարարտանյութ:</p> <p>Հիմնավորվել են համատեղ գործող կենսագազային տեղակայանքի եւ կանաչ կերի արտադրամասի կառուցվածքա-շահագործական պարամետրերը՝ կախված գոմադրի ելքից եւ տեխնոլոգիատնտեսական պահանջներից: Ընտրվել են մեթանտենկի ու կանաչ կերի արտադրամասի տաքացման համակարգի կառուցվածքն ու աշխատանքի սկզբունքը:</p> <p>Լաբորատոր պայմաններում փորձարկվել են եւ՝ մեթանտենկը, եւ՝ ջրատաքացուցիչ կաթսան:</p> <p>Լեռնային երկրագործությունում հողի մշակման էներգախնայող տեխնոլոգիայի եւ լիակատար ագրեգատի մշակում եւ ներդնում ենթաթեմա</p> <p>Ենթաթեմայի շրջանակում մշակվել է լեռնային երկրագործությունում հողի մշակման լիակատար մեքենայի տեխնոլոգիական սխեմա եւ որոշվել կինեմատիկական եւ երկրաչափական պարամետրերը, որի արդյունքով պատրաստվել է լանջերի հողի մշակման լիակատար մեքենայի փորձանմուշ եւ այդ փորձանմուշի փորձարկում << լեռնային երկրագործության պայմաններում եւ տեխնիկա-շահագործական ցուցանիշների հիմնավորում:</p> <p>Տեսական հետազոտություններով լանջի փխրեցվող շերտի ջրակայունությունն ապահովելու եւ հողի էրոզիան կանխարգելելու նպատակով առաջարկված է լանջերի շերտավոր մշակման կոմբինացված փխրիչ – ագրեգատի տեխնոլոգիական սխեմա:</p> <p>Աշխատանքի ժամանակ լանջերի մշակման կոմբինացված ագրեգատն իրականացնում է հողի երկշերտ փխրեցում: Վերելի շերտը՝ 8-12 սմ, ներքելի շերտը՝ 30-35 սմ խորությամբ, ձեւավորելով միմյանցից որոշակի հեռավորության վրա V-աձեւ ջրակուտակիչ տարողություններ:</p> <p>Հաշվարկային պարամետրերով պատրաստվել են հողի մշակման լիակատար մեքենայի բանող օրգանները եւ դրանք տեղակայելով ՊՖ-3.6 ճակատային գութանի շրջանակի վրա, իրականացվել են արտադրական փորձարկումներ Արագածոտն մարզի Հնաբերդ գյուղի եւ</p>		
--	--	--	--	--	--

			<p>«Արագածի բերրիություն» ՓԲԸ-ի դաշտերում՝ ագրեգատավորելով S-150Կ տրակտորի հետ:</p> <p>Սխտորացան մեքենայի ցանիչ ապարատի կառուցվածքային մշակում ենթաթեմա</p> <p>Թեմայի շրջանակում տեսա-գործնական հետազոտությունների արդյունքներով հիմնավորվել է սխտորացան մեքենայի ցանող ապարատի կառուցվածքի մշակման արդիականությունը, գիտատեխնիկական գրականության ակնարկի տվյալներով ուսումնասիրվել է գոյություն ունեցող սխտորացան մեքենաների եւ դրանց ցանող ապարատների աշխատանքի սկզբունքն ու կառուցվածքա-տեխնոլոգիական պարամետրերը, բացահայտվել են դրանցում առկա թերությունները:</p> <p>Թեմայի ակնկալվող արդյունքը նախատեսվում է կիրառել բանջարաբուծական գոտիներում սխտորի մշակության համակարգի առավել էներգատար եւ տեխնիկական առումով դժվար իրագործելի՝ ցանքի տեխնոլոգիական գործընթացի մեքենայացման մեջ:</p> <p>Սխտորացան մեքենաների պճեղահան ապարատի անկանոն բեռնավորման հետեւանքով ցանքսի որակի վրա բացասական ազդեցության նվազեցման նպատակով մշակվել է սխտորացան մեքենայի պճեղահան բաշխիչ ապարատ, ժապավենային-գծային, որի առանձնահատկությունը վերջինիս ընդունիչ օրգանների պճեղներով լցման երաշխավորված բարձր հավանականությունն է, որի շնորհիվ այն զերծ կլինի նշված մեքենաներին հատուկ կառուցվածքա-տեխնոլոգիական թերություններից, կապահովի ագրոտեխնիկական պահանջներին համապատասխան տեխնոլոգիական գործընթաց:</p> <p>Որոշվել են ապարատի միավոր բունկերի տեղակայման գծային չափսերը այն հաշվով, որ հնարավոր լինի կազմավորել տարբեր քանակի պճեղահան ապարատներով սխտորացան մեքենաներ:</p>		
			<p><u>Ավտոմոբիլային փոխադրումների բաժին</u></p> <p>Գազաբալոնային ավտոմոբիլների անվտանգության տեխնոլոգիական համակարգերի մշակման եւ ներդրման ծրագիրը ընդգրկում է հետեւյալ ենթաբաժինները՝</p> <ul style="list-style-type: none"> • Արդեն առկա անվտանգության համակարգի եւ դրան ներկա- 	<p>3(2/1)</p>	

			<p>յացվող անվտանգության պահանջների վերլուծում եւ լավարկում:</p> <ul style="list-style-type: none"> • Գազաբալոնային ավտոմոբիլի անվտանգության նոր համակարգերի մշակում եւ շահագործման կանոնների վերլուծում: Գազի հոսքը բացահայտող նոր սարքերի վերլուծությունից կատարվել են հետեւյալ եզրակացությունները. <ol style="list-style-type: none"> 1. Առկա համակարգի աշխատունակությունը չի սահմանափակվում գոյություն ունեցող որեւէ սերնդի գազաբալոնային համակարգի կիրառման համար: 2. Գոյություն ունեցող համակարգը, որպէս ապրանքային նմուշ իր կառուցվածքային եւ աշխատանքային չափորոշիչներով հնարավորություն է ընձեռում վերջինիս, որպէս գազաբալոնային ավտոմոբիլների սնման համակարգի բաղկացուցիչ մաս, օգտագործել գազանման վառելիքներով շահագործվող ավտոմոբիլային տրանսպորտում: 3. Ավտոմոբիլային գազաբալոնային համակարգերի ներդրումը պահանջում է առկա իրավական ակտերի բարելավում եւ կատարելագործում, տրվել են այդ բնագավառում խնդիրները եւ վերջիններիս լուծման մոտեցումները: <p>Գազաբալոնային ավտոմոբիլների շահագործման անվտանգության ապահովման համակարգի լավարկում ենթաբաժնում կատարվել են հետեւյալ աշխատանքները:</p> <p>Լավարկվել է գազաբալոնային ավտոմոբիլների շահագործման անվտանգության ապահովման առկա համակարգի սխեման, տրվել են կառուցվածքը եւ աշխատանքային գործընթացի նկարագրությունը:</p> <p>Նախապատրաստական աշխատանքներ են կատարվել համակարգը տրանսպորտային միջոցի վրա տեղակայելու գործընթացի եւ վերջինիս, որպէս հայեցակարգ, տրանսպորտային միջոցում շահագործման ապահովման ու գնահատման ուղղությամբ:</p> <p>Մշակվել է թվային տեխնոլոգիաներով էլեկտրոնային կառավարման համակարգ, որը հնարավորություն է տալիս ավտոմատացնել մշակված գազային համակցված սնման համակարգի աշխատանքը:</p> <p>Մշակվել է գազաբալոնային ավտոմոբիլների շահագործման անվտանգության ապահովման համակարգ, տալով կառուցվածքի</p>		
--	--	--	--	--	--

				<p>սխեման եւ աշխատանքային գործընթացի նկարագրությունը (վերջինիս համար հեղինակները ստացել են արտոնագիր):</p> <p>Առաջարկվող համակարգի օգնությամբ հնրավորություն է ստեղծվում ավտոմոբիլի վթարի ժամանակ գազի հնարավոր արտահոսքի իսպառ դադարեցումը, որի շնորհիվ կբարձրանա հետվթարային անվտանգությունը:</p> <p>Մշակվել են գազաբալոնային ավտոմոբիլի անվտանգ սնման համակարգի լաբորատոր եւ շահագործական փորձարկման մեթոդաբանություններ, տալով փորձարկումների ժամանակ անվտանգության տեխնիկայի պահպանման կանոնները: Մշակվել է գազաբալոնային ավտոմոբիլի անվտանգ սնման համակարգի փորձարկման աշխատանքային համակարգը:</p>		
5	ՄՆՆԴԱԳԻՏՈՒԹՅԱՆ եւ ԿԵՆՍԱՏԵԽՆՈՒԼՈԳԻԱՆԵՐԻ	33427.0	12.5	<p><u>Մննդի անվտանգության եւ կենսատեխնոլոգիայի բաժին</u></p> <p>2022 թ. գիտահետազոտական աշխատանքների հիմնական նպատակը բակտերիա – տեր (ձուկ) փոխազդեցությունների գնահատումն է՝ ձկնաբուծարաններում ձկների համար առողջ միջավայրի հաստատման համար: Այս նպատակի համար հետազոտվել են տեղական տարբեր ձկնաբուծարաններից պատահականորեն ընտրված 51 արու <i>Salmo ischchan aestivalis</i> եւ 47 արու <i>Salmo ischchan gegarkuni</i> ձկների գերակշռող կուլտիվացվող աղիքային անջատուկները:</p> <p>Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ձկների աղիքային միկրոբիոտայի գերակշռող բակտերիաներն ունեն յուրահատուկ, ցամաքում ապրող կենդանիների միկրոբիոտայից տարբերվող թաղանթային կենսաֆիզիկական հատկություններ: Ջրային, մասնավորապես ձկների, աղիքային միկրոբիոտայի տարբերությունները ցամաքում ապրող կենդանիներից բացատրվում են ցամաքային եւ ջրային կենդանիների կենսակերպով: Աղիքային միկրոբիոտայի բակտերիաների հայտնաբերված տարբերությունները գերակշռող բակտերիաների ֆիզիկա-քիմիական առանձնահատկություններում փորձնականորեն հաստատված է նաեւ «21AG-4D065; Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիաներ՝ ջերմային սթրեսի կարգավորումը ձկների եւ ընտանի թռչունների մոտ» թեմայի շրջանակում, վկայում են, որ</p>	14 (1/13)	7(1/6)

			<p>ձկների համար պետք է օգտագործել ցամաքայինից տարբեր, նպատակային հատկություններով պրոբիոտիկներ:</p> <p>Հաշվետու ժամանակահատվածում բաժնի աշխատակիցների կողմից շարունակվել են նաեւ գիտահետազոտական աշխատանքները միջազգային երկու ծրագրերով՝ «Հյուսիսային Կովկասում զոոնոտիկ ինֆեկցիաների ատլասի նախապատրաստում» եւ «Ուղղորդված պրոբիոտիկներ ջրային կամ ակվակուլտուրաների համար»: Բացի հոդվածների տպագրությունից, բաժնի աշխատակիցները ներկայացրել են միջազգային ֆինանսավորման երկու առաջարկ եւ մասնակցել, հաղթել են միջազգային խորհրդաժողովներին մասնակցելու 3 մրցույթներում /IHMC 9th CONGRESS 2022 KOBE, Ճապոնիա; «Մեկ Առողջություն» գիտաժողով, Սինգապուր; USDA ARS 7th International Biosafety & Biocontainment Hybrid Symposium, ԱՄՆ/:</p> <p><u>Կենդանական ծագման հումքի եւ մթերքի վերամշակման տեխնոլոգիաների բաժին</u></p> <p>2022 թ. գիտահետազոտական աշխատանքների հիմնական նպատակը ֆունկցիոնալ հատկություններով ֆերմենտացված կաթնամթերքների՝ մածուն «ԶՊԶ»-ի եւ մածուն «Վահեի» առաջարկների փորձարարական հիմնավորումն է:</p> <p>Նախկինում բաժնի աշխատակիցների եւ Մարդու եւ կենդանիների առողջության բարելավման միջազգային ընկերակցության աշխատակիցների կողմից ֆինանսավորմամբ ստացվել էին ֆուլթթվի պրոդուցենտ <i>Lactiplantibacillus plantarum</i> (ZPZ) պրոբիոտիկային շտամը եւ արտահայտված ռադիոպրոտեկտիվ հատկությամբ <i>Lacticaseibacillus rhamnosus</i> str. Vahe.am պրոբիոտիկային շտամը:</p> <p>2022 թ-ին «Ստանդարտ դիալոգ» ՍՊԸ-ի հետ կնքվեց պայմանագիր, որը ոչ միայն հնարավորություն տվեց բաժնի գիտաշխատողներին վերաորակավորվել որպես սննդի անվտանգության եւ լաբորտորիաների հավատարմագրման փորձագետների (ISO 22000:2018; ISO 17025, ISO/IEC 17025), այլեւ հաշվետու տարում «Ստանդարտ դիալոգ» ՍՊԸ-ի աշխատակիցների հետ համատեղ իրականացվեցին հետազոտություններ <i>Lactiplantibacillus plantarum</i></p>		
--	--	--	--	--	--

			<p>(ZPZ) եւ <i>Lacticaseibacillus rhamnosus</i> str. Vahe.am շտամների հիմքի վրա նոր ֆունկցիոնալ կաթնամթերքների ստացման ուղղությամբ: Գնահատվեց եւ հաստատվեց նոր ստացված կաթնամթերք-մածուցիչների կենսաանվտանգությունը ըստ համապատասխան ցուցանիշների:</p>		
			<p><u>Բուսական ծագման հումքի եւ մթերքների վերամշակման տեխնոլոգիաների բաժին</u></p> <p>Բաժնի աշխատանքներն իրականացվում են 3 ուղղություններով՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Բարձր սննդային արժեքով հացամթերքների եւ հրուշակեղենի տեխնոլոգիաների մշակում, 2. Կուպաժավորված թեյերի ստացում տեղական բուսատեսակներից, 3. Հատապտղային հիմքով ալկոհոլային խմիչքների տեխնոլոգիաների մշակում: <p>Ենթաթեմաների շրջանակներում կատարվել են մի շարք հետազոտություններ, որոնց արդյունքներն ամփոփվել են 9 տպագիր գիտական հոդվածներում: Հոդվածներից մեկը տպագրվել է <i>Plants</i> ամսագրում՝ որը դասվում է Q1 տեղեկագրերի շարքին: 2022 թ. տարբեր տեղական եւ միջազգային գիտաժողովներին ներկայացվել է 12 հետազոտական աշխատանք: 2022 թ. բաժնի աշխատակազմի աջակցությամբ կատարվել են մի շարք ուսանողական հետազոտական աշխատանքներ, որոնց շնորհիվ ունեցել ենք տարվա լավագույն ուսանող:</p> <p>2022 թ. բաժնում ակտիվ է եղել ճանաչողական այցերի, մասնագիտական դասընթացների կազմակերպումը, արտերկրի հյուրերին նորարարական տեխնոլոգիաներ ներկայացնելը, ինչպես նաեւ կարճաժամկետ դասընթացների կազմակերպումը:</p> <p>Նորարարական տեխնոլոգիաների կիրառման միջոցով ստացված արտադրատեսակները ներկայացվել են 4 ցուցահանդեսների:</p>	9(8/1)	12(11/1)

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

6	<p align="center">ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱ- ԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒ- ԹՅԱՆ</p>	6862.6	3	<p>ՀՀ-ում գյուղատնտեսական առաջնային արտադրական միավորների հիմնախնդիրները եւ լուծման ուղիների առաջադրումը</p> <p>ՀՀ գյուղատնտեսությունը կարելի է բնորոշել բազմակացութեամբ, որտեղ գործում են գլխավորապես գյուղացիական, ընտանեկան տնտեսություններ, ինչպես նաեւ նկատելի են իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող առետրային կազմակերպությունները: Գյուղատնտեսական արտադրության կազմակերպման հատվածում, արտադրատնտեսական ցուցանիշներում ակնհայտորեն գերակայում են գյուղացիական տնտեսությունները, որոնց թիվը հասնում է շուրջ 317 հազարի: Ակնհայտ է, որ գյուղացիական տնտեսությունների գործունեությունը, արտադրական հնարավորությունները եւ եկամուտների ներկա մակարդակը չի նպաստում գյուղատնտեսության դինամիկ զարգացմանը եւ չի ապահովում պարենային ապահովության անհրաժեշտ մակարդակ:</p> <ul style="list-style-type: none"> • Հետազոտական աշխատանքում ուսումնասիրվել է գյուղատնտեսական արտադրական առաջնային միավորների գործունեությունը կանոնակարգող իրավաօրենսդրական, նորմատիվային բազան, որպես արդյունք վեր են հանվել այն բացերը, որոնց լրացումը կնպաստի գյուղացիական տնտեսությունների՝ որպես տնտեսական միավորների, լիարժեքորեն կայանալուն: • Հավաքվել է ՀՀ գյուղատնտեսության զարգացման ծրագրերի իրականացման վերաբերյալ տեղեկատվություն: Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ միջազգային կազմակերպությունների եւ ՀՀ կառավարության համատեղ իրականացված ծրագրերի այն բաղադրիչների արդյունքներն են տեսանելի, որոնք վերաբերում են ջրագծերին, ճանապարհներին եւ նման ուղղվածության միջոցառումներին: Ինչ վերաբերում է կազմակերպական, գյուղացիական տնտեսությունների միջեւ համագործակցության առաջավոր ձեւերի ներդրմանը, հողերի խոշորացման գործընթացի ակտիվացմանը եւ այլն, ապա դրանք չեն ունեցել զարգացման, տարածման միտում, ուստի հետազոտությունը գոհացուցիչ համարել չի կարելի: 	9(7/2)	
---	---	--------	---	---	--------	--

				<ul style="list-style-type: none"> • Ուսումնասիրվել են գյուղացիական տնտեսություններին պետական աջակցության ուղղակի եւ անուղղակի ձեւերի կիրառման միջազգային փորձը, մի շարք բաղադրիչների ներդրման պահանջը եւ կիրառման հնարավորությունները ՀՀ-ում: Իրականացվել է շուրջ 500 գյուղացիական տնտեսությունների շրջանակներում հարցումներ, վեր են հանվել գյուղատնտեսական առաջնային արտադրական միավորների ագրարային (հողային, ջրային, աշխատանքային, ֆինանսական, նյութատեխնիկական) ռեսուրսների օգտագործման վիճակի, գյուղատնտեսական արտադրանքի իրացման, գյուղացիական տնտեսությունների գործունեությունից ստացված եկամուտների աղբյուրների շուրջ ծառայած խնդիրները, որոնց արդյունքների հիման վրա կատարվել են եզրահանգումներ: Ուսումնասիրվել է գյուղացիական տնտեսությունների դասակարգման միջազգային փորձը, հաշվարկվել են ցորենի, կարտոֆիլի եւ խաղողի արտադրությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունների գործունեության արդյունավետության ցուցանիշները եւ կատարվել տնտեսությունների պայմանական դասակարգում: Տնտեսավիճակագրական ռեգրեսիոն եւ կոռելյացիոն վերլուծության մեթոդներով բացահայտվել է գյուղացիական տնտեսությունների դասակարգման ժամանակ կիրառված գործոնների փոխկապակցվածությունը, կարելիությունը ու նշանակալիությունը: 		
7	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐԻ ՍԵԼԵԿՏԻԱՅԻ, ԳԵՆԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ	13539.2	5	<p>Հետազոտությունները իրականացվել են հետեւյալ ուղղություններով.</p> <p>1. Տավարաբուծություն. 2022 թ. շարունակվել է ՀՀ Կոտայքի մարզի «Արզնու տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ի տավարաբուծական տնտեսության 5-ական գլուխ հողշտին, ֆլեկվի եւ եռացեղ (1/4 ԿԳ x 1/4 Զ x 1/2 Հ) գենոտիպի կովերի առաջին եւ չորրորդ լակտացիաների 5-րդ ամսվա օրական կաթի քանակի, արյան պլազմայում ընդհանուր սպիտակուցի, ալբումինի եւ գլոբուլինի քանակների, 305 օրվա կաթի եւ կաթնային մթերատվության որակական ցուցանիշների տվյալների կենսաչափական մշակումները: Որոշվել է նշված գենոտիպերի կովերի օրական կաթի ու արյան պլազմայի ցուցանիշների միջեւ համահարա-</p>	2 (2/0)	1 (0/1)

			<p>բերակցական կապը: Շարունակվել է եռացեղ եւ քառացեղ տավարի մատղաշի ստացումը, աճեցումն ու գնահատումը: Կազմակերպվել է գիտաարտադրական փորձ 15.11.2021 թ.-ից մինչեւ 15.03.2022 թ.-ը՝ 121 օր տեւողությամբ: Ձմեռային արոտն օգտագործելու նպատակով ընտրվել է 10-ական գլուխ տավարի հոլշտին եւ ֆլեկվի ցեղերի 9-ամսական էգ մատղաշ, որն աճեցվել եւ հետազոտվել է նորածնությունից սկսած: Յուրաքանչյուր օր ժամը 12⁰⁰- 17⁰⁰ կենդանիները գտնվել են արոտում եւ լրացուցիչ կեր չեն ստացել: Կատարվել է հետազոտության տվյալների կենսաչափական մշակում, ուսումնասիրվել են կշռային ու գծային աճը բնութագրող մեծությունները: Առաջարկվում է ՀՀ Արմավիրի մարզի ֆերմերներին տավարի հետկաթնային շրջանի մատղաշի եւ տարբեր սեռահասակային խմբերի կենդանիներին արածեցնել ձմեռային արոտներում, որով կբարձրանա արոտների օգտագործման արդյունավետությունը, ինչպես նաեւ կխնայվի կուտակված կերի ծախսը: ՀՀ Արմավիրի մարզի Եղեգնուտ համայնքի «ԳՅՈՒՂ ՖԵՐՄԱ» ՍՊԸ-ի առաջին ծնի կովերի զուգավորման գործընթացը շարունակվել է եռացեղ եւ քառացեղ կենդանիներ ստանալու նպատակով: Շահումյանի «Ագրոսպասարկում» ԱՄ ԲԲԸ-ի տնտեսությունում կովկասյան գորշ x ավստրիական շվից ցեղերի տրամախաչումից ստացված F1 եւ F2 սերունդների մթերատվության գենետիկական շարժը որոշելով գիտականորեն հիմնավորել ենք նախիրների բարելավման ուղիները: «Վամաքս» ՍՊԸ-ի տնտեսության 2022 թ. առաջին եռամսյակում բարձրակիթ կովերի ծնից ընտրվել են 10 գլուխ նորածին էգ հորթեր եւ աճեցվել ինտենսիվ տեխնոլոգիայով: Էգ մատղաշի կենդանի զանգվածը 6 ամսականում կազմել է 184 կգ, միջին օրական քաշաճը՝ 800 գ, հարաբերական քաշաճը՝ 153 տոկոս, աճի գործակիցը՝ 4.6: Հետազոտությունը շարունակվում է մինչեւ 37 ամսականը՝ առաջին լակտացիայի ավարտը:</p> <p>2. Այծաբուծություն</p> <p>2.1 Տեխնոլոգիական հետազոտություններ. 2022 թ. Շիրակի մարզի Կրաշենի այծաբուծական տնտեսությունում այծամայրերի պտղատվությունը կազմել է 166 տոկոս, ստացվել է 40 գլուխ ուլ, որից 55 տոկոսն</p>	
--	--	--	--	--

			<p>արու է: Կենդանիների նորմալ աճի ու զարգացման ստուգման նպատակով կատարվել են ուլերի ստուգիչ կշռումներ. մեկ ամսական (15 գլուխ) էգ ուլերի միջին կենդանի զանգվածը կազմել է 6.1 կգ, իսկ 65-73 օրական հասակի 14 գլուխ էգ ուլերինը՝ 8.6 կգ, իսկ 210 օրականում՝ 14 կգ: Սույն թվի սեպտեմբերին 2022 թ. ծնված էգ ուլերը, որոնց կենդանի քաշը կկազմի առնվազն 30-32 կգ, կզուգավորվեն: Տնտեսությունում ներդրվել է մատղաշին կաթով կերակրման նոր տեխնոլոգիա, որը նպաստում է տնտեսության եկամտաբերության բարձրացմանը: Ստուգիչ կթի միջին օրական տվյալները հետեյալն են. 1-ին լակտացիա՝ 1.04 կգ, 3-րդ լակտացիա՝ 1.9 կգ , 5-րդ լակտացիա՝ 1.2 կգ: Կաթնային մթերատվության ստուգիչ կիթերի արդյունքները նաեւ վկայում են, որ առավել բարձր կաթնատվություն ունեն երրորդ լակտացիայի մաքիները, իսկ համեմատաբար ցածրը՝ առաջին լակտացիայի այծամայրերը: Հարկ է նշել, որ առկա է կաթնային մթերատվության բարձր գենետիկական ներուժ: Այդ ներուժի լիարժեք օգտագործումը սելեկցիայում կիրականացվի համալիր գործոնների միջոցով, որոնցից առավելագույնը՝ կենդանիների կերակրման, հյութալի կերերով ապահովման եւ սելեկցիոն կորիզ ստեղծելու միջոցով: Այծամայրերի համալիր գնահատման միջոցով խոտանվել է 6 գլուխ:</p> <p>2.2 Կենսաքիմիական հետազոտություններ. Հետազոտվել են Կրաշենի այծամայրերի կաթի եւ կաթնաշոռի կենսաքիմիական ցուցանիշները 1-ին, 2-րդ եւ 3-րդ լակտացիաներում: Կաթում ուսումնասիրվել են լակտատոլիտիկ ակտիվությունը, լակտոպերօքսիդազի, հիմնային ֆոսֆատազի ակտիվությունը, միզանյութի մակարդակը: Չափագրվել է կաթի pH-ը: Պարզվել է, որ 3-րդ լակտացիայում, համեմատած 1-ի հետ, գրանցվում է միզանյութի եւ $L^{\cdot}C$ նվազում: Երեք լակտացիաների կաթում նորմալ pH-ի՝ 5.8-6.2 պայմաններում դիտվել են $L^{\cdot}N$ եւ $C^{\cdot}F$ ֆերմենտների կայուն ցուցանիշներ՝ 0.66-0.71 Մ/մլ եւ 6.9-7.03 Մ/լ: Եզրակացվել է, որ տարիքի հետ սննդի սպիտակուցների եւ ածխաջրերի ներծծումն ինտենսիվանում է, որն ուղիղ հարաբերական է կաթնատվության մակարդակին, իսկ $L^{\cdot}N$ եւ</p>	
--	--	--	---	--

			<p>ՀՄ ֆերմենտների ուրվագծված կայուն ցուցանիշները հիմք են ստեղծում շարունակելու հետազոտությունները՝ պաստերացման տարբեր փուլերում ակտիվությունը պարզելու համար:</p> <p>3. Ոչխարաբուծություն. ՀԱԱՀ-ի Քալահովիտի ուսումնափորձնական տնտեսությունում 2022 թ. հունվար ամսվա տվյալներով առկա է 72 գլուխ ոչխար: Ծրագրի շրջանակում խնդիր է դրվել բարձրացնել մթերատվությունն ու որակական կազմը: Այդ նպատակով իրականացվել են հետեւյալ աշխատանքները. աշնանը ողջ գլխաքանակը ստուգվել է կատարվել է խոտանում, կազմվել է համապատասխան կերաբաժին տարբեր սեռահասակային խմբերի համար: Իրականացվել է 2022 թ. նորածին գառների համարակալում, անհատական կշռում եւ հաշվառում: Հունվար – փետրվար ամիսներին ծնվել է 45 գլուխ գառ, որից արու՝ 24, էգ՝ 21: Նորածին գառների միջին կենդանի զանգվածը կազմել է. արուներինը՝ 3.03 կգ, էգերինը՝ 2.91 կգ: Կատարվել է նաեւ ընթացիկ տարվա 2.5 եւ 5 ամսական մատղաշի կշռում՝ արուների կենդանի զանգվածը 2.5 ամսականում կազմել է՝ 19.6 կգ, իսկ էգերինը՝ 16.7 կգ, իսկ 5 ամսականում համապատասխանաբար՝ 30.7 կգ եւ 28.6 կգ: 2022 թ.-ի հունիսի 29-30-ն ընկած ժամանակահատվածում կատարվել է հայկական կիսանրբագեղմ կորիդելի տիպի ոչխարների խուզ: Ստացվել է 187 կգ գեղմային բուրդ, 39 կգ՝ գառան բուրդ: Մեկ ոչխարի միջին բրդատվությունն է՝ 3.11 կգ, իսկ մեկ մաքունը՝ 3.68 կգ: Նոյեմբերյանի տարածաշրջանի Կողբ համայնքի վարչական տարածքում ձեւավորվել է մազեխ ցեղի ոչխարաբուծական ֆերմա՝ 3558 գլուխ շիշակ (96.94 տոկոս) 45-48 կգ կենդանի քաշով եւ 105 գլուխ (3.04 տոկոս) խոյեր՝ 80-90 կգ կենդանի զանգվածով: Հոտը 80 տոկոսով ձեւավորվել է 2021 թ.-ին ծնված էգ մատղաշով: Կոտայքի մարզի Քանաքեռական համայնքի վարչական տարածքում Վազիր Օզմանյանի տնտեսությունում բուծվում է հիմնականում մազեխ ցեղի ոչխար: 2022 թ.-ի սկզբում տնտեսությունում հաշվառվել է 339 գլուխ ոչխար, որի 4.42 տոկոսը՝ արտադրող խոյեր, 79.64 տոկոսը՝ մաքիներ եւ 15.93 տոկոսը՝ շիշակներ: Նորածին արու գառների կենդանի</p>		
--	--	--	---	--	--

				<p>զանգվածը կազմում է 3.3 -3.5 կգ, էգերինը՝ 2.8-3.2 կգ: Նորածին գառների կենդանի զանգվածը համեմատաբար ցածր է, որը հավանաբար պայմանավորված է հղիության երկրորդ շրջանում մաքիների ոչ բավարար կերակրմամբ: Մսուրային շրջանում արածեցնելուց զատ մեկ գլխի հաշվով կենդանիներին տրվում է 250 գր. խաղողի կորիզ: Նման կերակրումը բավարար չէ հղի մաքիների սաղմի նորմալ աճի եւ զարգացման համար: Կազմվել եւ ֆերմերին տրամադրվել է համապատասխան կերաբաժին: Հոտի վերարտադրության համար ընտրվել են 7-8 ամսական էգ գառներ, գնվել են 5 գլուխ 1.5 տարեկան խոյիկներ, իսկ ընթացիկ տարվա արու գառները 6-8 ամսականում իրացվել են որպես միս՝ 43-45 կգ կենդանի զանգվածով: Կատարվել է 55 գլուխ մաքիների եւ 5 գլուխ խոյի խոտանում: Մաքիների ընտրությունը կատարվում է հիմնականում կաթնային մթերատվության բարձրացման եւ մսային հատկությունների բարելավման ուղղությամբ, որոնց համար անհրաժեշտ է իրականացնել համալիր արտադրատնտեսական, բուժման եւ տեխնոլոգիական աշխատանքներ:</p>		
8	<p>ԱՆԱՍԱՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ</p>	21198.6	8.75	<p>Հետազոտությունները կատարվել են հետեւյալ ուղղություններով. Ձկների ինվազիոն հիվանդությունների տարածվածությունը երկրի ձկնաբուծարաններում, դրանց առաջացման պատճառներն եւ պայքարը:</p> <p>Հայաստանի լճակային տնտեսություններում եւ բնական ջրամբարներում բուծվող ձկների շրջանում մեծ տարածում ունեն ինվազիոն (մակաբուծային) հիվանդությունները, որոնք արգելակում են ճյուղի զարգացումը:</p> <p>Վերջին տարիներին մեր երկիր մուտք են գործել նոր հարուցիչներ, որոնց հարուցած հիվանդություններին անասնաբուժական ծառայության մասնագետները դեռեւս ծանոթ չեն:</p> <p>Ելնելով վերոհիշյալից, հետազոտական կենտրոնի մակաբուծաբանական լաբորատորիայում իրականացվել է ձկների լրիվ մակաբուծաբանական հետազոտություն ըստ Ի.Ե. Բիխովսկայա-Պավլովսկայայի:</p> <p>Հետազոտությունների համար նյութ են հանդիսացել ձկնաբուծարաններում աճեցվող եւ բնական պայմաններում ապրող ձկները:</p>	23 (15/8)	

			<p>Համեմատելով մեր ուսումնասիրության արդյունքները նախորդ տարիների տվյալների հետ, կարելի է եզրակացնել, որ նկատվում է Հայաստանի Հանրապետության բնական ջրավազաններում բնակվող ձկների՝ հատկապես նախկինում ամենաշատ մակաբույծներ ունեցող լճաձաձանի, արտաքին մակաբույծների ֆաունայի շարունակական աղքատացում, որը հավանաբար պայմանավորված է անխնա ջրօգտագործման հետեւանքով ձկների էկոհամակարգերի փոփոխմամբ եւ տարբեր ծագման նյութերով ջրավազանների ախտոտմամբ: Ի տարբերություն նախորդ տարիների տվյալների, զգալիորեն նվազել է նաեւ ձկների վարակվածությունը ներքին մակաբույծներով: Հավանաբար դա պայմանավորված է ջրի ջերմաստիճանի բարձրացմամբ:</p> <p>Հետազոտության գիտական նորույթը ՀՀ հյուսիսային տարածաշրջանների՝ հատկապես Դեբեդ գետի ձկների մակաբույծների ուսումնասիրությունն է: Հետազոտվել է 2 տեսակի ձուկ՝ Քուռի բեղլուն եւ Քուռի կողակը: Հետազոտված ձկների գերիշխող մակաբույծը <i>Rhabdochona fortunatowi</i> աղիքային նեմատոդն է, որը մինչ այդ Հայաստանում հայտնի էր միայն Սեւանա լճի ավազանի ջրակալների ձկների շրջանում:</p> <p>Այսպիսով, ձկների մեջ, Սեւանա լճից բացի՝ կրկին նկարագրվել են աղիքային նեմատոդներ, որը վկայում է մակաբույծների արեալների ընդլայնման եւ դրանց կենսաբանական ցիկլերում նոր տերերի ընդգրկման մասին:</p> <p>Առաջին անգամ, մեկ մարզի օրինակով (Արագածոտնի մարզ), կատարվել է խոզերի բրուցելյոզով վարակվածության համաճարակային վերլուծություն:</p> <p>Ակներեւ է նաեւ այն փաստը, որ մարդկանց վարակումը խոզերի բրուցելյոզի հարուցիչով պայմանավորված է ոչ միայն հիվանդ կենդանիների հետ շփմամբ, այլ նաեւ դրանցից ստացված կենդանական ծագման մսամթերքի եւ ենթամթերքի օգտագործմամբ:</p> <p>Հաշվետու ժամանակահատվածում բրուցելակիր կենդանիներ հայտնաբերելու նպատակով կատարվել է արյունառություն Արագածոտնի մարզի՝ մասնավոր տնտեսավարողներին պատկանող խոզա-</p>		
--	--	--	---	--	--

			<p>բուժական տնտեսությունների սեռահասուն խոզերից: Բրուցելյոզի նկատմամբ նմուշառված արյան 50 շիճուկում հակամարմինների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար օգտագործվել են Ռոզ-Բենգալ թեսթը եւ ագլյուտինացման ռեակցիան: Որպես վերը նշված մեթոդների կիրառման արդյունք՝ գրանցվել է 10 դրական եւ 20 կասկածելի ռեակցիա: Բրուցելյոզի շիճուկաբանական տիպը որոշելու (ELISA) նպատակով դրական եւ կասկածվող արյան շիճուկները համարակալվել եւ տեղադրվել են սառցախցիկում:</p> <p>Կովերի կրծի գաղտնի բորբոքումների բուժումը յոդ պարունակող պատրաստուկներով:</p> <p>Հետազոտվել են հիմնականում կովկասյան գորշ եւ սիմենտալ ցեղատեսակների 170 կովեր, որոնցից 65-ը ախտորոշվել են գաղտնի մաստիտ: Հիվանդ կենդանիների նկատմամբ իրականացվել են բուժիչ միջոցառումներ՝ կապույտ յոդի օգտագործմամբ: Իրականացվել է նաեւ գաղտնի մաստիտի բուժում կապույտ յոդի լուծույթի եւ այլ դեղանյութերի օգտագործմամբ, ապա տրվել է այդ դեղանյութերի ազդեցության արդյունավետության համեմատություն:</p> <p>Փորձերի արդյունքները վկայում են, որ կապույտ յոդի ներքին եւ միաժամանակ ներպտկային ներմուծումը արագացնում է գաղտնի մաստիտի բուժումը 2-3 օրով:</p> <p>Կատարվել է նաեւ կովերի կրծի պտուկների մաշկից վերցված լվացուկների մանրէաբանական հետազոտություն, որպես արդյունք՝ ամիլյոդինով մշակելու շնորհիվ փորձնական խմբի կենդանիների մանրէների գաղութների քանակը զգալիորեն նվազել է: Որպես արդյունք՝ նվազում է կաթնագեղձ պտկային խողովակով ախտածին մանրէների ներթափանցումը: Այս հանգամանքը նպաստում է մաստիտների առաջացման կանխարգելմանը եւ կաթի բակտերիալ ախտոտման նվազմանը:</p> <p>Հետազոտությունների արդյունքները վկայում են այն մասին, որ կապույտ յոդը մաստիտների կանխարգելման արդյունավետ միջոց է:</p> <p>Արմավիրի մարզի ձկնաբուժական տնտեսություններից վաճառքի հանված ձկների անասնաբուժասանիտարական փորձաքննության</p>	
--	--	--	--	--

			<p>գնահատական</p> <p>Արմավիրի մարզի Ջրառատ գյուղի տարածքում արհեստական ձկնաբուծական տնտեսությունների ջրավազաններից կատարվել է ձկների նմուշառում:</p> <p>Բերված նմուշները ենթարկվել են փորձաքննության եւ ստացված արդյունքների հիման վրա տրվել են նշված մարզի արհեստական ձկնաբուծական տնտեսություններում բուծվող ձկների ձկնամսի սանիտարական գնահատականը:</p> <p>Ըստ զգայաբանական եւ լաբորատոր հետազոտությունների, ձկների նմուշները եղել են թարմ եւ կասկածելի թարմության: Ձկների որոշ նմուշեր ունեցել են 6.8-ից բարձր pH:</p> <p>Լաբորատոր հետազոտությամբ իրականացվել է ծծմբաջրածնի եւ ռեդուկտազայի որոշման փորձերը, որը բնորոշում է ձկան սանիտարական որակը:</p> <p>Փորձաքննության արդյունքում պարզվել է, որ բերված բոլոր նմուշները իրենց որակական հատկանիշներով՝ ըստ ծծմբաջրածնի եւ ռեդուկտազի առկայության համապատասխանել են որակյալ ձկնամսի ստանդարտով նախատեսված որակի ցուցանիշներին, բացառություն են կազմել ձկան 28 նմուշներ, որոնց մկաններից պատրաստված մզվածքում հայտանբերվել է ինչպես ռեդուկտազ ֆերմենտներ, այնպես էլ ծծմբաջրածին եւ ըստ որակի համապատասխանել են կասկածելի թարմության ձկնամսի որակական հատկանիշներին, 6 նմուշ օգտագործման նպատակով պիտանի չի եղել:</p> <p>2022 թ. ընթացքում տպագրվել են 23 հոդվածներ, 5 մեթոդական ցուցումներ, իսկ 9 հոդվածներ հանձնված են տպագրության՝ որոնցից 1-ը իրանական Scopus “Veterinary Research Forum” ժողովածուում:</p> <p>Իրականացվում է գիտական եւ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման 21T-4A007 ծածկագրով «Հավերի էյմերիոզի տարածվածությունը Հայաստանի ֆերմերային եւ անհատական տնտեսություններում» թեման:</p> <p>Հայտ է ներկայացվել Երիտասարդ գիտնականների գիտական դրամաշնորհների ANSEF մրցութային ծրագրին:</p>		
--	--	--	--	--	--

ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Գրադարանի ֆոնդն առ 01.01.2023 թ. կազմում է 546.887 միավոր գրականություն, որից ուսումնական՝ 193.794, գիտական՝ 304.688, գեղարվեստական՝ 48.405:

2022 թ. ստացված գրականությունը կազմել է 1966 միավոր (435 անուն): Գրադարանի ընթերցողների թիվը 2022 թ. կազմել է 1114, որից 490-ը՝ համալսարանի աշխատակիցներ: KOHA գրադարանային ծրագրով գրանցված ընթերցողների թիվը 2022 թ. կազմել է 3167, իսկ 2021 թ.՝ 3070:

Գրադարանի սպասարկման կետերում հաճախումների թիվը 2022 թ. 7656 է:

Գրադարանի library.anau.am կայքէջի ընդհանուր այցելությունները 2022 թ. 93.179 է, իսկ 2021 թ.՝ 140.490:

KOHA էլեկտրոնային գրացուցակի կայքէջի ընդհանուր այցելությունների թիվը 2022 թ. կազմել է 29.842, իսկ 2021 թ.՝ 31.914:

Սպասարկված գրականության քանակը 2022 թ. կազմել է 965 միավոր, սպասարկման բաժնում՝ 795, ընթերցասրահներում՝ 170 միավոր: 2021 թ. Համապատասխանաբար կազմել է 2321, 1354 եւ 967 միավոր:

2022-թ. նշանակվել են դասիչներ գիտական 90 հոդվածի համար:

KOHA էլեկտրոնային գրացուցակի համալրման նպատակով 2022 թ. մուտքագրվել են 4.560 միավոր (1.647 անուն) գրականության տվյալներ:

2022-թ. իրականացվել է էլեկտրոնային գրացուցակի 24.960 նկարագրությունների եւ 54.855 միավորների խմբագրում:

Ընդհանուր հաշվով 2007-2022-թթ. մուտքագրվել է 457.465 միավոր (93.775 անուն) գրականություն:

Գրադարանում շարունակվում է գրքերի թվայնացման գործընթացը. 2022 թ. թվայնացվել է 15 անուն գիրք (3.000 էջ):

Առ 01.01.2023 թ. գրադարանի կայքէջում եւ Koha էլեկտրոնային գրացուցակում առկա են 1088 գրքի, ինչպես նաեւ 597 մեթոդական ցուցումի եւ 279 ատենախոսության սեղմագրի էլեկտրոնային տարբերակ:

Գրադարանի Koha էլեկտրոնային գրացուցակում ներառված համալսարանի գիտաշխատողների գիտական հոդվածների նկարագրությունները եւ էլեկտրոնային տարբերակների քանակը առ 01.01. 2023 թ. կազմել է 2047, իսկ առ 01.01. 2022 թ.՝ 1962: 2022թ. Koha էլեկտրոնային գրացուցակում ավելացվել է 85 գիտական հոդվածի նկարագրություն եւ էլեկտրոնային տարբերակ:

Գրապահոցներում կատարվել է ֆոնդի տեղաշարժ, ստուգվել եւ վերադասավորվել է ամբողջ գրքային ֆոնդը՝ 215.720 միավոր:

2022-թ. շարունակել են վերականգնվել ծառայողական ընթերցողական գրացուցակի մաշված քարտերը. մոտ 12.800 քարտ է գրվել եւ

տեղադրվել քարտարաններում:

ՀԱԱՀ գրադարանը 2022 թ. գրադարանային գրքամատյաններից, այբբենական եւ կարգային գրացուցակներից, KOHA էլեկտրոնային գրացուցակի բազայից հանվել է 7.332 միավոր գրականություն:

Գրադարանի աշխատակազմը կազմակերպել է մեկ տասնակից ավելի տարաբնույթ միջոցառումներ, որոնց մասնակցել են բուհի եւ մասնաճյուղերի աշխատակիցներ եւ ուսանողներ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ


2022 թ.-ին կնքվել կամ վերահաստատվել են համագործակցության 6 հուշագրեր եւ պայմանագրեր հետեւյալ հաստատությունների հետ.

- Վալգա մարզի մասնագիտական ուսուցման կենտրոն,
- Ռուսաստանի պետական ագրարային համալսարան-Կ. Տիմիրյազևի անվան պետական գյուղատնտեսական ակադեմիա,
- Ազգային հետազոտական համալսարան (ՌԴ),
- Բորոդորիկովայի անվան Կալմիկի պետական համալսարան,
- Տրուբիլնի անվան Կուբանի պետական համալսարան,
- Վրաստանի գյուղատնտեսական համալսարան:

ԷՐԱՉՄՈՒՍ+ ՀԳ1

2022 թ. Էրազմուս+-ի շրջանակում ՀԱԱՀ-ն ունի կնքված 39 պայմանագրեր, եւ ընդհանուր առմամբ ՀԱԱՀ-ն այս ծրագրով համագործակցում է 38 համալսարանների հետ: Սկսած 2015 թ.-ից, ամեն տարի Էրազմուս+-ի պայմանագրերի ու համագործակցող համալսարանների քանակն ավելանում է: Ընդ որում, այս տարի Միջազգային կապերի դեպարտամենտը համագործակցություն է սկսել բոլորովին նոր համալսարանների հետ, որոնց հետ մինչեւ այդ համագործակցություն չի եղել: Դրանք են դեյլ Մարկ Պոլիտեխնիկական, Կրակովի գյուղատնտեսական, Պորտոյի, Բուրզունդիա-Ֆրանս-Կոնտե համալսարանները:

2022 թ. ՀԱԱՀ-ն իրականացրեց աննախադեպ արտագնա շարժունություն, ապահովելով 79 աշխատակիցների վերապատրաստումներ եւ դասախոսություններ երոպական 28 համալսարաններում: Նման մեծ քանակի պատճառները 2-ն են. 2020-21 թթ. COVID-19 համավարակի պատճառով չիրականացված եւ կուտակված շարժունությունները, ինչպես նաեւ 2020 թ.-ին ՀԱԱՀ-ի կողմից շարժունության նոր պայմանագրերի քանակի ավելացումը:



ՀԱԱՀ-ում նկատվում է անգլերենին տիրապետող ուսանողների եւ աշխատակիցների թվի ցավալի նվազում: Այսպես, 2021-22 թթ.-ի աշնանը հայտարարված, ՀԱԱՀ բոլոր ֆակուլտետների մասնագիտություններին առնչվող բազմաթիվ մրցութային տեղեր մնացին թափուր (Էստոնիայի կենսագիտական, Ալմերիայի, Գայզենհայմի, Պանթեոնի հասարակական եւ քաղաքական գիտությունների, Արեւմտյան Ատիկայի, Մինհոյի, Վալենսիայի պոլիտեխնիկական, Վալյադոլիդի, Վրոցլավի բնապահպանության եւ կենսագիտության համալսարաններում): Կարծում ենք, որ անգլերենի անվճար դասընթացների առավել ինտենսիվ իրականացումը կարող է դրական փոփոխության պատճառ հանդիսանալ:

2022 թ.-ի աշնանը եւ ծմռանը հայտարարված մրցույթների արդյունքներով երեք նոր ուսանողներ ստացել են հնարավորություն գալիք կիսամյակում մասնակցելու շարժունությանը, որոնցից 1 ուսանող՝ Էստոնիայի կենսագիտական համալսարանում, 1-ը՝ Պիրեուսի համալսարանում (Հունաստան) եւ 1-ը՝ Շչեցինի համալսարանում (Լեհաստան):

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

Էրազմուս+ ՀԳ2

Աջակցություն անգլերենով դասավանդման նորարարական մեթոդաբանությանը, մոդեցումներին եւ գործիքներին՝ կրթության արդյունավետությունը, կայունությունը եւ միջազգայնացումը բարելավելու նպատակով (SMARTI) ծրագրի շրջանակում 2022 թ.-ի հունվարի 17-21-ը ընկած ժամանակահատվածում Պորտուգալիայի Պորտո քաղաքում տեղի ունեցավ վերապատրաստում ECTS/Թյունինգ շրջանակ խորագրով: Վերապատրաստման հիմնական ուղղություններն էին՝ 1. «Ինչպես գրել պրեզենտացիա», «Ինչպես գրել ուղղորդող նամակ եւ մոտիվացիոն նամակ», 2. «Ինչպես մշակել նոր կրթական ծրագրեր ECTS համակարգի հիման վրա եւ ինչպես ապահովել դրանց որակը», 3. «Ինչպես գրել մոդուլներ, կրթական վերջնարդյունքներ եւ ինչպես գնահատել ուսանողներին» եւ այլն: 2022 թ.-ի մարտ եւ ապրիլ ամիսներին SMARTI ծրագրի շրջանակում տեղի ունեցան ներբուհական վերապատրաստումներ՝ Պորտուգալիայի Կաթոլիկ համալսարանում անցկացրած վերապատրաստման շաբաթվա գիտելիքների հիման վրա: Վերապատրաստմանը մասնակցեցին ՀԱԱՀ-ի պրոֆեսորադասախոսական եւ վարչական անձնակազմի ներկայացուցիչները: Դասընթացները վարեց կիրառական մեխանիկայի եւ գրաֆիկայի ամբիոնի պրոֆեսոր, ՈԳԱ կենտրոնի կառավարման բաժնի վարիչ, SMARTI ծրագրի փորձագետ Արա Ամիրյանը:

2022 թ.-ի սեպտեմբերի 27-28-ը ՀՀ ՊԿԱ-ում հիբրիդային եղանակով տեղի ունեցավ ծրագրի կառավարման խորհրդի հերթական հանդիպումն ու վերապատրաստումը: SMARTI ծրագրի համակարգող՝ Դրեզդենի տեխնոլոգիական համալսարանից Ջերարդ Քալլենն անդրադարձավ ծրագրի ճանապարհային քարտեզի փոփոխմանը, Լիվերպուլի Ջոն Մուրես համալսարանում տեղի ունենալիք «Անգլերենը որպես դասավանդման միջոց ԱԴՄ» տասը մոդուլների վերապատրաստմանը:

Հայաստանում եւ Ղրղզստանում աշխարհափոփոխության փոխնյութի հանրային ոլորտում միջառարկայական հետբուհական ծրագրերի մշակում եւ հետազոտական ցանցերի ամրապնդում (GeoTAK) նախագծի հիմնական նպատակն է զարգացնել հետբուհական բարձրագույն կրթության ծրագրերը

Երկրատեղեկատվական տեխնոլոգիաների (GIT) ոլորտում եւ ամրապնդել հետազոտական եւ նորարարական կապերը Հայաստանի Հանրապետության եւ Ղրղզստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների, արդյունաբերական եւ վարչարարական համակարգերի միջեւ:

Փետրվարի 10-12 կայացավ մեկնարկային հեռահար հանդիպումը, որի ընթացքում յուրաքանչյուր համալսարան ներկայացրեց գործող հետազոտական ծրագրերը եւ դրանց վերանայման ու հավատարմագրման հետագա ուղիները:

Ծրագրի շրջանակում իրականացվել է ռիսկերի գնահատում, Կադաստրի կոմիտեում տեղի ունեցած հանդիպման շնորհիվ ստեղծվել է ազգային հետազոտական հարթակ, իրականացվել է երկրատեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հետազոտությունների եւ մշակումների կարիքների գնահատում: ՀԱԱՀ-ի թիմը վերապատրաստվել է «Երկրատեղեկատվական համակարգերի (ArcGIS) կիրառությամբ Որոշումների կայացմանն աջակցող համակարգի օգտագործման», Strategies for Development «Դասավանդման եւ գնահատման հիմունքներ» թեմայով «Հմտությունների եւ գիտելիքի զարգացում» պիլոտային ծրագրի եւ «One soil» լրացուցիչ մասնագիտական ծրագրի շրջանակում կազմակերպված «Թվային հարթակներ գյուղատնտեսությունում» դասընթացների շրջանակներում: Մեկնարկել է հայտագրված սարքերի եւ սարքավորումների գնումների իրականացման գործընթացը եւ ձեռք է բերվել սարքերից մեկը՝ դրոնը:

2022թ. հոկտեմբերին GeoTAK ծրագրի շրջանակում լիազումար եւ համընթաց նիստերի ընթացքում քննարկվեցին ազգային գեոդեզիական ենթակառուցվածքներին, գեոդեզիական կոորդինատների համակարգերին, անօդաչու թռչող սարքերի թռիչքի պլանավորմանն ու տվյալների կորզմանը, երկրատեղեկատվական տեխնոլոգիաների դասավանդման ուսումնական պլանների մշակմանն առնչվող եւ հարակից հարցեր: Եռօրյա վերապատրաստմանը հետեւեց աշխատաժողովը ՀՀ Կադաստրի կոմիտեում, որտեղ ներկայացվեցին GeoTAK-ի հետազոտության արդյունքները եւ քննարկվեցին Հայաստանում ԵՏ տեխնոլոգիաների ոլորտում առկա կարիքները, ներկա եւ ապագա հետազոտություններն ու նորարարությունները:

Կանաչ գործարքին միտված ակվակուլտուրայի եւ ձկնային տնտեսության կրթության զարգացում Հայաստանում եւ Ուկրաինայում. կրթությունից դեպի էկոլոգիա (AFISHE)

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը որպես գլխավոր համակարգող առաջին անգամ կիրականացնի Եւրամիության կողմից ֆինանսավորվող Էրազմուս+ կարողությունների զարգացմանն ուղղված ծրագիր: Ծրագրի հիմնական նպատակն է նվազեցնել ակվակուլտուրայի եւ ձկնային տնտեսությունների բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ ակվակուլտուրայի եւ ձկնային տնտեսությունների մագիստրոսական ծրագրերի ստեղծմամբ եւ զարգացմամբ Հայաստանում եւ Ուկրաինայում, որոնք համարժեք կլինեն Եւրոպական նմանատիպ առաջատար ծրագրերին, կարձագանքեն ազգային եւ տարածաշրջանային կարիքներին ու կամրապնդեն համալսարան-ձեռնարկություն-հետազոտություն համագործակցությունը («կրթությունից մինչեւ էկոլոգիա» հայեցակարգ):

Visegrad+ . Փափուկ հմտությունների զարգացումը որպես զբաղվածության հիմնական գործիք. v4 փորձի փոխանցումը

2022 թ. մարտին կայացավ ծրագրի առաջին երկօրյա հանդիպումը ՀԱԱՀ-ում, որի ժամանակ քննարկվեցին ծրագրի իրականացման քայլերն ու արդյունքները, այլանավորվեց հեռավար եղանակով վերապատրաստումների ժամանակացույցը: Մայիս-հունիս ամիսներին ՀԱԱՀ 5 աշխատակիցներ հեռավար եղանակով վերապատրաստվեցին ընտրված 5 մոդուլների ուղղությամբ, որից հետո նրանք անցան մոդուլների մշակմանը: 2022 թ. դեկտեմբերին բոլոր մոդուլները պատրաստ են:

2022 թ.-ին սեպտեմբերի 30-ին Միջազգային կապերի դեպարտամենտը հյուրընկալեց Visegrad+ հիմնադրամի ծրագրի համակարգողներ Աննա Ադամչուկին եւ Եւա Մերենիկսին: Նրանց այցի նպատակը ՀԱԱՀ-ի կողմից համակարգվող «Փափուկ հմտությունների զարգացումը որպես զբաղվածության հիմնական գործիք. V4 փորձի փոխանցումը» ծրագրի մշտադիտարկումն էր: Ծրագրի գլխավոր համակարգող Գ. Համբարձումյանը հյուրերին ներկայացրեց ծրագրի նպատակները, իրականացված քայլերը, ծրագրի շրջանակում տպագրված տեղեկատվական նյութերը, ֆինանսական ծախսերը եւ հետագա անելիքները:

ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐ ԵՒ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

2022 թ.-ին ՀԱԱՀ 15 աշխատակիցներ մասնակցել են հետևյալ գիտաժողովներին եւ համաժողովներին՝

- «Համալսարանների դերը ազգային նորարարական էկոհամակարգի ստեղծման գործում» խորագրով բուհերի ռեկտորների միջազգային համաժողով, Ղրղզստան
- ՀԱԱՀ հիմնադրամի կողմից իրականացվող «Մեթանի ձեւավորումը սուլֆիդ եւ նիտրատ պարունակող մնացորդային միջավայրերում» (AZ93573), ԱՄՆ
- Բիո Դատա ծրագրի փակման համաժողով, Նորվեգիա
- «Քաղաքային կապույտ-կանաչ ենթակառուցվածքներ եվրոպայի Արեւելքում եւ Արեւմուտքում» ծրագիր, Վրաստանի Հանրապետություն
- Եվրոպական ԳԿԻՄ երկրների տարեկան համաժողով, Լյուքսեմբուրգ
- Միջազգային «Modelling and optimization of complex systems-MOCS-2022» գիտաժողով, Ռուսաստանի Դաշնություն

Վերապատրաստումներ: 2022 թ.-ին այլ (բացի Էրազմուս+-ից) ծրագրերով վերապատրաստման մեկնել են ՀԱԱՀ 10 աշխատակիցներ

- Ռազմավարական զարգացման գործակալություն ՀԿ-ի եւ Բեռնի Կիրառական գիտությունների համալսարանի գյուղատնտեսության, անտառային եւ պարենային գիտությունների դպրոցի (HAFL) կողմից կազմակերպվող ուսուցողական փորձի փոխանակում, Շվեյցարիա – 2 աշխատակից
- Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) կողմից իրականացվող «Հայաստանում տեղական խաղողի տեսակների պահպանման շրջանակային պայմանների ստեղծում» ծրագրի երկրորդ փուլի շրջանակում, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն – 1 աշխատակից
- Վիշեգրայան քառյակի փորձի յուրացումը գիտելիքի եւ տեխնոլոգիաների փոխադրման բնագավառում, Չեխիա – 1 աշխատակից

- SMARTI ծրագիր – 2 աշխատակից
- GeoTak ծրագիր – 4 աշխատակից

ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

2022 թ. ՀԱԱՀ աշխատակիցներն ու ուսանողները հնարավորություն են ունեցել մասնակցել վերապատրաստումների, դասընթացների եւ միջազգային համաժողովների ու հանդիպումների:

Ծրագիր/պայմանագիր	Գործուղումներ	
	Քանակ	Աղյուսակ 3
	ուսանողներ	անձնակազմ
Էրազմուս+ ՀԳ1	5	79
Erasmus+ ՀԳ2		6
DAAD		3
Այլ		33
Ընդամենը	5	121

Միջազգային շարժունության եւ համագործակցության լավագույն օրինակ է այն, որ ՀԱԱՀ «Ճշգրիտ գյուղատնտեսություն» մասնագիտական կրթական ծրագրի իրականացման գործընթացում ներգրաված են Հունական «Արատոս գրուպ» կազմակերպության ներկայացուցիչները, Արևմտյան Մակեդոնիայի համալսարանի դասախոսական անձնակազմը: Հույն դասախոսներն են իրակացրել «Ճշգրիտ գյուղատնտեսություն» մասնագիտական կրթական ծրագրի երկրորդ կիսամյակի հետևյալ առարկաները՝ «Արհեստական բանականություն», «Նորարարական տեխնոլոգիաները ագրարային ոլորտում» «Ինֆորմատիկա/Տեխնատիկա» «Իրերի համացանցը (IoT) ճշգրիտ գյուղատնտեսությունում»:

Նաեւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Գյուղարդյունաբերական քաղաքականության բաժին աջակցությամբ ՀԱԱՀ-ի և Ռուսաստանի պետական ագրարային համալսարան-Կ. Տիմիրյազևի անվան պետական գյուղատնտեսական ակադեմիայի համագործակցության շրջանակում 2021-2022 ուստարում իրականացվեց ուսանողների առցանց փոխանակում: Կ. Տիմիրյազևի անվան պետական գյուղատնտեսական ակադեմիայի 4-րդ կուրսի 15 ուսանողները ընտրել էին «գինու տուրիզմ» և «գինու մարքեթինգ ու բիզնես» դասընթացները: Ուսանողները մեծ հետաքրքրությամբ ծանոթացան գինու տարբեր շուկաներում զբոսաշրջիկի վարքագծային առաձևահատկություններին, գործարանից վաճառքի ճիշտ կազմակերպմանը, գործարանում և խաղողի այգում շրջայցերի կազմակերպմանը:

Իսկ ՀԱԱՀ ուսանողներն ընտրել էին «Գինու որակի զգայաբանական գնահատման և ակոհոլային խմիչքների արտադրության որակի կարգավորման շրջանակը» ու «Խաղողի և գինու քիմիա» դասընթացները ու համապատասխանաբար մասնակցել են Կ. Տիմիրյազևի անվան պետական գյուղատնտեսական ակադե-

միայն դասախոսների կողմից անցկացվող դասընթացներին: Դասընթացները հաջողությամբ ավարտած ուսանողների գնահատականները փոխճանաչվեցին երկու բուհերի կողմից:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱԱՀ-ՈՒՄ

2022 թ.-ին տեղի են ունեցել արտերկրի հետևյալ պաշտոնական պատվիրակությունների այցերը՝

- Ավստրիական զարգացման գործակալության նորանշանակ պաշտոնյաների այցը փետրվարին,
- ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի պատվիրակության այցը մարտին,
- EU-GAIA ծրագրի շրջանակում ԵՄ դեսպան Անդրեա Վիկտորինի այցերը ապրիլին եւ մայիսին,
- Նիդերլանդների դեսպանի այցը ապրիլին,
- Հայ-իրանական ագրոտեխնոլոգիական առաջին խորհրդաժողովի մասնակիցների այցը ԻԻՀ դեսպանի ղեկավարությամբ հունիսին,
- ՌԴ Պետդումայի պատվիրակության այցը փոխխոսնակի գլխավորությամբ հունիսին,
- Արգենտինացի պտղաբույծ-փորձագետների այցը Արգենտինայի դեսպան Մարիանո Վերգարայի ղեկավարությամբ օգոստոսին,
- Սթարմուս փառատոնի ղեկավար Գարիկ Իսրայելյանի այցը եւ հուլիսի ստորագրում հուլիսին, հրավիրյալ դասախոսություններ փառատոնի շրջանակում սեպտեմբերին,
- Ֆրեզնոյի պատվո հյուպատոսի այցը սեպտեմբերին,
- ԱՄՆ գյուղդեպարտամենտի պատվիրակության այցը ԳԴ հայաստանյան ծրագրի 30-ամյակի միջոցառումների շրջանակում հոկտեմբերին,
- Ռումինիայի գյուղատնտեսության եւ քաղաքաշինության նախարարության պատվիրակության այցը պետական քարտուղարի գլխավորությամբ նոյեմբերին,
- Շվեդիայի միջազգային զարգացման համագործակցության (Sida)՝ Եվրոպայի եւ Լատինական Ամերիկայի դեպարտամենտի պատվիրակության այցը դեկտեմբերին:

ՄԿԴ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՄԿԴ-ն նախորդ տարիների նման առավելագույնս տարածել է միջազգային փոխանակման եւ դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ առկա տեղեկատվությունը: Աշխատանքների թափանցիկության եւ տեղեկատվության տարածման արդյունավետության բարձրացման նպատակով հնարավոր բոլոր տեղեկությունները ՄԿԴ-ի կողմից տարածվում են սոց. ցանցերով եւ ՀԱԱՀ պաշտոնական կայքով:

2021-22 թթ. ՄԿԴ-ի հաջողության արդյունքներից է European Solidarity Corps-ի կողմից ՀԱԱՀ-ին 8 տարի ժամկետով շնորհված Որակի պիտակը (Quality Label), որի շնորհիվ ՀԱԱՀ-ն հնարավորություն ունի ընդունելու կամավորներ: Ընդ որում, նման պիտակ ՀԱԱՀ բուհերից միայն երկուսն ունեն:

2022 թ. փետրվարին ՄԿԴ-ն ակտիվորեն մասնակցեց Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերի մրցույթին, պատրաստելով համապատասխան փաստաթղթերը գործընկեր համալսարանների հետ: Միաժամանակ ՀԱԱՀ-ն, որպես գործընկեր, մասնակցել է 5 Էրազմուս+ կարողություններին միտված ծրագրերին, իսկ որպես համակարգող նախապատրաստել է 2 ծրագրեր, որից մեկը՝ ՄԿԴ-ի կողմից: 2022 թ.-ին ՀԱԱՀ-ն ունեցավ 2 Էրազմուս+ ՀԳ2 ծրագրեր, որոնցից մեկը՝ ՀԱԱՀ համակարգմամբ:

ՄԿԴ-ն մասնակցել է նաև ԵՄ-ի կողմից կազմակերպված Էրազմուս+ տեղեկատվական վեբինարներին, ինչպես նաև Էրազմուս+ հայաստանյան գրասենյակի կողմից կազմակերպված տեղեկատվական հանդիպումներին: ՄԿԴ-ն կազմակերպեց եւ հյուրընկալեց Էրազմուս+ ազգային գրասենյակի կողմից կազմակերպված երկու հանդիպումներ ՀԱԱՀ-ում: Էրազմուս+ միջազգային տեղեկատվական օրերի շրջանակում հոկտեմբեր ամսին ՄԿԴ-ն կազմակերպել էր 2-օրյա հանդիպումներ ՀԱԱՀ 1-ին կուրսեցիների հետ, իսկ 3-րդ օրը առցանց տեղադրվեց ՄԿԴ-ի պատրաստած «ՀԱԱՀ Էրազմուսյան լավագույն փորձը» նյութը:

Դեպարտամենտի պաշտոնական ֆեյսբուքյան էջում եւ ՀԱԱՀ կայքում տեղադրվել են միջազգային ծրագրերի վերաբերյալ տարաբնույթ հայտարարություններ. Էրազմուս+ ՀԳ1 ծրագրի մրցույթներ, Էրազմուս+ ծրագրի մասնակցիների լավագույն փորձ, Էրազմուս+ ՀԳ2 ծրագրեր, տարբեր մրցույթներ, կրթաթոշակներ, տեսանյութեր եւ այլն: 2022 թ.-ին ՄԿԴ-ն տեղադրել է շուրջ 141 նյութ, որոնցից 45-ը եղել են Էրազմուս+ ՀԳ1-ի մրցույթների հայտարարություններ, 8-ը՝ նյութեր Էրազմուս+ ՀԳ2 ծրագրերի ընթացիկ գործունեության մասին, 36-ը՝ շարժունության մասնակիցների հոդվածներ, իսկ մնացածը՝ այլ բնույթի տեղեկություններ:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Ուսանողական խորհուրդը կազմակերպել է տարաբնույթ միջոցառումներ, ապահովել անդամների եւ ուսանողների մասնակցությունը մի շարք կոնֆերանսների ու հանդիպումների:

Սեպտեմբերին եւ դեկտեմբերին ՀԱԱՀ առաջին կուրսեցիներին դիմավորելու եւ ուսանողական կյանքին ծանոթացնելու պատասխանատու աշխատանքը իրականացրեց ուխտորհուրդը:

Խորհրդի անդամները համալսարանի ուսանողների եւ Ա. Քոչինյանի անվ. գյուղատնտեսական քոլեջի սաների հետ պարբերաբար այցեր են կազմակերպում Ջարթոնք հանգստյան տուն, ՀԱԱՀ ՈՒՓՏ-ներ՝ ծանոթանալու տնտեսությունների գործունեությանը, ենթակառուցներին, գինեգործարանին ու կաթնամթերքի ուսումնական արտադրամասին:

Շատ կարեւոր են ոլորտային մասնագետների հետ հանդիպումները. կազմակերպվել են հանդիպումներ ՀԱԱՀ Որակի գնահատման եւ ապահովման կոնտրոնի տնօրեն Լիլիթ Ջաքարյանի եւ կենտրոնի փորձագետների հետ, Հայ կրթական հիմնարկության ներկայացուցիչների հետ, Դավիթ Մեջլումյանի հետ «Առաջնորդություն» թեմայով:

Ապրիլի 28-ին ՀԱԱՀ ՈւԻՍ կազմը մասնակցեց Կրթություն եւ Կարիերա EXPO 2022 մասնագիտացված կրթական ցուցահանդեսին, Բերքի տոնին:

Կազմակերպվել են ուսումնաճանաչողական այցեր «ՄԱՊ» ՓԲԸ եւ Իջեւանի գինու եւ կոնյակի գործարան: Ուսանողները ծանոթացան ընդհանուր արտադրական տարածքին, գինու, կոնյակի պատրաստման եւ պահպանման պատմությանը, համտեսեցին 75 տարեկան «ՄԱԿԱՐ» կոնյակ եւ գինիների որոշ տեսակներ:

Ուսանողները անմասն չեն մնում նաեւ մշակութային կյանքից. «Թանգարանների գիշերվա» շրջանակում ուսանողներն այցելեցին Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարան, կազմակերպվեց այց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, որտեղ էլ այցելեցին Գանձարան եւ ծանոթացան բազմաթիվ արժեքավոր իրերի պատմությանը:

Մայիսի 27-28-ին ՀԱԱՀ Ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ կազմակերպված Ուսանողական գիտական շաբաթը եզրափակող միջբուհական գիտաժողովն անցկացվեց ՀԱԱՀ Աղավնաձորի «Զարթոնք» հանգստյան տանը: Գիտաժողովին մասնակցում էին ինչպես Ագրարայինի ֆակուլտետային գիտաժողովների լավագույն զեկույցներով հանդես եկած ուսանողները, այնպես էլ ուսանողներ այլ բուհերից:

Կազմակերպվել է Կանանց միջազգային տոնին նվիրված միջոցառում, Եղիշե Զարենցի 125-ամյակին նվիրված միջոցառում, կինոդիտումներ:

Շատ հետաքրքիր էին ավելի քան 10 մարզական եւ ինտելեկտուալ միջոցառումները, որոնց, բացի ուսանողներից, մասնակցում էին նաեւ քոլեջի ու վարժարանի սաներ եւ դասախոսներ: Հիշատակման արժանի հաջողություններ են նաեւ ՀՀ ֆուտզալի 2022-2023 Բարձրագույն խմբի առաջնությունում եւ Vcup վոլեյբոլի առաջնությունում հանդես եկող Թիմ Ագրո ֆուտզալի եւ վոլեյբոլի թիմերի գրանցած լուրջ հաջողությունները: Երկու թիմերում էլ հանդես են գալիս Խորհրդի անդամներ:

Սեպտեմբերի 13-ին, ելնելով սահմանային լարված իրավիճակից, սկսվեց մոբիլիզացիա թիկունքում՝ առաջնագիծ հասցնելու համար ՀԱԱՀ-ում օգնություն հավաքելու գործընթաց: Սեպտեմբերի 18-ից սկսած ՀԱԱՀ ուսանողներն ու կամավորները զինձառայողների համար սկսեցին պատրաստել քողարկիչ ցանցեր:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Համաձայն ՀԱԱՀ-ի հաստատված հաստիքացուցակի, 2023 թ. հունվարի 1-ի դրությամբ համալսարանի եւ նրա մասնաճյուղերի առկա փաստացի հիմնական աշխատակիցների թիվն է 1097, որից՝ 78-ը՝ (համատեղողներ եւ 101-ը՝ ժամավճարով:

Աղյուսակ 4

1.	Վանաձորի մասնաճյուղ, որից՝	65	
1.1	վարչատնտեսական կազմ		24
1.2	դասախոսական կազմ		41
2.	Սիսիանի մասնաճյուղ, որից՝	46	
2.1	վարչատնտեսական կազմ		20
2.2	դասախոսական կազմ		26
3.	Հ.Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի եւ մելիորացիայի գիտական կենտրոն մասնաճյուղ, որից՝	47	
3.1	վարչատնտեսական կազմ		21

3.2	գիտական աշխատողներ		26
4.	Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոն մասնաճյուղ, որից՝	15	
4.1	վարչատնտեսական կազմ		8
4.2	գիտական աշխատողներ		7
5.	Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն մասնաճյուղ, որից՝	29	
5.1	վարչատնտեսական կազմ		8
5.2	գիտական աշխատողներ		21
6.	Շիրակի ակադեմիկոս Մ.Թումանյանի անվան գյուղատնտեսական քոլեջ մասնաճյուղ, որից՝	39	
6.1	վարչատնտեսական կազմ		15
6.2	դասախոսական կազմ		21
6.3	Ժամավճարային աշխատողներ		3

Համալսարանի հիմնական փաստացի աշխատակիցների թիվն է՝ 747:

Բացի այդ, տարվա ընթացքում սեզոնային աշխատանքներ կատարելու համար աշխատանքային պայմանագրեր են կնքվել 14 անձի հետ:

Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրեր են կնքվել 387 անձի հետ:

Ստորեւ բերված աղյուսակում խմբավորված են փաստացի աշխատակիցների թվաքանակն՝ ըստ գործունեության ոլորտների:

Աղյուսակ 5

Հայաստանի ազգային ագրարային համալսարանում հիմնական փաստացի աշխատողների թիվը՝	
Վարչական	29, որից 3-ը՝ հասարակական հիմունքներով
Ընդամենը պրոֆեսորադասախոսական անձնակազմ, որից՝	425
Հիմնական	284
Ներքին համատեղությամբ	62
Արտաքին համատեղությամբ	58
Ժամավճարային դասախոսներ	22
Դեկանատների, ամբիոնների եւ լաբորատորիաների ուսումնաօժանդակ անձնակազմ	94
Աշխատակազմ	31
Քոլեջ	10
Հեռակա ուսուցման դեպարտամենտ	10
Ագրոբիզնես դեպարտամենտ	5
Ագրոբիզնես դեպարտամենտի ժամավճարային դասախոսներ	9
Ընդամենը՝ գիտահետազոտական ինստիտուտներ (հետազոտական կենտրոններ)	61
	25 ներքին

	5 արտաքին
Հանրակրթական ծրագրերի ուսուցման վարժարան	30
Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն	21
Ուսումնական գործընթացի կառավարման վարչություն	13
Գիտական աշխատանքների համակարգման բաժին	4
Գիտական գրադարան	20
Տնտեսական վարչություն (այդ թվում՝ մասնաշենքեր, «Արաբկիր» ուս. հանրակացարան, պահակային ծառայություն, կաթսայատուն)	128
Միջազգային կապերի դեպարտամենտ	8, որից 1-ը՝ ներքին համատ.
Որակի գնահատման եւ ապահովման կենտրոն	6
Լեզվի ուսուցման կենտրոն (հասարակական հիմունքներով)	1
Ագրոտեխնոլոգիական ինկուբատոր	1
Ճշգրիտ գյուղատնտեսության կենտրոն	1
«Բալահովիտ» ՈՒՓՏ	18
«Ոսկեհատ» ՈՒՓՏ	11
Աղավնաձորի «Զարթոնք» հանգստյան տուն	14
«Ակունք» օրգանական գյուղատնտեսության ուսումնափորձնական կենտրոն	2

2022 թ. ընթացքում ընդունվել են աշխատանքի՝ 352 մարդ, ազատվել են՝ 411 մարդ:

2022 թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ 33 կին գտնվում է երեխայի խնամքի արձակուրդում:

Աշխատանքի են ընդունվել 37 երիտասարդ դասախոսներ:

25 աշխատակիցներ համալսարանի ներքին կարգապահական կանոնները խախտելու համար ենթարկվել են վարչական տույժի (ստացել են նկատողություն):

5 անձինք պարգևատրվել են ՀԱԱՀ 90-ամյակի Ոսկե հուշամեդալով, 1 անձ՝ մեդալով, 55 աշխատող՝ շնորհակալագրով:

Աղյուսակ 6

Աշխատողների թվաքանակը, աշխատատեղերի շարժը 2022 թ.

Աշխատողների թվաքանակը տարվա սկզբի դրությամբ	1097
Ընդունվել են աշխատանքի հաշվետու տարում	352
Ազատվել են աշխատողներ հաշվետու տարում, որից՝	411
• աշխատողի նախաձեռնությամբ	212
• այլ պատճառներով	196
• կրճատված	3
Կրճատվածներից վերականգնված	0
Աշխատողների թիվը տարվա վերջի դրությամբ,	1097
որից՝	182
• մինչեւ 35 տարեկան	458

<ul style="list-style-type: none"> • 35-55 տարեկան • 55-ից բարձր 	457
Պրոֆեսորադասախոսական անձնակազմ, որից՝	425
<ul style="list-style-type: none"> • դրսի համատեղությամբ • ներսի համատեղությամբ • գիտական աստիճան չունեցող 	78
	91
	158
Մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատողներ (վարչատնտեսական)	15
Մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատողներ (ուսումնական)	16

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ

2022 թ. ընթացքում գնումների բաժինն իրականացրել է 241 գնման մրցույթ՝ նախորդ տարվա 160-ի փոխարեն, որից 123-ը ԷԱՃ (էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով) ընթացակարգով, որի միջոցով այս պահի դրությամբ կնքվել է 140 պայմանագիր (գումարը կազմում է 87262090.76 ՀՀ դրամ), 91-ը՝ ԳՀ (գնանշման հարցում) ընթացակարգով, որի արդյունքում 2022 թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ կնքվել է 62 պայմանագիր (գումարը կազմում է 136155227.20 ՀՀ դրամ) եւ 27-ը մեկ անձ ընթացակարգով, հարդյունս որի կնքվել է 23 պայմանագիր (գումարը կազմում է 11506216 ՀՀ դրամ): Չկայացած ընթացակարգերը 89-ն են, որից 45-ը ԷԱՃ (էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով) ընթացակարգի եւ 39-ը ԳՀ (գնանշման հարցում) ընթացակարգի եւ 5-ը ՄԱ ընթացակարգի շրջանակներում: Իրականացվել է նաեւ 2 գնման մրցույթ, որոնց համար ֆինանսական միջոցներ պետք է հատկացվեն 2023թ.-ին: Դրանք ԳՀ (գնանշման հարցում) ընթացակարգով են, հարդյունս որոնց 2022 թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ կնքվել է 1 պայմանագիր: Մյուսը գտնվում է ամփոփման փուլում:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

ՏՏ կենտրոնի կարելորագույն առաքելություններից է համալսարանի կրթական տեխնոլոգիաների մշտական զարգացմանն ուղղված գործունեության իրականացումը: Այդ նպատակով հաշվետու տարում իրականացվել են հետեւյալ աշխատանքները.

MOODLE ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՌԻՍՈՒՑՄԱՆ ՀԱՐԹԱԿ

Հաշվետու տարում համակարգի ակտիվ օգտատերերի քանակը կազմում է 6419 (նախորդ տարի՝ 4011 օգտատեր): 2022-2023 ուստարվա համար համակարգում գրանցվել են քոլեջի, բակալավրիատի եւ մագիստրատուրայի կրթական ծրագրերով սովորող 1-ին կուրսի, ինչպես նաեւ զինվորական ծառայությունից վերադարձած կամ քոլեջից համալսարանի 2-րդ կուրս տեղափոխված բոլոր ուսանողները, իսկ մագիստրատուրայի 1-ին կուրսեցիների հաշիվները վերախմբագրվել են մագիստրանտների:

Պարբերաբար թարմացվել է Moodle էլեկտրոնային ուսուցման հարթակի հավելվածը, «Տեղեկատվության անվտանգություն տեղեկատվական գրագիտություն»

դասընթացի մեջ պարտադիր ներառվել է նաև Moodle հարթակի լրացուցիչ գործիքակազմի դասընթացը: Նշված դասընթացին, որն ունի շարունակական բնույթ, մասնակցել են դեկանատների եւ ամբիոնների ավելի քան 200 աշխատակիցներ:

Հաշվետու տարում էլեկտրոնային ուսուցման բնագավառում իրականացվել են հետեւյալ աշխատանքները՝

- Համագործակցելով ամբիոնների հետ՝ առանձնացվել է այն առարկաների ցանկը, որոնք առկա չեն հարթակում, դրանք ստեղծվել են, կցվել համապատասխան դասախոսներին:
- Նոր ընդունված, վերականգնված ուսանողներին տրամադրվել են մուտքաբառեր, գաղտնաբառեր:
- Պարբերաբար ստուգվել է դասախոսների՝ հարթակում աշխատելու պարբերականությունն ու որակը:
- Թարմացվել են եղած ուղեցույցները, պատրաստվել է ուղեցույց բջջային հավելվածից օգտվելու համար:
- Ստեղծվել, լրացվել են քոլեջում դասավանդվող առարկաները:
- Դասախոսներին մատուցվել է խորհրդատվություն՝ հարցաշարերի, ֆորումների կազմման, օգտագործման համար, ինչպես նաև նրանց աշխատանքի ընթացքում ծագող բոլոր հարցերին տրվել են պատասխաններ:
- Կազմակերպվել է Moodle հարթակի ուսուցում-դասընթաց բոլոր ֆակուլտետների առաջին կուրսերի ուսանողների համար:

Աղյուսակ 7

Moodle հարթակում կատարված աշխատանքներ

Հ/Հ	Աշխատանքի բնույթ	Քանակ
1	Համակարգում առկա ակտիվ օգտատերերի թիվը	6419 օգտատեր
2	Ուսանողների ավելացրած եւ փոփոխված հաշիվներ	1250 հաշիվ
3	Ամբողջական բովանդակությամբ դասընթաց	մոտ 85 տոկոս
4	Ստեղծած նոր առարկաների հարթակ	380 հատ
5	Փոփոխված եւ հեռացված հարթակներ	320 հատ
6	Ուսուցում եւ վերապատրաստում	350 մարդ

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԱՏՈՒԳՄԱՆ ԹԵՍՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

SS կենտրոնի SS գիտելիքի բաժինը իրականացնում է նաև հետեւյալ գործառնությունները.

- Թեստավորման ծրագրի շահագործում, կառավարում, զարգացում
- Թեստերի կազմման կարգի եւ ձեւի մշակման ուղեցույցների պատրաստում
- Թեստերի հավաքում, ստուգում եւ մուտքագրման աշխատանքների իրականացում
- Թեստային քննությունների անցկացում, վերջնական տեղեկատվության ուղարկում համապատասխան դեկանատներ

Հաշվետու տարում իրականացվել են հետեւյալ աշխատանքները՝

- Առաջին եւ երկրորդ կուրսերի առարկաների թեստերից փոփոխվել են համապատասխանաբար 1-ին կուրսերի համար՝ 37 քննական թեստ, իսկ 2-րդ կուրսերի համար՝ 77 քննական թեստ:

- Երրորդ կուրսերի 1-ին կիսամյակի 96 թեստերից մուտքագրվել է 91-ը, իսկ 2-րդ կիսամյակի 87 թեստերից մուտքագրվել է 55-ը: Հարկ է նշել, որ տրամադրված թեստերը մուտքագրվել են 100 տոկոսով:

Անցկացվել են.

- հեռակա բակալավրի համար՝ 1237 քննություն,
- առկա բակալավրի համար՝ 1366 քննություն,
- առկա մագիստրատուրայի համար՝ 21 քննություն:

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՒ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Հաշվի առնելով ժամանակի պահանջները՝ ՏՏ կենտրոնի ՏՏ գիտելիքի բաժինը մշակել է ՌԶԳ ՀԿ-ի հետ համատեղ արդյունավետությամբ իրականացրել է «Տեղեկատվության անվտանգության եւ տեղեկատվական գրագիտության բարելավում» 4-օրյա դասընթացը, որին մասնակցել է ՀԱԱՀ-ի եւ մասնաճյուղերի 46 աշխատակից:

2022 թ.-ի հոկտեմբերից սկսած ՀԱԱՀ-ում սկսվել են վերապատրաստումներ տեղեկատվության անվտանգության եւ տեղեկատվական գրագիտության թեմայով, որոնց մինչեւ տարեվերջ մասնակցել է մոտ 200 աշխատակից:

ՏՏ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՏՏ համակարգերի կառավարման բաժնի հիմնական գործունեությունը միտված է համալսարանի կայքէջերի ստեղծմանը եւ սպասարկմանը, ինչպես նաեւ նոր համակարգերի տեղադրմանը:

2022 թ.-ի ընթացքում պարբերաբար թարմացվել է ՀԱԱՀ-ի պաշտոնական կայքը՝ ստեղծվել են 29 նոր էջ, հավաքագրվել, խմբագրվել եւ տեղադրվել են կայքի գրեթե բոլոր բաժինների հիմնական նյութերը:

anau.am կայքում տեղադրվել են ավելի քան 580 նոր հայտարարություն եւ նորություն: Կայքում արտացոլվել են նաեւ 2022 թ.-ի նոյեմբերին համալսարանում իրականացված կառուցվածքային փոփոխությունները: 2022 թ.-ի դեկտեմբերին anau.am կայքը թարմացվել է տեղադրվել է այդ պահին վերջին՝ WordPress 6.1.1 տարբերակը: Թարմացումից հետո թեստավորվել են կայքի էջերը եւ կայքում տեղադրված մոդուլները (պլագինները)՝ 40:

Ստորեւ ներկայացված է 2022 թ. ընթացքում ՀԱԱՀ-ի կայքի էջերի վիճակագրությունը ըստ Google Analytics-ի:

Աղյուսակ 8

Կայք	Այցելուների քանակը	Դիտված էջեր
anau.am	148,500	703,145
persons.anau.am	8814	26360
memorial.anau.am	1085	4653
library.anau.am	93506	459415
elearning.anau.am	50484	920853

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵԲՍԻ ՀԱՄԱԿԱՐԳ

2022 թ.-ին շարունակվել են ebus համակարգի կատարելագործման շուրջ ուսումնական գործընթացի կառավարման վարչության, դեկանատների աշխատակիցների եւ ամբիոնների աշխատակազմերի հետ քննարկումները եւ վերապատրաստման գործընթացները: Դեկանատների եւ ամբիոնների աշխատակիցների համար անցկացվել են վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել են ավելի քան 200 աշխատակիցներ:

Զուգահեռ բաժնի աշխատակիցները մշակում եւ ներդնում են բուհի կառավարման գործընթացին առնչվող նոր մոդուլներ, ինչպես նաեւ արդիականացվում են գործող մոդուլները (մոտ 10 մոդուլ), մասնավորապես տեղեկագրերի պատրաստման եւ լրացման մոդուլը: Բացի փաստացի դասընթացներից, կատարվել են բազմաթիվ խորհրդատվություններ ամբիոնների աշխատակիցների համար, ինչպես նաեւ իրականացվել են տարբեր ենթամոդուլների ցուցադրում եւ ներդրում, այդ թվում նաեւ հեռավար կապի միջոցներով:

Մուտքագրվել են ավտոմատ եղանակով դիպլոմների հավելվածների (միջուկների) գեներացման համար անհրաժեշտ տվյալները, վերահսկվել են բոլոր մուտքագրված մասնագիտական կրթական ծրագրերը (դիպլոմի հավելվածին առնչվող հատվածները):

Բակալավրի եւ մագիստրոսական կրթական աստիճանների ներդրման շարունակության ապահովման համար համակարգում մուտքագրվել է ավելի քան 100 նոր առարկա, որոնք օգտագործվել են ավելի քան 10 ուսումնական պլանների մուտքագրման համար:

2022 թ. Ebus համակարգում նոր մոդուլների ներդրման շնորհիվ ստացվել են հետեւյալ ցուցանիշները.

- ավտոմատացված եղանակով ստացվել են ուսանողների հաշվառման տվյալները՝ բացակայության արդյունքները, ամսական ու կիսամյակային բացականների քանակները, տոկոսային բացականները եւ այլն,
- իրականացվել են վարձավճարների հետ կապված թարմացման աշխատանքներ,
- 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի համար ավտոմատացված եղանակով ստեղծվել են բոլոր տեղեկագրերը (մոտ 1000 հատ),
- 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի համար ՈւԳԱ բաժնի աշխատակիցները ավտոմատացված եղանակով ստեղծել են բոլոր տեղեկագրերը (մոտ 800 հատ). տեղեկագրերը հասանելի են թե՛ դեկանատներում, թե՛ ամբիոններում, թե՛ Ուսումնական վարչությունում, թե՛ լիազորված մյուս ստորաբաժանումներում,
- ավտոմատացված եղանակով ստացվել են կրեդիտային (12 կրեդիտ) պարտք ունեցող ուսանողների ցանկը,
- ավտոմատացված եղանակով ստեղծվել են մոտ 80 անհատական տեղեկագրեր,
- անհատական տեղեկագրերը ձեւափոխվել եւ հարմարեցվել են նոր պահանջներին (տարանջատվել են անհատական տեղեկագրերը, տեղեկագրերի տրամադրման պատճառը, առարկայական տարբերությամբ, կրեդիտային պարտքով, տրամադրվող տեղեկագրի հերթական համարը եւ այլն,

- ավտոմատացված եղանակով կատարվել է ուսանողների շրջափոխման գործընթացը,
- ավտոմատացված եղանակով ստացվել են դիպլոմի հավելվածները (միջուկները) առկա ուսուցման բակալավրի (214 հատ) եւ մագիստրոսական (առկա ուսուցման 107 եւ հեռակա ուսուցման 10 հատ) կրթական աստիճանների համար,
- մշակվել է դասացուցակի մուտքագրման մոդուլը (ըստ կուրսերի), որի շնորհիվ փոքրաթիվ ուսանող ունեցող կուրսերի համար ավելի դյուրին է դարձել դասացուցակի մուտքագրումը,
- թարմացվել է ուսանողների հաշվառման մոդուլը (հաշվառման էջում երեւում է նաեւ ներկայության տոկոսը՝ հաշվի առնելով հարգելի բացակասները),
- մշակվել եւ ներդրվել է ուսանողների պայմանական փոխադրման գործընթացը (կիրառվել է բակալավրի կրթական աստիճանի հեռակա ուսուցման համար),
- մշակվել է հոսք-խումբ-ենթախումբ կառուցվածքի դինամիկ տարբերակ,
- մշակվել է տեղեկագրերի պատրաստման եւ լրացման նոր մոդուլը, որի միջոցով ավտոմատացված եղանակով ստացվել են նաեւ փորձուսուցումների տեղեկագրերը,
- թարմացվել է տեղեկագրերի pdf ձեւաչափով արտահանման համակարգը, այն համապատասխանեցվել է բուհի նոր փոփոխություններին,
- մշակվել է հեռակա ուսուցման համար բացակասների լրացման մոդուլ:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

SS համակարգերի սպասարկման բաժնի գործունեությունն ուղղված է համալսարանում համակարգչային սարքավորումների տեխնիկական սպասարկմանն ու ծրագրային ապահովմանը, տեղեկատվական ցանցի անվտանգ շահագործման ապահովմանը, համալսարանական համակարգչային լսարանների տեխնիկական, ծրագրային համակարգերի անխափան աշխատանքին եւ շահագործմանը, համալսարանում առկա սարքերի անխափան աշխատանքին, համակարգչային տեխնիկայի վերանորոգմանը, ստորաբաժանումներում համացանցային կապի ապահովմանը եւ այլն:

Համալսարանում տեղադրված Active Directory համակարգին է միացվել համալսարանի 448 համակարգիչ:

Կարգաբերվել են համալսարանի ցանցային սարքավորումները, որի շնորհիվ ներքին ցանցը տարանջատվել է ըստ մասնաշենքերի եւ ստորաբաժանումների: Նոր ցանցին է միացված 1-ին մասնաշենքն ամբողջությամբ, իսկ 2-րդ մասնաշենքը՝ մասամբ:

Աղյուսակ 9

2022 թ. բաժնի կատարած հիմնական աշխատանքները

Հ/Հ	Աշխատանքի բնույթը	Քանակը
1	Համակարգիչների ֆորմատավորում եւ պրոֆիլակտիկա	246
2	Ցանցին միացված համակարգիչներ	33
3	Ցանցային բաժանարարների եւ Wi-Fi երթուղիչների մոնիտաժում	9

4	Տպիչների վերանորոգում	24
5	Քարթրիջների լիցքավորում եւ վերանորոգում	247
6	Հեռախոսահամարների տեղափոխում եւ նոր համարների տրամադրում	59

ԳՈՎԱԶԴ ԵՒ ԴԻՉԱՅՆ

ՀԱԱՀ լաբորատորիաներում, Բալահովտի ՈւՓՏ-ի, Վանաձորի եւ Շիրակի մասնաճյուղերում կազմակերպվել են նկարահանման աշխատանքներ «Նոր ենթակառուցյուներ Ագրարային համալսարանում» մաս 4-ի եւ 5-ի համար:

«Starmus Festival VI» միջոցառման համար համալսարանի տաղավարի պատերին պաստառների տեղադրում, տեխնիկայի մոնտաժում եւ ամբողջ ընթացքում առաջացած տեխնիկական սպասարկում:

2022թ. ընթացքում պարբերաբար Facebook սոցիալական ցանցում կատարվել են ՀԱԱՀ-ի առկա եւ հեռակա կրթաձեռնով ընդունելության, դասընթացների գովազդային արշավներ, ինչպես նաեւ առաջխաղացվել են բուհի նոր ենթակառուցյունների մասին հոլովակները: Ստեղծվել եւ տեղադրվել են 21 գովազդային արշավ:


2022 թ. դեկտեմբերի 31-ին Facebook սոցիալական էջի հավանումների քանակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 17.866-ից ավելացել է 26 տոկոսով եւ դարձել 22.610 հավանում՝ ավելի քան 23.000 հետետորդներով:

Facebook սոցիալական հարթակում տեղադրված հոլովակները ստացել են 38000 դիտում օրգանական ճանապարհով: Facebook եւ Instagram էջերի այցելությունների գրաֆիկը հետեւյալն է.

Page and profile visits

Facebook Page visits

51,123 ↑ 24.9%



Instagram profile visits

3,371 ↑ 35.9%




Facebook եւ Instagram էջերի բովանդակության դիտումների գրաֆիկը հետեւյալն է.

Reach

Facebook Page reach

558,013 ↑ 50.5%



Instagram reach

21,380 ↑ 1.7K%



SS կենտրոնը 2022 թ. ընթացքում ստեղծել է բուկլետների, ցուցանակների, բաներների, տեղեկատվական թռուցիկների, գովազդային նկարների, պաստառների թվային եւ տպագրական տարբերակներ:

ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ

Կարգաբերվել է սերվերների պահուստավորման համակարգը եւ տեղադրվել է առանձին սերվեր, որը ֆիզիկապես չի գտնվում նույն մասնաշենքում հիմնական սերվերների հետ միասին: Այստեղ են պահուստավորվում սերվերների տվյալները: Կատարվել է առկա համակարգերի վերաբաշխում ըստ սերվերների, առավել օպտիմալ աշխատանքի կազմակերպման համար, որը նպաստել է ունեցած ռեսուրսների ավելի ճիշտ օգտագործմանը:

ՀԱԱՀ SS կենտրոնը կատարում է ավելի քան 25 համակարգերի անվտանգության ապահովում, կառավարում, տեխնիկական սպասարկում, թարմացում եւ մշտադիտարկում: